

4557

281 64

p-45 un

1881

21010

2001

21/12/42
S-4



№

ՄԱՅՆԱԴԱՐԱՆ

198

БИБЛИОТЕКА
Никиты Осиповича
ЭМИНА. 85.

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

2012
4-45 m
ur

142

Կ Ե Ն Ս Ը Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՍՐԲԱԶԱՆ ԹԱԴԵՈՍ ԱՐՔ
ԵԳԻՍՏՈՂՈՍԻ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆ ԲԱՐԵՑԻ-
ՇԱՏԱԿ ԱՌԱԶՆՈՐԴԻ ԱՄԵՆԱՓՐԵԶԵԱՆ
ՍՐԲՈՅ ՎԱՆԱՑ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒ

Ք Ե Ր Թ Ո Ւ Ը Ծ

Ի ՄԱՀ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

Աշխատեցաւ 'ե 1863. ռի Տեռն

Ի Գ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵ Թ. ՏԵՐ ՅՈՎՀԱՆԵԱՆՑ
Նոր Զոչոյեցոյ, Արեւոտրե յեշեւ «Էյ Վանոց, Կահոցեւոյ այժմ»:

ԵՒ

ԱՐԴԵԱՄԲԳ

ԳԵՐԱԳԱՏԻ ԳԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՈՒ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
ԲԵՂ ՆՈՐ ԶՈՇՈՅԵՅՈՅ ԲԵՂԵՆՆԱՅ ԱՅԺՄ Ե ԲԵՂԻՆ

2012

Տ Գ Ա Գ Ր Ե Ա Լ

Ի Ն Ո Ր Զ Ո Ւ Գ Ղ Ը

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի Ա Մ Ե Ն Ա Փ Ր Ե Չ Ե Ա Ն Ս. Վ Ա Ն Ա Ց

1881.

Ի ՀԱՅՐԱԳԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԻՆՈՐԳԵՅ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

ԵՒ

ՅԱՌԱԶՆՈՐԿՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ՎԱՆԱՑ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ

Բ. ՍՐԲԱԶԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ

ԲԱՐԵԽՆԱՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍԻ:



5223
38

1881

ԳՒԵՐԱԳԱՏԻ ԳԱՐՈՆ ՅՈՎՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵԱՆ

Հայրենասէր Սատարիչ ծախուց տպագրութեան կենսա-
գրութեանս:

Ի Բաթաւիա:

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԳԱՐՈՆ՝

Ղանաչել մեծարու արանց զբարոյս և զկեն-
ցաղալարութիւն պարտք են կենցաղօգուտ, յայս սակս յըս-
կզբանէ հետէ ցայսր սովորութիւն կալաւ բարենպատակ
'ի մարդկային աղինս զկենաց նոցին զընթացս և զարժանա-
յիշատակ գործառնութեանց զվէպս 'ի գիր դրոշմել և
հրապարակել 'ի գիտութիւն ամենեցուն և յօրինակ նախան-
ձաւորութեան զկնեաց, քանզի այնպիսեացն ճշգրտապա-
տում նկարագիր առաւել հզօրապէս ներգործէ 'ի բարս և
'ի միտս: Ի սոյն նպատակ թերևս Ձերդ եղբօրորդի և Հայ-
րենակից մեր այժմ՝ Հանդուցեալ Հեղինակ սորին Պարոն Յա-
րութիւն Թ. Տէր Յովհաննեսանց էառ 'ի գրել զՍրբազան
Տէր Թադէոս Արք եպիսկոպոս բարեյիշատակ Առաջնորդին
հանդուցելոյ 'ի Տէր զԱհեսագրութիւնս, որ զամս երկոտա-
սան բազմաբեղուն և գովանի արդեամբք վարեաց զԱռաջ-
նորդութիւն 'ի վասն Ամենափրկչեան և բազմայրով բա-
րեաց պատճառ եկաց 'ի մասին թէ վանքական՝ և թէ ժո-
ղովազական գործոց: Արդ եթէ նորա հոգացեալ զի մի ե-
րախտաւոր Առաջնորդին գործք արժանայիշատակք 'ի լիթս
մտաւորութեան մատնեսցին և անհետացին չհասեալ 'ի
յիշատակութիւն յիտնորդաց՝ փութացաւ արձանացուցա-
նել 'ի գիր զընթացս նորա և զկենցաղալարութիւն՝ գովե-
լի է անշուշտ 'ի մասինս: Այլ և Ձերդ Գերապատուութիւն

առաւել ևս դովութեանցն կցորդ այնու՝ զի բարեհաճեցայք
 չթողուլ այնմ ամուլ և անպտուղ՝ ՚ի փոշիս անկեանց թա-
 ղեալ և յաչաց ծածկեալ, այլ տպագրութիւն սորին քերթ-
 ուածովն հանդերձ՝ որ ՚ի մահ յիշեալ Սրբազան Առաջնորդին
 հեղինակելոյ ևս ՚ի մանէ՝ առաջի դնել աչաց և ՚ի լոյս
 յայտնութեան, զի երևեսցին յաշխարհի բարեգործութեանն
 նորին ընթացք և յօրինակ առցին: Ասան այսր փութամք
 ՚ի դիմաց Հայրենակցացս ուղղել առ Ձեզ զսեռն շնորհակա-
 լիս, զի հաճեցայք երախտաւորին այնմիկ զվեհ արգասիս
 այսպէս հռչակել և յանջինջ յիշատակս դրողմել: Ապա-
 քէն և յիշատակ Ձեր բարեգով հռչակեսցին յամենայն ժամ
 և ամենայն ուրեք, և ՚ի սիրտս զգայունս գրեսցին անմոռա-
 նալի:

Պէճալով վասն Ձեր բարեմասնութիւնս բաղումն՝

Մնամք

Ի Զուղա . 1881 . }
 Ի 27 Մայիս:

Գերապատուութեան Ձերում՝
 Բարեհաճք ՚ի սրտէ միշտ,

- Տէր Ռէվէն Դոմէան
- Տէր Մեդրոլէ Կ. Դոմէան
- Աւերի Կ. Մ. Զօհրուպեան
- Մ. Պ. Մ. Զօրմէեան
- Յակ. Կ. Յաջիւղեան

Հոգաբարձութիւն Տպարանի Ամենափրկչեան
 արքայ վանաց:

Կ Ե Ն Ս Ե Գ Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն

ՍՐՐԱԶԱՆ ԹԱԴԵՈՍ ԱՐՔ ԵԳԻՍՏՈԳՈՍԻ
ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆ, ԸՌԱԶՆՈՐԴԻ ԶՈՒԳԱՅ
ԸՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՈՒՐԲ ԳԱՆԱՑՆ:

Թ. Եթէ 'ի տիեզերս մեծ արանօք յիշատակին անուանք
հոյակապ և երևելի արանց, որք դարաւոր ամօք նախ քան
գարդի ժամանակ, զմեհկանացու կենացն իւրեանց զընթացս
կատարեալ՝ իջին 'ի գերեզման, անշուշտ դործք նոցա ոմն
այսպէս և ոմն այնպէս Աստուած գիտութեան կամ իմաստու-
թեան լուսով փայլեալ, և բարեյիշատակ արգանօքն յա-
րատեալ անմահացան, և յաւետ' ևս 'ի նմին կան և մեան
յանմահ յիշատակութեան:

Ք. Սրբազան Թադէոս Արք Եպիսկոպոս Բէկնազարեան,
որ զվարչութիւն տարժանելի Առաջնորդութեանն Հայոց
Պարսկաստանի և Հնդկաստանի ցկէտ օրհասին իւրոյ զամս
Երկոտասան կորովահանձար զգօնութեամբ կատարեաց բա-
րեպէս, եղև մի յայնցանէ՝ որք զանմահութեանն անուն 'ի-
վերայ երկրի Թողին, զկնի 'ի մահկանացու կենացն աստի ե-
րանելոյ:

Սնաւ սա 'ի սկզբան իննև տասներորդ դարուն, զաւակ
զուով աշխատասէր և համեստ ծնողաց յերևան քաղաքէ,
որոյ հօրն անուն էր Մարտիրոս, սերեալ 'ի Բէզնազարեան
ազգատոհմէ: Ընդ բնական կայտառութեան և ընդ հայկական
գուարթատիպ զեղեցիութեան գիմացն, աշխոյժ և եռանդ

ի նա յանտիական ՚ի տիս նշմարէին :

Սրբազան արք եպիսկոպոսունք սրբոյ Եջմիածնի Բարսեղ և Նէրսէս (1) յամի 1808 զնալով յերևան քաղաք՝ գէպ լինի ՚ի տան Մարտիրոսի Բէկնազարեան յաւուր միում հիւրամեծարիլ, ուրանօր նկատելով ՚ի Շահօ (2) տղայն նորին զաշխոյժ և զաչալըջութիւն՝ առաջարկեն հօրն նորա զՇահօ տղայն ՚ի պէտս հոգևոր սպասաւորութեան սրբոյ Աթոռոյն Եջմիածնի ընծայել, յորում ժամանակի լեալ էր մանկանն յեթնամեայ կամ ութամեայ ՚ի հասակի : Եւ զի արու զաւակունք հօր նորին ՚ի ծաղկեալ տիս վաղաթառամ մեռանէին՝ հաճի հայրն նորա զիջանիլ ՚ի հրաման Սրբազան արք եպիսկոպոսացն, և զորդին իւր Շահօ ՚ի ծառայութիւն սրբոյ Գահին մատուցանէ : Յետ զիշերոյն լուսանալոյ՝ ՚ի վերադարձի Սրբազան արք եպիսկոպոսացն ՚ի սուրբ Եջմիածին՝ մանուկն Շահօ ՚ի գաւակ երիվարին Սրբազան Ներսէս արք եպիսկոպոսի հեծեալ զնայ ՚ի սուրբ Աթոռն, և նորին յանձն լինի խնամոց :

Ստանէ անդ յաշակերտութիւն ՚ի մէջ Աթոռային վարժատան, յոր ուսանէ զնախաշաւիղս ընթերցմանց՝ ցամ 1818 ՚ի նմին պարապելով, և սրբոյ Տաճարին ծառայելով, այլ ՚ի վարժատան անդ՝ ոչ այնչափ յառաջադիմութիւն ՚ի մէջ ուսման առնէ, որչափ ներութեանց և տառապազին կենաց տակալոյ վարժելով, փորձիւ անձին ուսանէ աղքատուեն

(1) . Ներսէս արք եպիսկոպոսն էր այն՝ որ յամի 1843 ՚ի պոպտե ընդհանուր ազգի Առնուղէկոսութեան վերհամբարչս, և յամի 1857 ՚ի 13 փետրվարի ՚ի հոռնի 96 ամաց ՚ի կէնաց սուրբ պոպտեցս : Իոն Բարսեղ արք եպիսկոպոս՝ էր Կեղապահ սրբոյ Եջմիածնի :

(2) . Թադէոս արք եպիսկոպոսն անուն ՚ի սրբոյ առաջնին կոչեցեալ՝ լեալ է Շահօ, որ ՚ի սարկոսագութեանն գոիեալ է ՚ի Գրեգոր, և յաբեղայանալն կոչեցեալ է Թադէոս :

զտարժանելի աղբեցութիւնս (3) : Թերևս այնքիկ կիրթ փորձառութիւնքն իւր արարին զնա կարի իմն զորովս սիրտ և զթոյտ ՚ի փութս խնամելոյ զորքս կամ զանտերունչս յիւրոց ժողովրդականացն :

Դ . Յամի 1818 Սրբազան Գրեգոր արք եպիսկոպոս Տէր Գասպարեան վաղարշապատցի ընկալաւ զնա իւր յորդէզըրութիւն հանդերձ այլ ևս վեց հասակակցօք նորին, և գողով նորին Սրբազնութեան վիճակեալ ջրգողութեան ախտի, խստամբեր վարուց իղձ կալեալ՝ լինի առաքինասէր յոյժ, վասն որոյ զորդեգիրան իւր դատտիարակէ ՚ի մէջ բարեկիրթ բարոյականութեան զարգանալ, ոչ ներելով նոցա մինչև անգամ վասն զբօսանաց զոտս ՚ի սենեկէն արտաքս դնել կամ ընդ այլ աշակերտաց և տիրացուաց սրբոյ Աթոռոյն լինել դատարկաբան կամ պահել ընդ նոսա զյարաբերութիւն :

Գողով Գրեգոր արք եպիսկոպոսի ուսումնասէր յոյժ, թէպէտ և ինքն չէ լեալ ՚ի զիտնականաց կարգէ՝ հոգ կալնու զորդեգիրան իւր վարժել յուսումն և ՚ի գիտութիւնս որչափ մարթ էր գտանել յաղագս նոցա զվարժապետս : Զբանիբունս ՚ի միաբանից սրբոյ Աթոռոյն կարգէ նոցա լինել դասատու եկեղեցական երաժշտական ձայնից և Շարականին, վարձուք և պարգևօք զնոսա ՚ի քաջ դատտիարակութիւն խրախուսելով : Տիրացու Շահօ յայնմ ժամանակի քան զաշակերտակիցս իւր առաւել յառաջադիմութիւն զորժելով սերտէ ՚ի բերան զմեծազոյն մասն Շարականին, զեկեղեցական երգս և զժամերգութեանն կարգս, զորս անմոռաց յուշի իւրում ունէր նաև ՚ի ժամանակի ծերութեանն իւրոյ :

(3) . Այնչոփ ՚ի Թոր Կոտորեալ կայն ՚ի Թոր Եր և ներքութեանն՝ զորս կրեալ էր ՚ի ժամանակե աշակերտութեանն Երոյ, զի յառաջին շրջացորութեան Եր յանրամասնութեանն կարգերը զնցեալն :

դ. Ի 21 Մայիսի 1821 ամի ընկալնու զաստիճան Սարկառազութեան, և յաղագս սիրելի յոյժ գոլոյ Գրիգոր արքեպիսկոպոս ինամածուին իւրոյ՝ ՚ի Սարկառազութեանն զնորա ընկալնու զանուն: Յետ ընդունելոյ զկարգ Սարկառազութեանն՝ ՚ի նմին 1821 ամի մտանէ ՚ի հոգեւոր ծառայութիւն Սրբազնակատար Եփրեմ Աթուղիկոսի, և ՚ի բուսասու նորա կայեալ ընդ նմին առնէ զճանապարհորդութիւն յԱրցախ գաւառն (4): Յամի 1822 մտանէ յաշակերտութիւն Պողոս գիտնական վարդապետի Ղարաբաղցոյ, և եռանդուն ջանասիրութեամբն զուսումն քերականութեան՝ ճարտասանութեան՝ և տրամարանութեան ՚ի սուղ միջոցի ցամն 1824 առ նովա կատարեալ գործէ ըստ կարի: Յամի 1824 Թովմաս վարդապետ ՚ի Հնդկիս երբեմն առաքեալ նուիրակ, նշանակի ՚ի կառավարութենէ սրբոյ Աթոռոյն Եջմիածնի զնուիրակութեանն կատարել պաշտօն ՚ի սահմանս Ռուսաստանի, և Գրիգոր Սարկառազ ըստ հրամանի վեհից լինի ընդ նմա ուղեկից, առ նովա զկոչմանն իւրոյ կատարելով զհոգեւոր պարտիս: Սիրելի յոյժ լինի Թովմաս վարդապետին յաղագս անարատ հաւատարմութեանն իւրոյ և սակս ժիր յիւրում պաշտօնին լինելոյ. ուստի և յանձն առնէ նմա զզանձապետութիւն և զեղևմտական հաշիւ նուիրակութեանն: Ընդ նուիրակին շրջապայեալ ՚ի քաղաքսն Ռուսաստանի՝ ՚ի 17 Գեկեմբերի 1826 ամի մտանէն ՚ի Քիշնև, ուրանօր զրաւ կենացն ժամանէ նուիրակին: Որք մնալով Գրիգոր Սարկառազի ՚ի բարեխնամ տեսչութենէ նուիրակին՝ յամի 1828 ըստ հրամանի կառավարութեանս սրբոյ Աթոռոյն Եջմիածնի դարձ ՚ի Քիշնևայ առնէ զնալ

(4) . Յայնմ ժամանակի Գուշ քեղաքէալ յոյժ պարտոյ սրբոյ Եջմիածնի, Սրբազնակատար Եփրեմ Աթուղիկոս առնէ զճանապարհորդութեան յԱրցախ գաւառն, և գնայ ՚ի Դշեակի Ըստոյ սակս առնելոյ շեխուսութեան ՚ի ճիս Մէլէտոյ անդի և առնելոյ զճարտան Աթուղիկոսի Գրգորս, այլ ոչ շրջի նմայն:

ի սուրբ Աթոռն: Յայնմ ամի Ներսէս արքեպիսկոպոս հրամանաւ Այսոեր Ռուսաց զնայ ՚ի Քիշնև, ուրանօր ապա եկաց Առաջնորդ ցընտրութիւնն նորա յաղգէն սակս Աթուղիկոսութեան: Զճանապարհայն ՚ի 6 Օգոստոսի Գրիգոր Սարկառազ յիջևան իւղւոյն արժանի լինի հանդիպելոյ նորին Սրբազնութեանն, որոյ հրամանաւ ՚ի սպասու նորա կացեալ ՚ի պաշտօնի սարկառազութեան՝ միւսանգամ անդէն դարձ ՚ի Քիշնև առնէ ընդ Ներսէս արքեպիսկոպոսի:

Ե. Ընդ ՚ի Քիշնև՝ յ8 սեպտեմբերի 1831 ամի Սրբազան Ներսէս արքեպիսկոպոս և վիճակաւոր Առաջնորդն շընորհէ նմա զկարգ Արեղայութեանն, ՚ի ձեռնադրութեանն կոչելով զնա Թաղէոս:

Ի ժամանակի Առաջնորդութեանն Ներսէս արքեպիսկոպոսի, յի և իցէ ծանր գործս վիճակային իրողութեանց կամ դատից, Թաղէոս վարդապետ նշանակեալ քննիչ առաքեալ լինի յԱռաջնորդէն ՚ի թեմաւորեալ քաղաքսն, ուրանօր ճիշտ հաւատարմութեամբ, արթուն գիտողութեամբ, և արդարասէր կորովամտութեամբ զգործոցն յանդ հանէ զկատարումն զինձիւն լուծանելով: Յայնոսիկ ժամանակի առաքի քննիչ և ՚ի նոր Նախիջևան քաղաք յաղագս քննուութեան եկեղեցական հաշուոց՝ գործոց՝ և զուժարաց՝ որք ՚ի շփոթ լեալ են ՚ի դրութեան, և զամս երկուս մնալով անդ, զամենայն զհանդոյցսն ըստ կարգի և ըստ արդարութեան առանց խմբ խռովութեան լուծանէ, և ժողովրդասէր վարութն և ընտանեբար յարակցութեամբն զսիրտս օրհնեալ հայ ժողովրդականացն այնր ազատ քաղաքի զըրաւէ առ ինքն, մինչև անգամ բարեկամաց նորա ոչ բնալուշոյ իւրեանց ձգելով զսիրոյ նորին քաղցրութիւնն՝ ըզբարեկամական նամակս ունաք ՚ի վաղածանօթ բարեկամացն շարունակէին մինչև ցամն իսկ՝ յորում զկենացն իւրոյ զընթացսն կնքեաց: Գարձ անդէն արարեալ ՚ի Քիշնև վասն սահմանին Ղրիմու՝ կարգի յԱռաջնորդէն յամի 1835 յաջորդ ՚ի տեղի իւր, ուրանօր յետ ժամանելոյն հրամանաւ Առաջնորդին զմեծ ամեծ ս առնէ բարեկարգութիւնս, սակս եկեղեց

ցեաց զհաւատարիմ՝ երեսփոխանս կարգելով, և տալով նոցա զտուճար կանոնաւոր և ժապաւինեալ յաղագս եկեղեցական ելլամոխցն նշանակելոյ, և զբաճանայս 'ի կարգ ուղղութեան մուծանելով, և զայլ և ս առնելով կանոնադրութիւնս 'ի պայծառութիւն եկեղեցւոյ և 'ի շինութիւն ժողովրդականացն, ընդ որս քաղցրութեամբ մեծաւ իբրև հայր ընդ որդիս կենցաղաւարելով՝ զսիրտս նոցա ամենեցուն առ ինքն զրաւէ, մինչև 'ի դարձ առնելն Առաջնորդին յամի 1840 յայնոսիկ կողմանս՝ 'ի զարմանս լինել ոչ միայն 'ի մասին բարեպէս կառավարութեանցն վիճակային իրողութեանց՝ այլ և յաղագս այնչափ սերտիւ առ ինքն ունելոյ զժողովրդականացն սիրոյ ջերմեռանդութիւնս: Ի նոյն ժամանակս (որպէս մտաբերեմ զլուեալս 'ի նորին Սրբազնութեանէ՝) յամի 1838 հասանէ նմա սաստիկ ախտ աչաց, և հարկ լինի նմա գնալ 'ի քաղաք սահմանացն Ղրիմու յաղագս վերատեսչութեան եկեղեցական հաշուոց, վասն որոյ նոյն ճանապարհորդութիւն առաւել ևս զօրութիւն ախտին սաստկացուցանէ, և 'ի ճանապարհայն հանդիպեալ քժշկի ումեք՝ խորհրդատրի 'ի նմանէ զաչան իւր օղեաւ լուանալ, այլ զի տարաբաղդապէս լուանայ զայն օղեաւ, յորում լեալ են խառնուրդք ջրոյ կանաչ պղպեղի, քաջոյ ականն կորուսանէ զտեսութիւն և յայնմ՝ հետէ 'ի կիրարկանէ զակնոցս և բանայ զերկոսին խարանս սիսեռանմի՝ 'ի բազրակն իւր աջոյ, և միւսն՝ 'ի վերայ ձախ սրունին որք կային ցկէտ մահուանն իսկ: Ընդ այն վատաբախտիկ աղատահար զողջեր մեծ մասն աշխուժիցն իւրոյ շիջանին, և կորուսանէ զսրտին իւրոյ զեռանդնութիւնս:

Ի նմին սահմանին Ղրիմու զպարտաւորութիւն յաջորդութեան պաշտօնին իւրոյ նովին բարեկարգութեամբ կատարէ ցամն 1843, յորում ժամանակի Սրբազան Ներսէս արքեպիսկոպոս Առաջնորդն քիչնեայ և Բիսարաբոյ 'ի համերէն ազգէն ընտրեալ հրաւիրի 'ի բարձր պաշտօն ընդհանուր կաթողիկոսութեանն: Նորին Սրբազնութիւնն զհաստարիմն իւր հոգևոր պաշտօնեայ զԹաղէոս վարդապետն

ոչ կամելով յինքենէ 'ի բաց լքանել յայնմ վիճակի՝ ընդ ինքեան տանէ զնա 'ի Ռուսականն կայսերանիստ քաղաք: Լսելոյ արժանի է վէպ ճանապարհորդութեանն նոցին, զի 'ի միում կառս՝ Ներսէս արքեպիսկոպոսի և վարդապետին իւրոյ Թաղէոսի բազմեալ, զեօթն հարիւր վէրս (5) ուղոյն հատանեն զերկարութիւն, յորում ժամանակի ոչ արհին Ներսէս ընդ նմա առնէ զառտնին զսուցատրութիւնս վասն զբօսանաց, և ոչ վարդապետն Թաղէոս շեղել իւրիք ինչ կամ թուլանայ 'ի զգօտ և 'ի շրջանկատ պատրաստութեանէն ակնածու սպասահարկութեանն իւրոյ: Պատմէր Սրբազան Թաղէոս արքեպիսկոպոս հանգուցեալ Տէրն իմ. Թէ Նորին վեհափառութիւնն զթիկնամէջն իւր 'ի բարձ նստարանի կառացն տուեալ՝ մերթ ընդ մերթ որպէս 'ի քուն ձևանայր, և երբեմն զաչան կիսաբաց առնէր զննել զվարդապետին իւրոյ զբազմելոյն հանդէպ ինքեան՝ զնիստ և զզրութիւն: Այլ վարդապետն Թաղէոս ունելով զփորձ բնաւորութեանն նորին՝ ոչ բնաւ անձինն իւրոյ հանգստութեանն զհետ լինի, այլ յամենայնի կաղմ և պատրաստ մնայ յամենայն վայրկենի՝ որպէս արդէն 'ի սպասու ծառայութեան վեհին իւրոյ և Տեառն: Յայնմ վայրի երկոքին այսօքիկ ուշադրութեան են արժանի, մի՛ վեհանձնական բնաւորութիւն Ներսէս արքեպիսկոպոսի, որ ընդ ստորադաս պաշտօնէին իւրոյ՝ զխօսս ընտանիս յաղագս զբօսանաց առնել ոչ ներէ անձին իւրում, և միւս՝ մշտապատրաստ զգաստութիւնն Թաղէոս վարդապետի, որ անշարժ իբրև արձան առաջի Տեառն իւրոյ մնալով 'ի համեստ և 'ի պարկեշտ դրութեանն, ոչ ներէ անձին իւրոյ և խուսն ինչ զմէջս իւր յիշուլ 'ի նստարան կառաց, կամ դիւրութեան անձին իւրոյ զհետ լինել, որք զժուարին են յոյժ յաղագս մարդկային բնու-

(5) . « վեր » , է Բոս Ռոսոյ և շտ էրկոքն-Լեան ճանապարհ: Եօթն վերն Ռոսոյ՝ է Բ Բոսոսի ուրոսեյ, կամ երեք շոն Ե-րոպոսի:

Թեամբ տկարութեանն, որ միշտ լքեալ 'ի վաստակոց' հան-
գաստութեամբ զկաղզուերուն պահանջէ:

Յետ նուիին ճանապարհորդութեամբ 'ի Այսերանիստն
ժամանելոյ 'ի մայրաքաղաք, և անդ 'ի տունս Ահհազնեայ
տեարց Նազարեանց Իշխանապետացն, 'ի Զուղայոյ գաղթելոցն
անգր, կանխոյ զիջեան' 'ի ծանրագոյն հիւանդութիւնս
անկանի Սրբազան Ներսէս հրաւիրեալն 'ի պատիւ Հայրա-
պետութեան, մինչև բժշկացն անյոյս 'ի նմանէ լինել: Յայնմ
ժամանակի Թաղէոս վարդապետ ոչ միայն հոգևորապէս,
այլ և որդիարար զյօժարակամ իւր ծառայութիւնս մատու-
ցանէ Ահհին իւրոյ և Տեառն, մինչև ըստ Աստուծոյ օժան-
դակելոյն՝ մեծմերական բժշկականութեամբ առողջութեանն
նորա զօրութիւնք դարձ 'ի մարմին նորա առնեն յետ վեց-
ամսեայ ժամանակի մահահրաւէր տկարութեանն:

Յամի 1844 մօտ 'ի Զատկական աւուրսն՝ վեհափառ
Ներսէս կաթողիկոս տակաւին 'ի մահճի տկարութեանն՝
Թաղէոս վարդապետին իւրոյ հարազատագոյն հոգևոր պաշ-
տօնէին՝ 'ի տքիտուր երկարամեայ վաստակոց և ծառայու-
թեանցն, պարգևէ զփելոն ծաղկեայ կերպաս, զվարդապե-
տական զականակուռ խաչ պարանոցի Գ և զհաւատարիմ
ծառայութեանցն նորա տալով զվկայութիւն իւր 'ի յայտա-
բարութեանն իւրում յանուն Օգոստոսափառ Այսեր Ռուսաց
'Նիկողայոսի՝ արժանի զԹաղէոս վարդապետն առնէ Այսե-
րապարգև շքանշանին սրբոյն Աննայի երրորդ աստիճանի
Թաղապատկ խաչի:

Վեհափառ Հայրապետին յետ զպարտս այցելութեանն
Այսեր կատարելոյ, և զհրովարտակն հաստատութեան
Հայրապետութեան իւրոյ յարքունուստն ընդունելոյ՝ յամի
1844 դարձ 'ի Սանդաղտրուրդայ արարեալ՝ 'ի սպասու իւ-
րում ունելով զԹաղէոս վարդապետն գառնան 'ի Գիշն, և

Գ 'Նոյն խոյ՝ անսկիւր ըստ է խոյն պարանոցի Ահհազնեայ
Ներսէս Արևուշեհոսի:

անդէն յուղի ելեալ յամի 1845, 'ի լուսանկարն ժամանեն
յԱթոռ կաթողիկէ Եջմիածնի:

Ք. Վեհափառ Ներսէս կաթողիկոսի քաջ ունելով ըզ-
փորձն աշարուրջ հանձարոյ և ժողովօրէասէր կառավարու-
թեան Թաղէոս վարդապետին իւրոյ, յետ 'ի սուրբ գահ ժա-
մանելոյն՝ զայլ իմն շաւիղ յարարերութեան կախու ընդ
նմա, ներքին ունելով նպատակ զնորա համբերութիւնն 'ի
փորձ արկանել: Զնորհացն իւրոյ առ նա զթաղցրութիւն
'ի սրտի իւրում Թաղուցանելով, առ երեսս ցուցանէ զԹա-
ղէոս վարդապետն որպէս մերժեալ յիւրոց շնորհածաւալ
անհարկութեանց: Մնայ Թաղէոս վարդապետ 'ի սուրբ Եջ-
միածին 'ի կարգս միաբանից սրբոյ Աթոռոյն ցամն 1850:
Զընթացս նոյն հարգմեայ ժամանակի բազումք յերեւել իշ-
խանաց դիմելոցն 'ի սուրբ Եջմիածին 'ի համբոյր սրբութեանց
զահին մեծի, մանաւանդ 'ի Տփղիսայ հասեալ ուխտաւո-
րացն՝ տեսանելով յանձն Թաղէոս վարդապետի զարժանա-
ւորութիւն և զկատարելութիւն մտանելոյ յաստիճան Եպիս-
կոպոսութեան, միջնորդ առ վեհափառ Հայրապետն լինին՝
յաղազս շնորհելոյ նմա զպատիւ Եպիսկոպոսութեան, և թե-
մաւորելոյ զնա սակս վիճակաւոր առաջնորդութեան Տփղի-
սայ: Ի յաճախիլ նոյն խնդրարկու և միջնորդող իշխանաց,
վեհափառ Հայրապետն առաւել ևս յամեցուցանէ զժամանակն
իւրոյ փորձառութեանն, և զմիջնորդութիւնս նոցա 'ի դերե-
հանեալ ինքն զհետ ընթանայ ներքին մտադրեալ նպատա-
կին:

Թաղէոս վարդապետ՝ յայնոսիկ ժամանակս փորձոյ ոչ
փոքու իւրիք լքանելով զյոյս իւր կամ զհպատակութեանցն
իւրոց զպարտիս, ոչ առ երես և ոչ 'ի սրտի և ոչ զՎերմու-
թիւն հաւատարմութեանն իւրոյ 'ի սառնութիւն խորդա-
ցեալ յարարերութեանց փոխելով, յամենայն դէպս սրբադ-
նագործութեանց և հոգևոր սլաշտօնակատարութեանց վե-
հին՝ ինքն որպէս անձնանուէր, ծանօթ և ընտել բնաւորու-
թեան Տեառն իւրոյ, 'ի սպասահարկութիւն օժեւելոյն Ղստու-
ծոյ՝ քան զամենայն միաբանս սրբոյ Աթոռոյն յառաջնութեան

և ՋերմաՋերմ՝ ի ծառայութիւն մատչէր : Ի լինել բանից ինչ զԹաղէոս վարդապետէն ՚ի Ժողովի սրբազումար միաբանիցն՝ առանց ներկայութեան Թաղէոս վարդապետի, վեհափառ Հայրապետն զբարի համարումն և զվկայութիւն իւր զմամնէ առաջի առնէր, և ցուցանէր զինքն՝ հղօր պաշտպան նորա նոյնպէս և Թաղէոս վարդապետ յամենայն դէպս առտնին զըուցատրութեանց իւրոց ընդ միաբանս արտայայտէր զծառայութեանն իւրոյ անշեղ հարազատութիւն առ վեհափառ Տէրն իւր, մինչև զարմանալ միաբանիցն և ասել, թէ այս ինչ գաղտնի ՋերմաՋերմութիւն սիրոյ է ընդ մէջ սոցա, և երևելապէս պող յարաբերութիւն նոցա ընդ իրեարս :

Է. Յամի 1848 ՚ի ծագիլ անհամաձայնութեանց ընդ մէջ վիճակաւորին Ջուղայ Ամենափրկչեան սուրբ վանաց Սուրբ. նեան Յովհաննէս արք. Եպիսկոպոսի և մեծի մասին Ժողովրդականաց իւրոց, և յետ Ժամանելոյ նոյն համբաւոց և բողոքանացն ՚ի սուրբ Աթոռն՝ ՚ի վեհափառ Հայրապետէն նշանակի Թաղէոս վարդապետ, և հաստատեալ հրամանաւ Սիւնհոգոսին կարգի քննիչ յաղազս գթտութեանցն անցելոց ընդ մէջ վիճակաւոր Առաջնորդին Ջուղայ և Ժողովրդոցն իւրոց, և մինչ Թաղէոս վարդապետ ՚ի հոգս պատրաստութեան ՚ի պէտս ուղեւորութեանն ՚ի Ջուղա պատաղի՝ համբաւ օրհասի Սուրհենեան Յովհաննէս արք. Եպիսկոպոսի և Առաջնորդի ՚ի սուրբ Աթոռն Ժամանեալ խափան լինի գործոյն :

Ը. Վեհափառ Ներսէս կաթողիկոսի հաւատեալ ՚ի վերայ հասեալ գոյով դժուարութեանցն Առաջնորդական վարչութեան ՚ի Պարսկաստան՝ Կ վստահանայ յանձն և ՚ի խոհեմութիւն Թաղէոս վարդապետի, իբրև առ այր քաջափորձ Ժողովրդական կառավարութեանց, և կարող իսկ զգթուարութիւնս գործոցն խոհեմութեամբ իւրով ՚ի կարևորութիւն ածեալ զկառավարութեանն պահպանել զղեկ : Նմին իրի

Կ Եղաթոս ունելոյ է-ը զիորճ նեղ-մեանցն ՚ի Ժամանակէ՝ մինչ ասորք Աթոռն լեռն է ընդ եշխանութեամբ Գերմանեան Պարսեց օ

զնա ընտրելով և նշանակելով յաղազս Առաջնորդութեան Ջուղայ սրբոյ Վանացն Ամենափրկչի, ՚ի 16 Յունիսի 1850 ամի զօծումն կարգի Եպիսկոպոսութեան շնորհէ նմա, և յ31 Դեկտեմբերի նոյն ամի տայ նմա զկոնդակ վիճակաւոր Առաջնորդութեանն հայոց եղելոց ՚ի Պարսկաստան և ՚ի Հնդկիս :

Կորին Սրբազնութիւն Թաղէոս Եպիսկոպոս յետ զբաւարարութեան և զգոհունակութեան օրհասութիւնս ՚ի վեհափառ հոգևոր ծնողէն իւրմէ ընդունելոյ, յամենան Մարտի 1851 ամի ՚ի սրբոյ Եջմիածնէ յուղի ելանէ ընդ Սրբազան Սահակ Եպիսկոպոսի Սաղունեան՝ իւրոյ Եպիսկոպոսութեան օծակցի, որում յանձն եղեալ էր Առաջնորդութիւն Հայոցն Ատրպատկանի, և յաւուր աւագ հինգաբաթու ժամանէն ՚ի Դաւրէժ քաղաք : Անդ մնալով Առաջնորդին հայոց Ատրպատկանի, Սրբազան Թաղէոս Եպիսկոպոս յետ զատկական տանօրեայ աւուրցն անցանելոյ ելանէ ՚ի Թէհրան, և յամենանն Մայիսի մուտ գործէ անդ, որ էր առաջին քաղաք թեմական իշխանութեանն իւրոյ : Յայնմ ամի վեհափառ Շահն Պարսից ընդ որ և դեսպանք օտար տէրութեանց, մըտադիր էին դալ յԱպասհան, որպէս և մի զկնի միոյ Ժամանէին, ուստի ՚ի Թէհրան քաղաքի ոչ շատ յամեցաւ նորոգ վիճակաւոր Առաջնորդն Ջուղայ, այլ ՚ի նոյն յամենանն մայիսի դիմելով ՚ի Ջուղայ, յ3 Յունիսի ՚ի միսիթարութիւն սրտի ամենայն Ժողովրդականացն մուտ գործէ ՚ի Ջուղա ՚ի սուրբ վանքն Ամենափրկչի :

Թ. Ըև ինչ խօսեցեալ զարդիւնաշատ գործոց և զբաղմաբեղուն արգասեաց Առաջնորդական վարչութեանց Սրբազան Թաղէոս Եպիսկոպոսի ՚ի վիճակին իւրում՝ ՚ի դէպ համարեմ զունակացեալ բնաւորութեանցն նորա զյատկութիւնս՝ սղազունիւ անտանօր առնել յիշատակութիւն :

1) . Կարի իմն Ջերմ էր առ Աստուած հաւատ նորա և յուսոյ ապահինութիւնն, և յամենայն ՚ի դժուարին դիպուածս յորում տկարանային մարդկային օժանդակութիւնք՝ առ Աստուած դիմէր պաղատաւոր ՋերմաՋերմ հայցուածովք, և ըստ հաւատոցն իւրում Ժամանէին նմա օգնակա-

նութիւնք 'ի Տեառնէ յաղբերաց անտի՝ յորոց չունէր ակն-
կալութիւն ինչ, ստէպ ստէպ ասէր 'ի բարբառ պարսից «խօ-
գահ գարամ, չէ դամ գարամ», քի «գլատուած ունիմ»,
զինչ հող ունիմ», ասէր նաև, «թէպէտ վարդապետ եմ»,
այլ զՎերմեռանդն շինականի ունիմ զհաւատ աներկմիտ առ
Ատուած :

2) . Ունէր զսիրտ կարի իմն գորովալի և դիւրազգաց,
որով 'ի յուշ ածերն անգամ զբարեկամս իւր կամ զծանօթօ՝
զորս ոչ բնաւ 'ի յուշոյ իւրմէ արտահանէր . փղձկայր սիրտն,
և աչքն արտասուօք աղբերանային : Նովաւ էր զի գուլթ մեծ
ունէր առ որբս, և առ անտերունչս իւրոց ժողովրդականաց,
և 'ի հոգատարութիւն սակս նոցա, կամ յաղազս գործոց նո-
ցին պատկանելոց՝ ոչ խնայէր 'ի ջանասիրութիւնս իւր :

3) . Նախանձաւոր էր յոյժ 'ի մասին եկեղեցական
վայելչութեանց, վասն որոյ զամենայն զհոգև որ պաշտօնս սի-
րէր փառաւորութեամբ կատարել թէ ըստ ծիսական արարու-
ողութեանց մասին, թէ ըստ զգրոտուց պայծառութեան և
թէ ըստ պաշտօնէից կանոնաւոր սպաստհարկութեանց : Ստէպ
'ի յուշ ածէր զԱռաքելականն զբան զլուեալն իւր 'ի Սրբազ-
նակատար Եփրեմ կաթողիկոսէ, թէ «զպաշտօնն իմ փա-
ռաւոր արարից», : Տաղտկութիւն ինչ կամ ձանձրոյթ ոչ
բնաւ ցուցանէր յորժամ 'ի ծերութեանն իւրում հասակի 'ի
մատուցանելն իւր զՍրբազնադործ պատարազ և 'ի տալն ու-
րուք զաստիճան հոգևորականութեան՝ ցժամս եօթն 'ի վա-
տակն հոգևոր անխօն շաշատասիրէր : Ոչ ներէր եթէ գուզ-
նաբեայ ինչ զարտուղութիւն կամ սխալմունք 'ի կարգս ժա-
մասացութեանն լինէին 'ի դպրաց, այլ յամենայնի զսահմա-
նեալն 'ի հարց հոգևորաց՝ ճշդիւ պահել ջանասիրէր, ա-
սելով թէ «երանելի Հարք մեր զամենայն կարգս եկեղեցոյ՝
Հոգևով որբով են սահմանեալ, վասն որոյ չէ ներելի դոյզն
ինչ շեղիլ 'ի կարգաց անտի», : Ի պատճառս սոյն նախանձա-
խնդրութեանն իւրոյ, տղէտ քահանայք ոմանք և ժամասաց
տիրացուք՝ ոչ զերծ մնային 'ի նորա յանդիմանական խրատա-
բանութեանց : Ի սկզբան վեճակաւորութեն իւրոյ 'ի Զուղա

մինչդեռ վառ էին իւր աշխոյժք, յամենայն կիւրակէ աւուրս
լինէր բեմբասաց 'ի մէջ եկեղեցեաց՝ ժամս երկու երկարա-
ձգելով զբանն իւր : Զձև ընդ լայնման յաճախ 'ի կեր արկա-
նէր 'ի քարոզութեանն իւրում, պէսպէս օրինակօք և վար-
գապետութեամբ զբնաբանն իւր պարզաբանելով :

4) . Հիւրասէր էր կարի յոյժ, և քաղաքավարութիւն
նորա ընդ հիւրոցն՝ ըստ իւրաքանչիւր աստիճանի, էր յաս-
տիճանի կատարելութեան : Ոչ ոք թէ 'ի մերադանց և թէ
յօտարաց հիւր եկաց առ նա՝ և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ մե-
ծապէս գոհ և շնորհապարտ : Ունէր զկարի իմն զգօնամտու-
թիւն՝ 'ի շարժմանց և 'ի խօսակցութեանց ուրուք ճանաչել
զմարդն, և իմանալ զներքին ունակութիւնս մարդոյն . և ար-
գարեւ 'ի բազում դէպս անվրէպ լինէին որոշողութիւնքն նո-
րա : Ունէր զձիրս շահելոյ և առ ինքն գրաւելոյ զսիրտս,
և ընդ որս սերտիւ մտերմանայր՝ ոչ բնաւ զսիրոյ նոցին քա-
կէր զյօդակապ :

5) . Ոչ առանց պէսպէս փորձոյ և ընտրողութեանց
հաւատայր ումեք, և որում հաւատայրն՝ ոչ փոփոխէր ըզ-
համարումն իւր 'ի նմանէ, շարժեալ յամենայն զբուցաց :

6) . Կարի զգուշաւոր և մերթ երկչոտաբար իսկ
պահպանէր զընթացս գործողութեանց և կառավարութեանցն
իւրոց, խոյս տալով 'ի փորձանաւոր հետևուեց և յառար-
կայից՝ յորոց մարթ էր խռովութեան ծնանիլ : Իսկ յորժամ
դէպք փորձառութեանց յանակնկալս 'ի վերայ ժամանէին,
անվեհեր ախոյեան հանդիսանայր, ոչ 'ի մահուանէ անգամ
զերես իւր 'ի բաց դարձուցանելով, և լինէր ճգնաջան զիրա-
ւաւոս իւր յերևան ածել :

7) . Մտէր զպճնասիրուի, այլ սիրէր զմաքրուի և
կեալ արժանաւորապէս : Առանց ընկերակցաց ոչ ախոր-
ժէր բազմիլ 'ի սեղան : Ցանկայր զի առատ և լիուրի կերակրօք
լիցի սեղանն իւր, ոչ վասն անձին իւրոյ՝ այլ յաղազս զսեղա-
նակիցան իւր մեծարելոյ :

8) . Յիշողութիւն նորա էր 'ի չափազանց աստի-
ճանի կատարելութեան : Զանցս և զգիպուածս ինչ երեսնա-

մեայ կամ քառասնամեայ ժամանակաց այնպիսի անվրէպ կարգաւ պատմաբանէր յիշատակելով զամիսն՝ զօրն՝ և ըզ- ժամն անդամ, ընդ նմին և զտեղին՝ զանձինն՝ և զյարակից պարագայն՝ մինչև զարմացումն ՚ի լսողն տպաւորել :

9) . Սկզբունք կառավարութեան նորա էին յաւելուել զպատիւ ազգին իւրոյ, պահպանել զվայելուչ արժանաւորութիւնս հոգևորականութեան, և բաւ ամենայն մասին յօգուտ ժողովրդեանն իւրոյ անխոնջ դիմել ՚ի վաստակ : Ղըսեմ՝ լայնածաւալ՝ և հեռատես էին ամենայն խորհրդածու- թիւնքն իւր յաղագս ժողովրդական օգտից, մինչև երբեմն մտանել ձեռնարկութեանցն իւրոց յաստիճան չափազանցու- թեան, այլ անշուշտ այն չափազանցութիւն յառաջ գայր ՚ի չափազանցութենէ սիրոյն իւրոյ վասն օգտի ժողովրդակա- նացն : Յոչ աջողին առաջարկութեան ինչ իւրոյ, ոչ ՚ի յու- սոյն լքանէր, այլ այլով եղանակաւ՝ և այլուր դիմէր ՚ի նդ- րագրութեամբ : Հոգևոց հանէր ստէպ ստէպ և ասէր, « ափսոս դի ոչ մարթացայ ծառայել յաղագս օգտի ազգին իմոյ փրչափ սրտի իմոյ էին յօժարութիւնք, քանզի բաղբն իմ ոչ աջողեաց ինձ, ասէր, վիճակիլ ՚ի մէջ այնպիսի հա- րուտ ժողովրդոց՝ որք կարող լինէին դերես իմ տեսանել, և զձայն իմ լսել, որովք և ինձ մարթ իցէր զմեծամեծ առ- նել ծառայութիւնս յաղագս ժողովրդեանս » :

10) . Սչ կարէր տանել անկարգութեանց, և ոչ ան- վարձ թողուել յօժարէր զվաստակս ուրուք : Առ յամառեալ յանցաւորսք անողք էր՝ և զձգուես ցլերջն աստիճան թափէր՝ սակօ զիրաւունս իւր խելամուտ առնելոյ նմա : Իսկ առ ապաշաւեալ յանցաւորն՝ անյիշաչար էր և ներողամիտ յոյժ, մինչև յետ առարկային վերջանալոյ՝ ոչ և ս բնաւ ՚ի յիշատակութիւն ածել զանցեալն, կամ զնշան ինչ դժկա- մակութեան արտայայտել նմա : Չցաւ սրտի իւրոյ կամ զու- րախութիւնն ոչ ախորժէր պահել զաղտ և առանձին, այլ պատուէր բարեկամաց իւրում, և մերթ հրապարակապէս իսկ :

Լ'յոթօքիկ էին գլխաւոր բնաւորութիւնքն օճակացեալ յանձն Սրբազան Թագէտոս արք. Եպիսկոպոս Առաջնորդի

Զուղայ :

Ժ . Բարձրագատիկ եղին արգասիք օգտից Առաջնորդա- կան վարչութեանց նորին ՚ի Զուղա զամս երկուտասան, այլ ՚ի տեարակէն զոր հրատարակեցի յամի 1862, զքաղուած գործօցն նորա արարեալ՝ համառօտեալ աստ ՚ի յիշատակու- թիւն ածեմ :

Ի ժամանել նորին Սրբազնութեանն ՚ի Զուղա յ3 Յու- նիսի 1851 ամի՝ եզիտ զԱռաջնորդանիւտ զվանքն իւր և զԶու- զա ՚ի մէջ յետադայ աւաղելի դրութեանց :

ա) . Մուղայեցիք գաւառական հայ ժողովրդովք հա- սարակապէս ճնշեալ՝ նեղեալ՝ և յոգի ապաստան կային յե- րեօաց զօրապահանջութեան յազգէ հայոց Աբբունական հրամանաւ :

բ) . Սննքն ծանրաբեռնեալ կայր ՚ի ներքոյ հաղար թուճանաչափ (6) պարտուց, որոյ պատճառաւ նշանաւոր կալուածք նորա առ պարտատեարսն կային գրաւական :

գ) . Սննքն դատարկ ՚ի հարկաւոր պիտոյից և ՚ի կա- բուսեաց, պատկառանօք ասեմ, օրական հացի էր կարօտ :

դ) . Սպահարկութիւն (Թախֆիֆ) վանքական կալ- ուածօցն անզօրացեալ ՚ի 1849 ամաց հետէ՝ զսակ արքու- նական հարկին՝ զծանրացեալն յոյժ յայնմ ժամանակի՝ մինչև առ ջրիբն (7) Չ7 ուււփով պահանջէին ստիպմամբ :

ե) . Սէ հափառ Շահս յամսեանն Յուլիսի ժամանեցաւ յԱպահան, որոյ պատճառաւ հարկ անհրաժեշտ ծախուց ծանրանային ՚ի վերայ սրբոյ վանացն ՚ի մասին պարգևաց առ նորին Արեգակնափայլ վեհութիւն, և առ մեծամեծ նախա-

(6) . Հաշե- Գրամայ ՚ի Պարոնիտոսի հասարակացէս Բողէանայ ՚ի Կեանէց (որ Բերես եցէ Կեանի) : Իրոտանչե-ր արծաթ առ-գին՝ է Բ հաղար Կեան, և Կառն առ-գի Կրամն՝ է Բ Բու-ման :

(7) . Չափ Կարծ-թեան հալո-ածոյ յԱպահան՝ հոչե Զրեէ : Ի ժամանակի առաջնորդութեան Թոքեո Սրբազան արք. Եպիսկոպոսի, որի Երեւանի Զրեէն շեղե յաւել Կան զ16 առ-գի :

րարս Տէրութեանն :

Ըրդչափ էին մեծամեծ դժուարութիւնքն՝ որք շուրջ զԱռաջնորդան պատեցան 'ի ժամանելն նորա 'ի վիճակիւր, որովք նորին Սրբազնութիւնն թէպէտ շուարեցաւ, այլ ոչ վհատեցաւ, և 'ի դարմանն նոցին՝ կենսամաշ ճկամբք և ջանիւք ձեռն 'ի գործ եղև :

Թ). Յաղագս զօրապահանջութեանն՝ բանիւք աղաչանաց, և արգեամք պարզեական քաղցրութեանց, դիմեաց առ Նախարարս մեծի Տէրութեանն Պարսից, մանաւանդ առ Հօսէյնիան Սարգար՝ որ սպարապետն էր ընդհանուր զօրաց պետութեանն, և խնդրեաց զաղատութիւն սակաժողովրդեան իւրոյ 'ի ներդուլութենէ անտի: Ականատեսք վկայել կարեն, թէ որչափ ջերմ արտասուս յաչացն հեղոյր նորին Սրբազնութիւնն, յորժամ տեսանէր զժողովրդականսն ջուղայ և գաւառաց զեղեալ 'ի սուրբ վանքն որպէս որդեկորոյս ծնօղբ՝ 'ի խնդիր նպատեց և օգնականութեան. յորժամ զբանս հայցուածոց խօսէր ընդ նախարարս՝ 'ի խնդրել զմիջնորդութիւնն նոցա ըստ այնմ մասին, և յորժամ յառանձնութեանն իւրում, զաչս 'ի վեր համարձեալ յերկինս աղօթանուէր պաղատանօք զերկնաւոր Հօրն մաղթէր զօժանդակութիւն: Դուաւ Աստուած ձայնի աղօթից նորա, և էանց փութորիկն այն մեծ 'ի ժողովրդեանէ Հայոց, զի Միրզայ Թաղի առաջին Եպարքոսն մեծի դրամն Պարսից, յամենան Օգոստոսի արգել ետ հրամանին զօրապահանջութեան յաղգէ հայոց:

Ք). Պնականութեամբ աղա պարապետին Գրիգորիան Սառաֆեանց՝ ըստ խնդրոյ նորին Սրբազնութեանն փոխատուութեամբ եղև վճարումն մեծի մասին պարտուցն վանաց, և որ ինչ մնացորդն մնայր, Կորին Սրբազնութիւնն վճարեաց յանձնական գոյիցն իւրոց, և զսուրբ վանքն զերծոյց 'ի պարտուցն իւրոց առ արտաքինս, թափելով և զկալուածան նորին 'ի դրաւականութենէ:

Դ). Հող կալաւ զկարօտութիւնս տնական պիտոյիցն և պակասութեացն լցուցանել, հետզհետէ զնելով զհարկաւորան, որովք 'ի վերջին ժամանակս առաջնորդութեանն իւրոյ:

րոյ վայելուչ արժանաւորութիւն 'ի տնտեսական պարագայս սրբոյ վանացն երևէր:

Դ). Ըր ժամն դարման տանել յաղագս հաստատութեան վանքական կալուածոց ապահարկութեանն ոչ մարթացեալ՝ զսակ ծանրացեալ հարկին վճարէր դարձեալ յանձնական իւրոց 'ի ստացուածոց, և զսուրբ վանքն ազատ պահէր 'ի նորանոր վնասուց և 'ի ներդուլութեանց:

Ե. Երոյց և զպէտօ անհրաժեշտ ծախսարարութեանց յաղագս պարզեալ իւրութեանցն առ վեհափառ Շահնաշ, առ Միրզայ Թաղի Ամիր Եպարքոսն, և առ այլ Նախարարս Պետութեանն, 'ի ստացուածոց իւրոց մատուցանելով զազնիւ և զթանգազին իրս, որով և զայն դժուարութիւն հարթեալ հաւասարեաց:

Յետ զնախաշաւիղ դժուարութիւնսն զնշանակեալսն 'ի վեր անդր շնորհիւ Տեառն 'ի սուր ժամանակի 'ի հարթութիւն ածելոյ, դարձոյց ապա զուշադրութիւն իւր յայլ բարեկարգութիւնս և 'ի շահս օրբոյ վանացն՝ եկեղեցեացն՝ ժողովրդեանն ջուղայ՝ և Գաւառաքնակ համազգեաց հասարակապէս, զորոց ուրոյն և զատաբար առնեմ զյիշատակութիւնս համառօտ:

Ժ. Յաղագս սրբոյ վանացն եղեն 'ի ներքոյդրեալ շահէտութիւնքն:

1). Ըր զատեաց զսուրբ վանքն 'ի պարտուց առ արտաքինս և ինքն եղև նմա պարտատէր, որ զանձն իւր անդամ առ նոյն վանքն շանաչէր նուիրեալ:

2). Գարման տարաւ տնական կարօտութեան և աղքատութեանն, մինչև հուսկուրեմն զհարկաւորսն լրացուցեալ վայելացոյց:

3). Ըստ յաճախակի խնդրագրութեանց իւրոց հաստատեաց միւսանգամ յամի 1853 զապահարկութիւնն վանքական կալուածոց ազգեցութեամբ միջնորդութեանն Պայծառափայլուհի կնոջ դեսպանին Ռուսաց եղելոյ 'ի Թէհրան, որով առ ամն օգուտ սրբոյ վանացն եղև 150 թուման, և օգուտ յաղագս հասարակութեանն ջուղայու 100 թուման:

5223



4) . Յամի 1853 ցուցանելով զիրաւունս սրբոյ վանացն ՚ի վերայ Հնդկաստանի հայոց , միաբան յօժարութեամբ քահանայիցն հաստատեաց զնոր կարգ սակս աթոռահաս (վերգու) կոչեցեալ արդեանց վիճակաւոր քահանայիցն Հնդկաստանի Հայոց , զմի ամսական տարեկան հասից իւրաքանչիւրոցն՝ ՚ի սուրբ վանքն հատուցանել սահմանադրելով յիւրաքանչիւր ամի :

5) . Օղնութիւնս սրբոյ վանացն որք ՚ի հերուն ժամանակաց հետէ մնացեալ էին առանց նորոգութեան , և էին հրացեալ՝ մաշեալ՝ և կորուսեալ էին զգեղ և զվայելչութիւնս իւրեանց , ձեռն էարկ վերանորոգել , սկսեալ յամի 1855՝ և լրացուցեալ ցամն 1857 . որով նոր կենդանութիւն և գեղեցկութիւն ստացան ամենայն վանքական շինուածք :

6) . Շինեաց դամբար և զկրպակս ՚ի Մէյրան կոչեցեալ հրապարակին , հեռատես լինելով թէ դայ ժամանակ՝ յորում՝ այնոքիկ շինութիւնք զբաւական արդիւնս յաղագս սրբոյ վանացն ունին արտադրել : Շինեաց և զսառուցատուն մի ՚ի մէջ վանքական կալուածոց , զի թէ վանքն և թէ ժողովրդականք իւր՝ յամառան զովասցին ՚ի սառուցոյ կաղմելոյ ՚ի մաքուր ջրոց :

7) . Վանքական կալուածք մնալով անտիրունչ նախքան զժամանակ վիճակաւորութեանն նորին Սրբազնութեան , խոսպանացեալ և սիղապատեալ՝ լեալ էին երկիր կորդացեալ , որոց վասն զկարեւոր հոգատրութիւնս արարեալ , զերծ ըզկալուածան կացոյց ՚ի վերահասեալ ննասուցն : Արտորայք ինչ փոխեցան յայդի ծառատունկ , որոց մինն կոչեցաւ . զաղարարաբաղ . և միւսն . ետխչալի այգի . :

8) . Վնեաց զնորանոր այգիս , և զկալուածս յաղագս սրբոյ վանացն , որք կոչին . Գրիգորեան այգի , Հօսէյնի այգի , Արբեանի այգի , և սաղայ մուլք . որ ընդ մէջ վանքական կալուածոցն կայր : Յետս ստացաւ ՚ի բռնի տիրապետութիւնէն օտարաց զվանքական տունս և զկալուածս , զորս յանտիրութեանն ժամանակի օտարք յափշտակեալ էին , որք են այսոքիկ՝ եկեղեցի Շահվելեանց ՚ի ձեռանէ Մէհեդ

Աբգօբաղի սյլաղգուոյ , տուն մի՝ ՚ի տիրապետութենէ սև Սուփիկի Յովհաննիսեան , տուն մի՝ ՚ի Թէմրազեան ժառանգաւորաց՝ տուն մի , Գաղալեանց կոչեցեալ , և զմնացորդ զին ամնն Բաղդասարեանց :

9) . Օսնտեսական կառավարութիւնն պահեաց ՚ի լիութիւն և յառատ վիճակի , որով թէ եկք՝ և թէ զաւառական համազդիք , նոյնպէս և ժողովրդականք հասարակապէս լիացեալ միսթարէին : Յիւրաքանչիւր կիւրակէ աւուրս սեղանակիցք ոչ պակաս լինէին ՚ի քահանայից և յաշխարհականաց : Յաւուրս յորում՝ շնորհաբաշխութիւնք ձեռնադրութեանց լինէին՝ հարիւրաւորք բաժանորդ լինէին սեղանոյ և հիւրամեծարութեան ՚ի հարստաց և յաղբատաց բա իւրաքանչիւր կարգի : Յաւուր տօնի սրբոյն Յովսէփայ Արեւիթացոյ , որ օր էր հանդիսակատարութեան և ուխտի սրբոյ վանացն , նորին Սրբազնութիւնն մատուցանէր զպատարագ , և բաժանեալ լինէր ամենայն քահանայից՝ կուսանաց՝ և հողերորական դասուցն պաշտօնադրամ , ՚ի յիշատակութիւն ածելով զհոգիս հին և նոր բարերարացն սրբոյ վանին :

10) . Ի վիճակաւորին իւր՝ ցաւօք սրտի ետես զկարօտութիւն սրբոյ վանացն յարժանաւոր զգեստուց , վասն որոյ յաճախակի խնդրադրութեամբ շարժեաց զբարեպաշտութիւնս ծանօթիցն իւրոց և բարեկանաց եղելոց ՚ի Պետրբուրգ , ՚ի Մոսկով և յԱստրախան , յորոց և ընկալեալ մի զինի միոյ զնորքոյ յիշատակեալ պատուական զգեստն՝ որոց արժէք բովանդակին ոչ պակաս քան զմի հազար թուման , նոքօք զաւանդատուն սրբոյ վանացն ճոխացոյց :

Ի վեհազնեայ Տեարց Լաղարեանց , ՚ի Ս . Պ . Բուրգայ , 7 հատ ծանրփայ շուրջառ արծաթի և ոսկեղօծ չափառտիւք , 8 հատ փորան , 6 հատ վակաս , 3 զառ շապիկ սարկաւազաց , 2 մետաքսեայ շապիկ , 5 հատ զառ ուրար , 3 հատ ընտիր սաղաւարտ , 4 հատ շապիկ պատարագչի , 1 հատ զառ սեղանածակոց , 2 հատ զօտի . և 6 զոյդ թեւանոցք :

Յարդ Յովհաննիսէ . Յօնանեան ՚ի Մոսկովայ , մի հատ գեղին զառ խաչանիշ շուրջառ , մի զառ փորան , մի հատ վա-

կաս ընտիր ասղազորժ պատկերօք երկոտասան Առաքելոց , մի հատ զառ շապիկ , մի զառ ուրար՝ մի զառ գօտի՝ մի զոյգ ասղազորժ հողաթափ զառ . մի հատ սաղաւարտ զառ ասղազորժ պատկերօք չորից Աւետարանչաց մինայ՝ և ականակոռն , և մի հատ քօղ սկւոյ :

ՅԱ՛ղա Յովհաննիսէ Սայեաթնովայ՝ յԱստրախանայ մի մախմուռ և զառ շուրջառ , մի փորան , մի մախմուռ շապիկ , 2 ուրար՝ , մի գօտի մախմուռ , մի հողաթափ . մի սաղաւարտ , մի սեղանձածկոց զառ շտօպ , և մի աղլուխ Աւետարանի :

ՅԱ՛ղա Պօղոսէ Ահարօնեան յԱստրախանայ մի շտօպ զառ շուրջառ , մի փորան , մի զոյգ թւանոց , մի վակաս , մի շապիկ զառ , մի շապիկ պատարագչի , մի ուրար , մի գօտի , և մի զոյգ հողաթափ :

ՅԱ՛ստրախանայ յեկեղեցական գոյից վեց շտօպ զառ շուրջառ ըստ հրամանի վեհափառ Ներսէս Աթոռակոնի :

ՅԱ՛ղա Ստեփաննոսէ Մօլօղծովենց՝ յԱստրախնայ , մի ճերմակ զառ շուրջառ , մի փորան , մի վակաս , մի ճերմակ զառ շիկ , մի ուրար , մի մախմուռ եմիփորան , և 12 հատ մմակալ :

11) . Յամի 1856 առաքեաց զնուիրակութեան կոնդակ՝ ի շնորհատան և պատուիրեաց Սրբակրօն Տէր Մարտիրոս խաչակիր Աւագ քանային Տէր Յովհաննիսեան նուիրակին սրբոյ վանացն , զի շանասիրեցէ յազազս ապազայ միութարութեան վանին առնել զհիմնաւոր տնօրէնութիւն ինչ :

Համաձայն բարեմիտ նպատակի նորին Սրբազնութեան Հայ Ժողովուրդականք Չաւայ սահմանի՝ Վերմ յազգասիրութիւն՝ և ՚ի սէր հայրենեացն ունելով զվառուն յօժարութիւն՝ հանգանակեցին զգումար նուիրակութեանն ցտանն հազար ուրփին , յոր կցորդեաց և յատուկ նուիրատուութեամբ զերիս հազար ուրփին Պարոն Մանուկն Յարզանանեան՝ այր բարեգործութեան գործովք վկայեալ , որով զնեցաւ Մթերանոց մի յանուն սրբոյ վանացն ՚ի Բթախայ քաղաքի , որոյ տարեկան արդիւնք շարունակաբար՝ ժամանեն ՚ի վանքն յիւրաքանչիւր ամի մերձ 200 թուման :

12) . Յամի 1856 յորդեալ յոյժ գարնանային հոսանաց

Ջայանդարութ զետոյ Սպահանայ՝ տապալեաց զորմունս Նուրաշէն այգւոյ սրբոյ վանացն , և ջուր գետոյն ընթանայր ՚ի մէջ նոյն այգւոյ : Եւ ըստ որում թունութիւն ջրոյ գետոյն այնորիկ անցեալ էր զլնովին ՚ի կողմն յիշեալ այգւոյ , և յամենայն ամի ՚ի գալ հոսանացն քերելով ընդ որմնին այնր այգւոյ , շարունակ հասուցանէր վնաս փլուզանելոյ որմոցն , վասն որոյ Նորին Սրբազնութիւնն յետ ունելոյ զհարկն շինելոյ կործանեալ որմոցն , մտադիր եղև ճար առնել զի ջուր գետոյն հեռացի յորմոյ այնր այգւոյ , որպէս զի մի ևս յամենայն տարի տապալելով որմոցն՝ աղբիւր վնասուց և ծախսարարութեանց ինիցի սակս Անացն : Ուստի եդ զգետակապ թուրք ինչ ընդ մէջ գետոյն և վանքական այգւոյն , որպէս զի ջուրն թեքեալ զընթացս իւր՝ ՚ի միւս կողմն անցանիցէ : Արդարև ծանրացաւ գործ շինութեանն այնորիկ , և եղեն մեծամեծ ծախսարարութիւնք , այլ վերջապէսն աջողեցաւ գործն՝ և մարթ եղև զջուր գետոյն ՚ի միւս կողմն դարձուցանել : Օգուտն ՚ի գործոյ անտի ոչ միայն եղև ազատ մնալն նոյն Նորաշէն այգւոյ ՚ի փնասուց գետոյն՝ այլ և կից նոյն այգւոյ մնաց գետին բաւական տարածութեամբ ՚ի ցամաքել գետոյն , ուրանօր ձգեաց զանտառ ուռեաց և փշտի , որոց թիւ՝ ոչ լինի պակաս քան զտասն հազար , որք յաղազս տեղոյն աւազուտ և մերձ ՚ի ջուրս գետոյն լինելոյ՝ աճին և դարգանան մեծաւ արագութեամբ , որովք ոչ միայն զծախս գետակապին մարթ է ՚ի ձեռս բերել՝ այլ և լինի այն անտառ աղբիւր նոր մտից և արդեանց սակս Անացն սովին պայմանաւ եթէ կառավարութիւն Անացն հոգ տարցէ զնոյն ապահով պահպանել :

Սյուրբիկ եղեն գլխաւոր արգասիքն օգտակարութեանց սրբոյ վանացն ՚ի ժամանակս Առաջնորդութեան Սրբազան Թադէոս արք եպիսկոպոսի , թէպէտ գոն այլ ևս յաճախ գործողութիւնք նորա բարեկարգող և օգտակարք , որք ՚ի պատճառս համառօտութեան՝ ոչ յիշատակեցան աստանօր :

Ժք . Բարեկարգութիւնք և շահ յաղազս եկեղեցեացն ջուրայ եղեն յսոքիկ՝ զորս ՚ի ներքոյ նշանակեմ :

1) . Յառաջնում ամի Առաջնորդութեանն ուշադրութիւն արարեալ յաղագս եկեղեցեաց կառավարութեան կարգեաց սակս իւրաքանչիւրոցն զերկօսին կառավարիչս , հաստատեաց զկարգ բարեկարգ վարչութեանց , նշանակեաց զաղբիւրս մտից և արդեանց , և ետ իւրաքանչիւր եկեղեցւոյ կառավարութեանն զտուճար ժապաւինեալ և Առաջնորդական կնքով ամրափակեալ . յորում զրեցան ելլմուտք եկեղեցեացն : Ի բարեկարգութենէ անտի եկեղեցիք պայծառացան ըստ լուսավառութեանց մասին , հարստացան 'ի մասին եկեղեցական զարդուցն և սպասուց , և ժողովուրդոցն լումայասարաս տրօք եկեղեցիք ըստ իւրաքանչիւր կարի ստացան զխմորինչ դրամոյ 'ի պէտս արգի և սպազայ կառավարութեանց իւրեանց :

2) . Որոշեաց զարդիւնս եկեղեցւոյն 'ի հասից Քահանայիցն , նշանակելով զլուսադին՝ 'ի մկրտութեան և յամուսնութեան , 'ի հանգուցելոց զհոգեբաժին՝ զգլխադարբ՝ և ըզլուսադին կերոն վառելոյ : Կսակ զլուսադինն խաչ հանելոյ՝ դոնաբացման՝ վարագոյր քարշելոյ՝ գանձանակի և , որք յառաջ քան զԱռաջնորդութիւն Սրբազան Թադէոսարք Եպիսկոպոսի խառն էին ընդ հասից քահանայիցն , և եկեղեցիք զուրկ յարդեանց միշտ 'ի մէջ աղքատութեան և անշուք կարօտութեան թարթափէին :

3) . Յամենայն ամի անձամբ անձին արար զվերադիտութիւն եկեղեցական հաշուոց և կառավարութեանց , վարձատրելով զբարեջան կառավարիչս և յարիութիւն խրախուսելով զդանդաղիտան , որով հաստատեալն իւր կարգադրութիւն մնաց 'ի շարունակութեան , տալով զակնկալեալն զարգասաւոր զպտուղս :

4) . Եստես նորին Սրբազնութիւնն զի եկեղեցիք որք 'ի Զուղա , զուրկ են 'ի քաղցր երաժշտութենէ եկեղեցական երգոց և շարականաց , վասն որոյ ինքն զԹանրութիւն վարժապետութեան յանձն առեալ զամս երկուս զօրհանապաղ երկու ժամ պարապեցաւ 'ի դասատուութիւն ձայնից եկեղեցական երգոցն , մինչև մարթացաւ մուճանել յեկեղեցիսն

զքաղցրութիւն եղանակաց ժամերգութեան :

5) . Կալաւ սովորութիւն վաղ քաջ ընդ առաւօտն առնել վերադիտողութիւն եկեղեցական վարչութեանց , զքննելով թէ ոյք ոմանք 'ի քահանայից ժիր և ոյք պղերդ 'ի պաշտամունս իւրեանց դտանին , որով քահանայք զգուշացեալ՝ իւրաքանչիւր ոք 'ի ընու զպարտս պաշտամանցն եղև փութաշան :

Ժդ . () Գուտք՝ որք ընձիւղեցան յաղագս հասարակութեանն Հայոց եղելոց 'ի Զուղա , եղին այսօքիկ :

1) . Վիտաց նորին Սրբազնութիւնն զի անիրաւութիւն մեծ լինէր ժողովուրդականաց 'ի մասին հարկացն առ արքունիս , ոչ 'ի Տէրութենէ կողմանէ՝ այլ 'ի մասին անհաւասար չափուց կալուածոցն : Վասն որոյ գուն գործեալ յամի 1852, հրամանաւ քաղաքական վարչութեան վերստին չափել ետ զամենայն հարկատու կալուածս Զուղայ , և զբաժին այլազգի կալուածատեարցն որոշեաց 'ի բաժնէ հայոց , որով Հայք ազատ մնացին 'ի ծանրութենէ այլազգեաց հարկին՝ զոր յառաջ քան զայն բեռնաւորէին 'ի վերայ Հայոց , և արդարութիւն հաւասարութեան ել յերևան , որով և զուրկանքն 'ի միջոյ անհետացաւ և սակ հարկին 'ի 27 էն՝ էջ ց14. և մերթ ց16 առ իւրաքանչիւր ջրիքն :

2) . Վիտաց նորին Սրբազնութիւնն , զի շոյալութիւնք փրաս մեծ հասուցանեն աղքատ և անաշխատ հասարակութեանն Զուղայ , վասն որոյ և իշխանաբար և համոզանօք հոգ տարաւ զառաջս ունել այնմ , որով տօնակատարութեան ինջոյից ծախսարարութիւնք անհետ եղեն , ծախք հարսանեաց 'ի չափաւորութիւն մտին թեթևացեալք 'ի շոյալութեանցն՝ որք վաղ ժամանակաց 'ի սովորութենէ մնացեալ էին , ծախք յուղարկաւորութեան ննջեցելոց համեստացաւ , բարձեալ եղև սովորութիւնն զհաց և զըմպելիս 'ի վերայ գերեզմանաց ննջեցելոցն տանելոյ , որով անկարգութիւնք անպակաս լինէին , և այդպէս ջանադիր եղև զհասարակութիւնն թեթևաբեռն առնել 'ի ծանրութենէ նոյնօրինակ յուճպէտս ծախսարարութեանց :

3) . Վիտաց նորին Սրբազնութիւնն զի պապականութիւնն խրամատ մեծ առնէր ամբողջութեան Հայոց հասարակութեանն ջուղայ, վասն որոյ կալաւ զխօհեմագոյն շաւիղ տրկարացուցանելոյ զազդեցութիւնս պապական կուսակցութենն, որ աջողեալ նմա՝ նուազեցաւ ձայն և ներգործութիւն նոցին հոգևորականաց, և հետտեալք ոմանք պառնալ սկսեցին յեկեղեցի իւրեանց սուրբ :

4) . Վիտաց նորին Սրբազնութիւնն թէ փնաս մեծ ունի հասանել ժողովրդեան իւրում՝ ի դէնպետաց քաղաքիս, եթէ ունիցին նոքա կամք փնասելոյ, յորոց զօրաւորագոյնն է դէնպետն Իմամ ջումայ, վասն որոյ յօրէ թեմակալութեանն իւրոյ կալաւ ընդ նոսա հասարակապէս՝ և ընդ Իմամ ջումայն մանաւանդապէս զյարաբերութիւն բարեկամական, որպէս զի փոքու իւրք մարթացի զսիրտս նոցա քաղցր առնել յօգուտ ժողովրդեան իւրում: Վասն որոյ ընծայիւք շահէր զնոսա տալով զմասնաւորս՝ սակս զմեծամեծս շահելոյ, և ի ձեռն Գերագանցեալ Նիկոլայ Անդրեանովիչ Անիչկով Գեսպանին Ռուսաց խնդրարկու լեալ, յամի 1857 արժանացոյց զգենպետն Իմամ ջումայ Ռուսաց կայսերական պարգևի, որ էր տուփ քթախոտոյ ականակուռ, ունելով ի վերայ իւր ըզպատկեր կայսերն :

5) . Վիտաց նորին Սրբազնութիւնն թէ ըստ արդի ըուսաւոր կառավարութեան Պարսից Տէրութեան ոչ լինի օգուտ ՚ի գործառնութիւնս իւր կցորդել զձայն Գեսպանի Ռուսաց, քանզի Տէրութիւնն Պարսից ցանկայ և պահանջէ զի իւր հպատակ ժողովուրդք յաղազս ո՛ր և իցէ գործոց իւրեանց դիմեցոցն առ ինքն ուղղակի, առանց միջնորդ կամ միջամուխ առնելոյ զԳեսպանս օտար Տէրութեանց, վասնորոյ նորին Սրբազնութիւնն յօգուտ ժողովրդոց իւրոց յամենայն դէպս խնդրարկութեանց՝ ինքնին դիմէր առ Տէրութիւնն Պարսից, ամփոփ սլահելով զյարաբերութիւնս իւր ընդ Գեսպանին Ռուսաց ՚ի մէջ մասնաւոր իրողութանց, ըստ այլմ սիրելի եղև նա յաչս Պետութեանն Պարսից, և կարևոր խնդրարկութիւնք նորա ոչ մնային ապարդիւն :

6) . Վիտաց նորին Սրբազնութիւնն, զի աղքատութիւն օր լը օրէ յաճախեալ ՚ի ջուղա, քաղցկեղաբար ճարակի, վնյ յամի 1852՝ խնդրարկու եղև Հնդկաբնակ Համազգեց սահմանել զգանձանակ մի յանուն ջուղայ աղքատաց, և ըզկամաւոր տուրս իւրենց շնորհել անդ մինչև մարթ իցէ կազմել զբարամագլուխ ինչ, որոյ տարեկան տոկոսեօքն լիցի կարեկցութիւն աղքատաց ջուղայ: Ի Հնդկաբնակ համազգեաց չեղև մտաբրութիւն այնմ առաջարկութեան, իսկ բարեպաշտ Համազգիք մեր որք ՚ի քալայ՝ ՚ի կատարումն նոյն բարեմիտ գործոյ տալով զուշադրուի իւրենց, ցամն 1861 հանգանակեցին զհինգ հար ունիս, որում ետ կցել նորին Սրբազնութիւնն նաև զչորս հար ունիս յանուն ջուղայ աղքատաց հրիտակեալն յԱղա Յովհաննանէ Ելիազն, տնօրինելով զի գնեացի նովին զթրաւ անշարժ կալուած ինչ ՚ի Բթաւիայ յանուն աղքատաց ջուղայ, և տարեկան արդիւնք այնր առաքեսցի ամ լը ամէ ՚ի սակաւ մի զովացումն տապոյ աղքատուէ հոցին ջուղայ: Սահմանեաց նաև զարկղ աղքատաց ՚ի ջուղայ, տալով զայն հոգաբարձութեան չորից արժանահաւատ անձանց, գրելով և զբարեմիտ կանոնս յաղազս վարչութեան նոյն արկեղ:

7) . Վիտաց նորին Սրբազնութիւնն թէ միթարութիւն ջուղայ հասարակութեան կախումն ունի զլիսաւորապէս զչնորհաց նպաստից և օգնականութեան ջուղայեցի ազգասիրաց եղելոց ՚ի Հնդիկս կամ յայլ հեռաւոր քաղաքս, վասն որոյ անմոռաց ուշադրութեամբ սակս օգտի իւրաքանչիւրոց իւրոց ժողովրդականաց նամակագիր լինէր ՚ի հեռաւոր տեղիս, յոմանց զկարեկցութիւն սակս տնանկ գերբաստանաց՝ յոմանց զնպաստ վասն իւրեանց ընտանեաց՝ և յոմանց զայլ աղքային օգնականութիւնս խնդրելով, որոյ պատճառաւ թիւ տարեկան թղթագրութեանց նորին ոչ լինէին պակաս քան զ700, թէպէտ և երբեմն ժամանէին ց850 և յաւելի ևս: Ըստ այդպիսի բարեյորդոք ջանից ոչ սակաւ միթարութիւնք ՚ի ջուղա ժամանէին ՚ի զանազան յաղբերաց: Տեսեալ հասարակութեանն զնորին Սրբազնութեանն այնօրինակ ժողովրդասէր երկարասիրութիւն՝ յամենայն խնդիրս կտակաց կամ

ժառանգական իրաւանց դիմէին խնդրարկու առ նա . որ հոր-
 դեալ նոցա զգլխըն շաւիղ՝ և զամենայն ծանրութիւն վաս-
 տակոցն ՚ի վերայ իւր ստանձնեալ , ժողովրդոցն իւրում սա-
 տալէր և ըստ այնմ՝ մասին : Մինչև անդամ յԱստրախանայ
 խնդրարկու դիմեցին առ Նորին Սրբազնութիւն յաղագոս հը-
 նացեալ գումարաց ինչ կտակաց մնացելոց ՚ի Հնդկս , և Նորին
 Սրբազնութիւն ոչ դարձոյց զերես իւր ՚ի կատարումն ածե-
 լոյ զնոցա խնդիրս :

8) . Վիտայ Նորին Սրբազնութիւնն զի եթէ ՚ի մէջ
 գետապնատանց օտար Տէրութեանց որք կան առ դրան Պար-
 սից , կամ ՚ի պաշտօնի ծառայութեան Պարսից Պետութեանն
 իցեն ոմանք ՚ի Զուղայիցի երիտասարդաց՝ կարող են զմեծա-
 մեծ օգտակատարութիւնս առնել յաղագոս հայրենեաց իւր-
 եանց և հայրենակցացն , զամս երկու յաճախակի խնդրար-
 կութեամբ ընկալաւ զբարեյօթարութիւն վերահանայ Տեարց
 լազարեանց յաղագոս ՚ի լազարեան ճեմարանն Մոսկովայ ա-
 ռաքելոյ զերկու տղայս ՚ի թիւս ձրիավարձ աշակերտացն ,
 մինչ հուսկ ուրեմն յամի 1857 առաքեաց զերկու տղայս , և
 յամի 1860 առաքեաց նաև զտղայ մի ՚ի Խաչիւղեան Գաբոյն
 Թէոդոսիայ , զձախս ճանապարհորդութեանն նոցին , վասն
 չքաւորութեան ծնողաց նոցին , վճարելով ՚ի Անաքական
 հաշուոյ :

9) . Համի 1853 , ՚ի պատճառս մանկութեան Սա-
 մեանց տան որ ՚ի Մադրաս՝ փակեցաւ ՚ի Զուղա Ամենափրկ-
 չեան Գաբոյն , որ հիմնեալ կառավարիւր արդեամբ կտակեալ
 գումարոյ արժանայիշատակ Պարոն Գրիգորի Սամեան , վասն
 որոյ ՚ի թոր խոցեալ Նորին Սրբազնութեանն՝ խնդրարկու-
 թեամբ և ՚ի ձեռն բարեկամաց իւրոց միջնորդութեանց այն-
 չափ ջան ՚ի գործ եղև մինչև մարթացաւ զերկու Գաբոցս
 փոխանակ միոյն հաստատել ՚ի Զուղա նպատիւք բարե-
 պաշտուհի Տիկին Մարիամու Եակոբ Զարութիւնեան և Ազ-
 գասէր Պարոն Մարգարի Սուքիասեան : Գրեաց զկանոնս յա-
 զագոս բարեպէս կառավարութեանց նոյն Գաբոցաց , յանձն
 էառ զպարտս վերատեսչութեան՝ զոր բարեխնամ փութով

կատարէր ՚ի ժամու և ՚ի տարաժամու ՚ի Գաբոցսն այնսիկ
 լինելով այցելու : Նոյնպէս և յաղագոս Գաբոցին Օրիորդաց
 հաստատելոյ յամի 1858 հայրենասէր տրօք Պարոն Մանու-
 կայ Զորդանանեան , և յաղագոս սուրբ Պողոս Գաբոցին ՚ի Սան-
 գիբարան ՚ի գաւառին Փէրիայ եղելոյ , որ հաստատեցաւ յա-
 մի 1859 արդեամբ Աստուածասէր Պարոն Պողոսի Անդրէա-
 սեան , զամենայն ջան և զվաստակ յանձն առնէր յաղագոս
 հիմնաւորապէս հաստատութեան և բերեկարգութեան նոցին :

10) . Սենելով նպատակ Նորին Սրբազնութիւնն զմե-
 ժամեծ արտօնութիւնս ստանալոյ ՚ի Տէրութեանն Պարսից
 յաղագոս օգտի իւրոյ ժողովրդականացն , նախ յամի 1854 . և
 ապա 1858 . զնաց ՚ի Թէհրան ՚ի դուռն Տէրութեան , և ա-
 բար զքանի յօդուածս խնդրանաց , յորոց սակաւ մասն ընկա-
 լան զկատարումն և մեծի մասանցն չեղև խնամածութիւն ՚ի
 Տէրութեանն : Այլ Նորին Սրբազնութիւնն վառ ՚ի սրտի իւ-
 րում ունելով զսէր ժողովրդոցն իւրոց , յամենայն ՚ի կարե-
 որացն ոչ խնայէր զճգունս իւրոյ խնամատար վաստակոցն :

11) . Մինչ ետես Նորին Սրբազնութիւնն թէ յոչ լի-
 նելոյ հոգևոր Գաբոցաց և յոչ փոյթ տանելոյ ցանկացօ-
 դացն ընդունել զկարգ քահանայութեան՝ ուսանել նախ ըզ-
 հարկաւոր գիտելիս քահանայական պաշտօնի , ըստ մեծի մա-
 սին զուրկ գտանին յուսմանց՝ կարգադրեաց զի տիրացուք
 ցանկացօք քահանայութեան կարգի նախ ուսանիցին ՚ի Գրա-
 բոցս Զուղայ մանաւանդ գաւառականքն և ապա վարժեո-
 ցին ՚ի սուրբ Աննո յոտս իւր կամ Արդապետին , և այնպէս
 մինչփոքր ՚ի շատէ կրթեալ լինէին՝ շնորհէր նոցա զաստի-
 ճան սարկաւազութեան , և ապա յետ հմուտ լինելոյ նոցա
 ուսմանց՝ արարողութեանց՝ և պաշտամանց քահանայագոր-
 ծութեան՝ շնորհէր նոցա զկարգ քահանայութեանն : Ապա
 զնորընծայսն պահէր ՚ի սուրբ Աննին երկու քառասորեայ
 ժամանակս , և ինքնին այցելու լեալ նոցա՝ տպաւորէր ՚ի-
 միտս նոցին զարժանամեծարութիւն քահանայական կարգի ,
 և դարձեալ ուսուցանէր նոցա զհարկաւոր գիտելիս ՚ի մասին
 մասանց հաւատոյ , եկեղեցական կարգաց , և ծիսական արա-

րողութեանցն, ամենեցուն զնոցին բացատրելով զպատճառսն 'ի խոր դրոշմէր զասացեալսն իւր 'ի միտս նոցա :

12) . Մար և զմեծամեծ օգնականութիւնս բազմաց 'ի ժողովրդականացն իւրոց, միջամտութիւն արարեալ 'ի գործս իւրաքանչիւրոցն, և զերծ պահեաց զնոսս 'ի վերահասեալ վտանգիցն, զորս մի առ մի նկարագրեալ կարի երկարութեամբն անցանէր քան զչափն նպատակի իմոյ, վասն որոյ զգլխաւորագոյնս 'ի նոցանէ միայն յիշատակելով՝ զանց զբազմօքն առնեմ :

13) . Փրկեաց զպատանին Յարութիւն Մարտիրոսեան յամի 1852 'ի մահուանէ և յորոգայթից ուրացութեան՝ յոր դիմեալն էր տղայամտութեամբ, և ընկալեալ էր զանունս "Աբդօւլայ", և ապա սորջացեալ դրաձ առնել կամէր, ուստի և դեմպետն վճռահատեալ էր քարկոծ արարել սպանանել զնա :

14) . ՕՏէր Սիմէօն քահանայն Տէր Մաթէոսեան փրկեաց 'ի վտանգէ մահապարտութեան յամի 1854. զի ամբաստանեալ եղև նա որպէս օրինաց հայոյիչ, և 'ի դեմպետէն գրեալ եղև վճիռ սպանութեանն նորա :

15) . Ղզատեաց և զԲեթղահէմն Ակոնի յամի 1857, որ նոյնօրինակ որպէս օրինաց հայոյիչ անկեալ էր յորոգայթս թշնամեաց :

16) . Ղզատեաց զԳեռահաս զորդին Աղէքսանդրու, որոյ մայր յամի 1862 ուրացել զհաւատ իւր կամէր հրամանաւ դեմպետին զորդին իւր տանել առ ինքն, ուրանօր անշուշտ և նա ուրանալ 'ի հաւատոցն իւրոց ունէր : Ըստ այսմ մասին մերձ էր յառնիլ մեծագոյն խռովութեանց, զի դեմպետն մտադիր էր զայն երեսայ տանել բռնի, և Նորին Սրբազնութիւնն հաստատեալ էր 'ի մտի իւրում զամենայն զվտանգ յանձն առնուլ 'ի պաշտպանութիւն անմեղ մանկանս այնորիկ :

17) . Յամի 1862 կորզեաց զԶաքարայ անուն տղայն երկոտասանամեայ՝ հասակաւ 'ի ձեռաց Գեմպետին Շիխայ. զի նոյն տղայ աչակերտ գորով Յովսեփայ Յօնանեանց ոստայնանկի՝ յաւուր միում երկուցեալ 'ի վարպետէն իւրմէ դիմէ 'ի կողմն

զետոյ, ուրանօր թափիչք սպիտակացուցանեն զղալամքարս, և անդ 'ի թափչաց անտի յափշտակեալ և տարեալ առ Շեթ Մահամադ Բաղէր դեմպետ՝ տուեալ էր զգաւանուի մահմեդականութե և ընկալեալ էր նաև զթլպատուին : Իբրև իրազեկ այնմ եղև նորին Սրբազնութիւն յետս պահանջեաց զայն տղայ իբրև անչափահաս, և վերջապէսն ջանասիրեալ յետս ընկալաւ զնա և 'ի Փէրիայ գաւառն յղելով ապահովեաց :

18) . Պաշտպան եկաց որբ ժառանգին Պարոն Գէորգայ Գուրադեան, և ապահովեաց հզօր պաշտպանութեամբ զըստացուածս հօրն սակս որդւոյն, զոր իւրացուցանել կամէր իշխան օք պէսպէս պատճառանօք :

19) . Սպարտս Յովհաննու Գէորգեան առ արիւնդու ռուշտայլազգի պարտատեարսն իւր վերջաւորեց, զչորս սակս տասանցն հատուցանելով, և զգաւակունս նորա ազատեաց 'ի ներդութեանէ պարտատեարցն :

20) . Խնամ կալաւ յաղաքս ստացուածոց քաղմաց որբոց և այրեաց, և պաշտպանեաց զնոսին կամ իւրով տեսչութեամբ կամ առ այլ հաւատարիմ անձինս յանձն արարեալ, որով ստացուածք քաղմաց անկորուօտ մնացին 'ի միութարութիւն անտերունչ զաւակացն իւրեանց :

21) . ԶՊարոն Սուքիաս Բեթղահէմեան, որ անկեալն էր 'ի ներքոյ չարաչար զրպարտանաց այլազգեաց, և վտանգ մեծ զնովաւ պատեալ կայր՝ զերծոյց միջնորդութեամբն իւրով 'ի վերայ հասեալ փորձանաց անտի :

22) . Ոչ դարձուցանէր զիբես իւր առանց կարեկից օգնականութեան, յորոց առ ինքն դիմեալ զկաթիլ մի ջրոյ 'ի զովացումն իւրեանց տառապաղին ներդութեանցն հայցէին :

23) . Ոչ անմասն մնացին և գաւառական հայ ժողովրդականք 'ի խնամոց և յարգասեաց Առաջնորդական տեսչութեան Նորին Սրբազնութեան, յորոց զգլխաւորագոյնս միայն աստանօր 'ի յիշատակութիւն ածեմ :

24) . Նախ քան զժամանակ վիճակաւորութեան Սրբազան Թադէոս արքեպիսկոպոսի, գաւառական հայ ժողո-

վրդականք կային որպէս հօտ անխնամ ըստ հոգևոր կառա-
վարութեանց մասին: Ուստի Արհին Թագէտս հոգ կալա-
նախ որոշել զորք 'ի խոհեմագունից քահանայիցն իւրաքան-
չիւր գաւառաց, զորս կարգեաց գործակալ յիւրաքանչիւր
սահմանի, և ետ նոցա զկարգս և զկանոնս ըստ սահմանադր-
ութեանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և պատուէր
ետ նոցա արթուն հսկողութեամբ զժողովուրդսն 'ի ներքոյ
կարգի և կանոնաւոր վարչութեան պահել, որով ուղղու-
թիւնք և բարեկարգութիւնք ոչ սակաւ մտին 'ի ժողովուրդս
գաւառացն ըստ հոգևոր պարտաւորութեանց մասին:

բ). Օստահակ և զտգէտ քահանայս ոմանս նոյն գա-
ւառաց մերթ յանդիմանութեամբ և մերթ համոզական իւր-
րատուք յուղղութիւն և 'ի կանոնապահութիւն ընտելացոյց,
տալով զխրատս իւրաքանչիւրոցն բարեոք վերատեսչութիւն
ունել 'ի վերայ հոգևոր գնացիցն ժողովուրդոց: Զերիս 'ի տը-
գիտագոյն քահանայիցն՝ որք ոչ զգիրս գիտէին և ոչ զզօ-
րութիւն Աստուծոյ, 'ի կարգէ լուծեալ ընդ աշխարհականս
համադասեաց, որով եղև ահ և խրատ հեղզացիլոցն յու-
սումնասիրութեան և 'ի փոյթս բարեոք վարչութեան պաշ-
տամանց իւրեանց ջանասիրել:

գ). Օգաւառացն տիրացուս որք կարգի քահանայ-
ութեան ժամանիլ տեսչային, նախ 'ի կրթութիւն ուսմանց
և եկեղեցական հարկաւոր գիտելեաց առաջագրէր ստանալ
զհմտութիւն, և ապա յետ տեսանելոյ զնոցա կարևոր յա-
ռաջագիմութիւն՝ արժանի առնէր քահանայութեանն կարգի,
պահելով զնոսա զերկու քառասնորեայ ժամանակս 'ի մէջ
սուրբ վանին, և ինքնին վարժապետելով նոցա քաջ հրա-
հանգէր զնոսա 'ի գիտել զարժանաւորութիւն քահանայու-
թեան սուրբ աստիճանի, և խելամուտ առնէր զինչ անկ և
պատշաճն էր պաշտօնի նոցա: Ըստ այնմ եղեն բարեկիրթ
քահանայք ոմանք 'ի մէջ իւրաքանչիւր գաւառաց, որք օ-
գուտ մեծ սակս իւրեանց ժողովրդականացն եղեն, թէ քա-
րոզելով նոցա զբանն կենաց, և թէ զորդիս նոցա կրթելով
յուսումն ընթերցանութեան:

դ). Սնէր մտադրութիւն սակս բարորութեան նոցա
հասարակապէս, վասն որոյ 'ի դէպ լինիլ ներութեանց կամ
հարստահարութեանց 'ի խանից կամ յայլաղբի գաւառականաց
առ իւր ժողովրդականսն, առանց փոքու իւրիք զանցառու-
թեան բողոք բառնայր նախ առ քաղաքական կառավարու-
թիւնն Ապստանայ, և ապա 'ի ծանրանալ խնդրոյն՝ բարձ-
րացուցանէր զձայն իւր ցբարձրագոյն Դուռն վեհապառ Շա-
հին, որով նանրացուցեալ զհարստահարութիւնս թշնամեացն՝
զժողովրդեանն իւրոյ զիրաւունս պաշտպանէր: Ի թեւարկու-
թեան անտի ահարկու և ակնածելի եղև անուն 'նորին Սըր-
բաղնութեանն 'ի մէջ խանից և իշխանաց գաւառացն, որք
երկուցեալ 'ի նմանէ կարճեցին զձեռս իւրեանց 'ի հարստա-
հարելոյ զժողովրդականսն Հայոց:

ե). Ի փէրիայ գաւառի 'ի համակերտ գեղջ Աիրակո-
սեան և Թորոսեան անուանեալ երկու եղբարց մեծ գերդաս-
տանք յերկու հակառակ կուսակցութիւնս քաթանեալ ցայն
աստիճան յիսային ընդ միմեանս՝ մինչև զգունդս յայլաղբեաց
կաղմեալ վարձուք՝ ամսորեայ ժամանակօք պաշարէին զամ-
բոցս միմեանց, և մարտ տուեալ զձեռս իւրեանց յարիւն ըս-
պանութեանց շաղախէին, որոց գեղջիական կամակորուեցն
յերկուց կուսակցութեանց անտի զօհ եղեն մարդիկ թուով
իբրև ութ և տասն: Այդպէս զայրանայր կասաղութիւն նօ-
ցա և սաստկանայր յին և մաքառումն, որովք կորուստ և
աւեր երկուսին նոյն մեծ գերդաստանացն հուպ ընդ հուպ
մերձենայր: Յառաջնումն ամի թեմակալութեանն Սրբազան
Թաղէոս արք եպիսկոպոսի դարձեալ 'ի յուղիլ խառովու-
թեան իմիք 'ի մէջ նոյն կուսակցութեանցն՝ Ռէհիս Մկրտում
քարածեծ լիալ մեռու, զհարուածն 'ի Թորոսեանց կողմէ
ընդունելով: Նորին Սրբաղնութիւնն կոչեաց զերկուսին կու-
սակցութիւնսն 'ի ջուղա, և զաւուրս իբրև քսան քարոզե-
լով խրատելով և աղաչելով իսկ զնոսա 'ի խաղաղութիւն և
'ի սէր ընդ միմեանս զիջանիլ համոզանօք էած 'ի հաւանութի:
Ջայն այնպէս արարեալ քաղաքական օրինօք վճռահատեաց
և արար զվախճան արմատական վիճանցն նոցին, որ սակս

կալուածոց իւրեանց էր, և ապա զթուղթ դաշանց և ապա-
 հովուութեան 'ի միջինոցա հաստատեաց, և կամելով իսպառ-
 արմատախիլ 'ի միջոյ նոցա առնել զատելութեանն արմատ՝
 տնօրինեաց զի թորոսեան գիրգաստան մեկնեալ 'ի գեղջէ ան-
 տի՝ այլուր 'ի մէջ հեռաւոր գիւղորէիցն փէրիայ՝ հաստա-
 տեսցէ զնիստ ընակուութեան իւրոյ: Ջկնի զամենայն ինչ խո-
 հեմաբար կարգադրելոյ՝ զարս երկոսին կուսակցութեանն
 'ի Տաճար սրբոյ վանացն մուծեալ ազդու վարդապետու-
 թեամբ տպաւորեաց 'ի միտս նոցա զսիրոյ և զեղբայրասիրու-
 թեանն զմեծ արանս, և զատելութեանն և զմախանայ զբժըն-
 դակութիւնս, որովք զսիրտս նոցա քարեղէնս ճմլեալ՝ ապա
 ետ զերգումն ահաւոր յաղագս հաստատուն մնալոյ 'ի նմին
 սիրալծորդ խաղաղութեան իւրեանց: Անդ էր տեսանել, թէ
 որպէս 'ի գորով եղբայրսիրութեան շարժեցան սիրտք՝ որք
 սակաւիկ մի յառաջ ծարաւիք էին արեան միմեանց, որպէս
 յարտասուս լուցան աչք՝ որք դոյզն ինչ յառաջ զբարկու-
 թեան և զքինու բոց ցայտէին, և ձեռք որք երազունք էին
 'ի հեղուլ զարիւնս՝ զիւրիւր 'ի նմին ժամու ողջագուրաբար
 զպարանոցաւ միմեանց արկեալ՝ համբուրէին և լային 'ի մի-
 մեանց վերայ: Բարէ ազդեցութեան շնորհացն Աստուծոյ: Ջի
 յայնմ ժամու ատելութիւնն՝ 'ի սէր, խէթն՝ յանիշաչարու-
 թիւն, և կիրք կատաղի վրէժխնդրութեանն՝ 'ի հեղահամբոյր
 փոխարկեալ քաղցրութիւն, եղին նոյն մարդիկ ըստ օրինակի
 առն՝ որ 'ի լէգէօնայ դիւացն շնորհիւն Յիսուսի զերծեալ ըզ-
 գաստացաւ: Եկաց և մնաց նոյն հաշտութիւն և խաղաղութիւն
 'ի նոսա մինչև ցժամանակս Առաջնորդութեանն Սրբազան
 Թադէոս արք Եպիսկոպոսի (8), որ արթուն գիտողութեամբ

(8) . Ջկնի վախճանի նորին Սրբազանութեան Թորոսեան կո-
 ռնից Բարձրաւ Ղեկուի հայաստանութեան մեթոքեալ՝ յամեանն Աղբիւն
 Դեմոնի երկոսն 'ի նոյնի 'ի Թեհրան 'ի նորագել զայն վէճ, այլ
 ըստ օրինի հասարակեալ Բողբն վերջնորդութեան և դաշանց հոգո-
 յակութեանն Սրբազան Թորոսեան արք Եպիսկոպոսի՝ նախորդողն
 յանի զհայաստանեայտեանն նոյն:

հոգ տանէր, զի մի նոր իմն առարկայք վիճից 'ի նոսա ընձիւ-
 դեսցին, և զընձիւղեալն իսկ անհետ առնէր խաղաղասիրու-
 թեամբ:

(9) . Յամի 1856 սպանեալ եղին 'ի Չարմահալ դաւա-
 ուի 'ի Լիւսասիան գեղջ քեալանթար Յարութիւն և քեալան-
 թար Աբէլ 'ի Բախտիարի (9) թ շնամեաց: Ըստ այնմ մասին
 բողոքաւոր եղև Նորին Սրբազանութիւնն 'ի Թէհրան, յորմէ
 և արձակեցան երեք աղբու հրամանագիր յանուն քաղաքա-
 պետացն Սպահանայ, Արաբիոյ կողման և իշխանին Բախտիա-
 րաց յաղագս կախնոյ զսպանողն նոցին: Եւ 'ի զարմանս ա-
 մենայն այլազգեաց 'ի ձմեռան եղանակի առաքեցան զօրք և
 թնդանութք 'ի վերայ ամրոցի նոյն մահապարտից, որոց ըզ-
 տունս կործանեալ զստացուածան առին յաւարի, և սպանողքն
 պարտաւորեցան փախստեամբ և թաքստեամբ զանձինս իւ-
 րեանց ճողորպիլ: Ի զարմանս ամենայն այլազգեաց ասացի՝
 զինախ քան զժամանակն Առաջնորդութեանն Թադէոս արք
 Եպիսկոպոսի բազումք յազգէ Հայոց սպանեալ եղին և չեղե-
 ումէք փոյթ ինչ զնոցանէ: Սպանեալ եղև և քեալանթար
 Ղուկաս, որ յիշատակեալ քեալանթար Յարութիւնին էր
 Հայր, այլ չեղև վրէժխնդրութիւն ինչ ըստ այնմ մասին:

Եղին և քանի մի սպանութիւնք 'ի դաւառին փէրիու
 յաւաղակաց և 'ի Բախտիարեաց, որոց սակս ոչ զանց արար
 Նորին Սրբազանութիւնն զպահանջ իւր և զվրէժխնդրու-
 թիւն՝ մինչև 'ի կողմանէ Տէրութեան ընկալան սպանողքն
 զպատու հաս իւրեանց: Ի գործողութեանց անտի ահարկու-
 եղև անուն Նորին Սրբազանութեան 'ի մէջ դաւառական խա-
 նութեան իշխանաւորաց, յորմէ և շահ մեծ յառաջ եկին

(9) . « Բախտիարի », կոչին նոյն այլազգեան՝ որք կորի վարժ են
 'ի հեթեւաբոսութեան, եւ սառաւիչ և հոգի հարք ճանապարհորդաց,
 ունեն զբնականութեան իւրեանց 'ի մէջ շերտի և Էլբոյ օղորդեալ
 յաղագս զերծ լինելոյ 'ի Բնաւեաց, եւ հոգորդողքն սղորին սառա-
 կութեամբ:

յաղազս բարօրութեան գիւղական Հայ ժողովրդականացն :
 Է) . Ղուեալ Նորին Սրբազնութեան զքողոք գաւառական ժողովրդոցն 'ի մասին կեղեքման հարկապահանջութեան , ոչ 'ի Տէրութեանն կողմանէ՝ այլ 'ի հարկահանից և 'ի գաւառապետաց անտի . յամի 1854 'ի գնալն 'ի Թէհրան՝ գանդատաւոր եղև Տէրութեանն ըստ այնմ մասին , որով կարճեցան նոյն հարստահարութիւնք և առ ամն իբրև չորս հարիւր թուաման թեթևութիւն և օգուտ եղև յաղազս Փէրիւռ Հայոց :

Ը) . Հասու լեալ նորին Սրբազնութեան , զի աւելորդապաշտութեան սովորութիւնք ինչ գտանին 'ի մէջ գաւառական ժողովրդոց թէ 'ի հարստեացն խնջոյս , և թէ 'ի յուղարկաւորութեան հանդիսի , որով շռայլութիւն 'ի ծախս նոցա լինէր , գուն գործեաց խրատութեւ և յորդորանօք հաւանեցուցանել զժողովուրդսն յաղազս անհետ 'ի միջոյ զնոյնս առնելոյ :

Թ) . Պարով նորին Սրբազնութեանն արգարև հօտասէր և քաջ հովիւ՝ ոչ խնայէր զիւրն օգնականութիւն նաև 'ի ժողովրդեանէ իւրմէ , որք 'ի հեռաւոր քաղաքս բնակեալ , 'ի ժամանակի ներդութեան իմիք զերեսս առ ինքն դարձուցանէին 'ի խնդիր նպաստից :

Ա . Յամի 1857 'ի բանալ պատերազմին Անգղիացոց ընդ Պարսից , սակաւութիւ Հայ բնակիչք Շիրազայ յաչ և երկիւղ մեծ գրաւեալ և ընկղմեալ կային յիւրեաց սինլիքոր խուժանից այնր քաղաքի : Ի լսելի լինել այնր անձկութեան ժողովրդոցն յունկն Նորին Սրբազնութեան՝ խնդրամատոյց եղև առ Իմամ Չումայ դիւնպետն Սպահանայ , և ընկալաւ 'ի նմանէ զերկու յանձնարարական նամականիս յամուռն գեներալտին Իմամ Չումայի և միւս և ս դեներալտի Շիրազայ , որոց պաշտօնակիցն այն յանձն առնէր խնամ տանել Հայ բնակչացն , զի մի ննաս ինչ յուսմեքէ առ նոսա հասանիցէ : Գրեաց և նորին Սրբազնութիւնն առ Հաջի Ղաւամ՝ որ տեսուչ և զլիաւոր վարիչն էր այնր քաղաքի , զի շորհ բարեխնամ պահպանութեան կալցի 'ի վերայ հայ ժողովրդոցն Շիրազայ : Յարգաս

առաւել և ս քաջալերս և խրախոյս ազդելոյ Հայոցն Շիրազայ՝ առաքեաց զյիշատակեալ նամականիս 'ի ձեռն Հայ թղթատարի և պատուէր ետ նմա խրախուսել զնոսա , զի կացցեն անկասկած և սթափեցին յաչէ և երկիւղէ անտի :

Ի տնօրէնութեանց անտի օգուտ մեծ եղև վասն սակաւութիւ բնակչացն Հայոց եղելոց 'ի Շիրազ , զի գեներալտքն յետ ընդունելոյ զպաշտօնակցին իւրեանց զյանձնարարական զիր խստիւ պատուէր ետուն ժողովրդոց իւրեանց , զի մի ոք ներել զՀայոս համարձակեցի : Ի պատճառէ անտի՝ 'ի թշնամեաց յազգէ այլազգեաց եղելոց 'ի Չուղայ , որոց զկեղեքիչ արձակմունս 'ի ժողովրդեանէ Հայոց կարճեալ էր արհին Թաղէգոս , զըպարտանօք ամբաստանեցաւ Նորին Սրբազնութիւնն , որպէս թէ գաղտ ընդ զօրապետին Անգղիացոց եղելոյ 'ի Բուշուր կալեալ զթղթակցութիւն՝ գեւ և զմուտս իրողութեանցն Պարսից Տէրութեան հաղորդեալ նմա , զնա փութաւնակի յառաջ խաղալ 'ի սահմանս Պարսից խրախուսէ :

Յայնմ վտանգաւոր պահու անվեհեր համարձակութեամբ դիմեալ Նորին Սրբազնութեանն առ Հէյմէթըօվէ քաղաքապետն Սպահանայ՝ յայտնի արար զիւր անմեղութիւն , և ընկալեալ 'ի նմանէ զապահովագիր և զխիւլայ՝ զգեցաւ զայն յեկեղեցուջն երևան թաղի , որով վտանգն մեծ որ 'ի քաղաքին շնջէր 'ի մէջ այլազգեացն յաղազս 'ի սուր մաշելոյ ըզՀայոս Չուղայոս՝ նանրացուցեալ ապահովեաց զժողովրդականսն իւր :

Բ) . Յամի 1860 , յետ ստանալոյ տեղեկութիւն թէ առ մահի Պարոն Յովհաննէս Աւետուսեան 'ի Բուշուր հասեալ է ներդութիւն ինչ 'ի գրացոյ իւրմէ , որ երկրորդ աստիճանի գեներալտն է լեալ Բուշուրայ , գրեաց զքողոք իւր առ քաղաքապետն Շիրազայ , որոյ հրամանաւն Պարոն Յովհաննէս Աւետուսեան ընկալաւ զհատուցումն վնասուցն իւրոց , և գեներալտն հարստահարող ոչ մնաց առանց յանդիմանութեան :

Գ) . Ի Թէհրան քաղաքի պատահեալ զողութեան իմիք և միոյ սպանութեան , Բաշիր անուն ոմն յազգէ Հայոց ըմբռնի իբրև գողն և սպանողն՝ և յարքունական բանտի անդ

կաշկանդեալ պահպանի : Յամի 1854 'ի զնալն Նորին Սրբազնութեան 'ի Թէհրան 'ի լսելն զայնմանէ՝ իմդրեաց զի քննադատեցեն զայն դատ, զի մի Հայն 'ի տարապարտուց 'ի բանտի անդ մաշեցի : Ի տէրութենէն յանձն եղև Նորին Սրբազնութեանն պաշտօն նոյն դատաքննութեանն, որ ըստ դատաւտանական կանոնաց հարցաքննեալ և զամենայն զհարց և ըզուպատասխանին 'ի գիր արձանագրեալ, եզրիտ զՀայն զայն անմեղ՝ և 'ի տարապարտուց անկեալ 'ի բանտ, վասն որոյ աղատեաց զնա 'ի բանտէ անտի, յաւէտ քան զնորա փրկութեանն զպատիւ ազգին պահպանելով :

ԺԷ) . Ի ստ որում բազում են տրգասիք Առաջնորդական վարչութեանցն Սրբազան Թաղէոս արք եպիսկոպոսի յաղագս վայելչութեան եկեղեցւոյ, սակս ազգային փառաւորութեան, և վասն օգտից Ժողովրդեան իւրում հաւարակապէս, վասն որոյ շէր մարթ զամենայն մանրամասնաբար 'ի համառօտութեան աստ բովանդակել : Աւստի զգլխաւորադոյնս յայնցանէ միայն յիշատակելով՝ զանց զմասնաւորօքն արարի, զի մի քան զչափն երկարեցի գործս այս :

ԺԸ) . Համբաւ արիաջան հովուութեան Նորին Սրբազնութեանն ոչ լուռ և անյայտ եկաց 'ի համազգեց հեռաւոր սահմանց : Վասն որոյ Ժողովրդականք Հայոց Տփլիսայ առ կենդանութեամբն վեհափառ Ներսէս Աթուղիկոսի 'ի ձեռն ոմանց իշխանաց իւրեանց խնդրամատոյց լեալ էին առ Նորին վեհափառութիւն, զի զԱյրն այն արժանաւոր կացուցէ ինքեանց Առաջնորդ, որոց պատասխանի տուեալ էր Նորին վեհափառութիւնն թէ՛ « աստանօր թագաւորեն Այստրական « օրէնք և կարգ, և իմ ներկայութիւն չէ կարի ինչ բացակայ « 'ի ձէնջ, վասն որոյ աստ մարթ է զվարչութեանն զեկ պահ « պանել առաջնորդութեամբ քաղաքական օրինացն և իմոյ « իսկ հրամանաւ : Իսկ 'ի Պարսկաստան Հայք պէտս ունին « այնպիսի արժանաւոր անձին և հովուի՝ որոյ շնորհիւ մար « թասցին գոնէ զկաթիլ մի 'ի զովացումն ընկալնուլ 'ի կա « ոսովարութեանց նորին ,, :

Օկնի վախճանի վեհափառ Ներսէս Աթուղիկոսի յամի 1860, Հայք Արցախայ և Հուշի ասրոցին խնդրեցին 'ի վեհափառ Մատթէոս Աթուղիկոսէ զՍրբազան Արհն Թաղէոս Առաջնորդ կարգել ինքեանց : Նորին վեհափառութիւնն տուեալ էր զբարեհաճութիւն իւր առ այն խնդիր, առաջարկելով նոցա նախ խնդրամատոյց առ Սրբազան Թաղէոս արք եպիսկոպոսն լինել և զնորին ընկալնուլ յանձնառութիւն, զի և ինքն ապա կոնդակագրեալ հրամայեցէ : Ժամանեցաւ խնդրադիր նոյն Ժողովրդականացն առ Նորին Սրբազնութիւնն, որք սրբարե թախանձանօք մեծաւ և ջերմեանդուութեամբ սիրոյ աղաչէին զնորին Սրբազնութիւնն զի յօժարեցի յանձն առնուլ զԱռաջնորդութիւն վիճակին Ղարաբաղայ : Գիտէր և Նորին Սրբազնութիւնն թէ որչափ տարբերութիւն կայ գերադատութեան մասին և աղատութեան ընդ մէջ վիճակին Ղարաբաղայ և Ջուղայ, այլ լաւ համարէր ընդ Ժողովրդեան իւրում 'ի չարչարանս լինել կրցորդակից և կարեկից՝ քան առ Ժամանակ մի վայելել զփառս և զաղատութիւն հարստութեամբն հանդերձ թեմին Արցախայ : Վասն որոյ գումարեաց զհասարակութեան Ժողով 'ի համազգեաց Ջուղայ և զայն խնդիր առաջի արար նոցա, կամելով զիտել զնոցին ներքին դիտաւորութիւն, զի եթէ տրհաճ ընդ վարչութիւնս իւրոյ Առաջնորդութեանն իցեն՝ մի ինքն իբրև բեռն ծանրացի 'ի վերայ նոցա : Ժողովրդականաց Ջուղայ յետ զայն լսելոյ՝ ոչ միայն զերախտագէտ շնորհակալութիւնս իւրեանց յայտնեցին Նորին Սրբազնութեանն՝ այլ և աղաչեցին մի լծանել զինքեանս որք և անտրուոնջ : Ընդ այն օրինակ ջերմեանդուութիւնս Ժողովրդականացն՝ ըստ բուռոյ բարուցն յարտասուս գորովեալ հայրագորով հովուին՝ պատասխանի արար Ժողովրդականացն թէ՛ « լաւ է ինձ չար « չարիլ ք ժողովրդեանս իմոյ, քան զփառս և զբարեբաղ « դուլութիւնն վիճակաւորութեն Ղարաբաղայ վայելել, վասն « որոյ ասեմ՝ ըստ մարգարէին թէ՛ ,, վիճակ ելին ինձ ընդ ըն « տիրս՝ և Ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ ,, : Օկնի Ժողովոյն արձակման գրեաց զպատասխանի իւր առ խնդրա-

զրութիւնս նոյն ժողովրդականացն հոգեշարժ խրատաբաւ նութեամբ հանդերձ՝ զհրաժեշտ իւր տալով՝ ՚ի փառաւոր հրաւիրանաց անտի: Երանել թէ աջողեալ իցէր Նորին Սըրբազնութեանն յայնմ ժամանակի մեկնիլ ՚ի վիճակէ աստի, զի ոչ ինքն վայելէր զմիւր դառնութեան բաժակին՝ զոր ձեռն ապերախտ կարկառեաց նմա, և ոչ ջուղայ լէր զհեծութիւնս և զցաւս սրտի նորա, զորս յառանձնութեանն իւրում իբրև առիւծ մռնչելով հառաչէր:

ԺԷ). ՍՆ սնուր մնացին և յարքունական պալատանիս համբաւն հօտախնամ Առաջնորդութեանն Սրբազան Թաղէոս արք եպօսի: Վասն զի Գերազանցեալ Նիկոլայ Անդրիանովիչ Անիչկով Գեոսպանն Ռուսաց ականատես լինելով անձնանուէր տքնուեցն՝ զորս յօգուտ ժողովրդեանն իւրում ջանասիրէր յիմ դէպս, մանաւանդ յամի 1854 ՚ի լինելն ՚ի Թէհրան, յամի 1856. զեկուցեալ էր զայնմանէ արժանադուլ կառավարութենէ Նորին Սրբազնութեանն Վեհապետին իւրում, որ բարեհաճելով առնել նմա վարձատրութիւն՝ ըզջբանշանն վարդիմէրի խաչի երկրորդ աստիճանի սահմանեալ ժապաւինաւն հանդերձ Այսբրական հրովարտական առաքեալ Նորին Սրբազնութեանն պարգև, զորս ընկալաւ ՚ի սկզբան 1857 տարւոյն:

ՍԷ հօփառ Նասրէատիւշահ Թաղաւորն Պարսից, զգովանի համբաւս Առաջնորդական վարչութեանցն նորին լուեալ ՚ի Նախարարէ արտաքին գործոց, բարեհաճեցաւ շնորհել նմա զջբանշանն Առիւծոյ և Արեգական երկրորդ աստիճանի կանաչ և կարմիր ժապաւինաւ՝ հանդերձ աստղիւ, զորս ընկալաւ ՚ի սկզբանն 1861 տարւոյն: Ըստ որում աղբոյ էր իմաստն այնր հրովարտակի՝ վասն որոյ ՚ի դէպ վարկայ զճիշտ թարգմանութիւնս Նորին առ տեղեաւս այսուիկ նշանակել:

Յեռնակնի՝ իւրի վեհապետութեան Թագաւոր Ըսիկն
Կարգեալ է:

“ՍՏՅԳ Է”

“Նրանն մեծի Տէրութեան եղև առ այն՝ զի ըստ որում մեծն ՚ի վարդապետաց և ընտրեալն ՚ի հոգևորականաց քրիստոնէից արք եպիսկոպոսն Թաղէոս Առաջնորդն ջուղայու որ յԱպասան, տարիք են զի զուշադրութիւն իւր յօգտակար և ՚ի կանոնաւոր տեսչութիւն շայոց այնր քաղաքի ունելով, հարաշատ ջատագովելի և ուղղութեամբ սըրտի կառավարութեամբ զինքն յայտնի արար, և յեղանակէ ժողովրդախնամ օգտաշահ կառավարութեան իւրոյ զհպատակս մեծի Տէրութեանն բաւարար կացոյց: Նաև եղև առիթ առաւել ծաւալման բարեկամական յարաբերութեանցն Օգոստափառ Տէրութեանցն Իրանայ և Ռուսաց, և խոհակաւ նաբար զնեքքին բարի համոզմունս մտացն առաջի ողորմածագոյն նկատման Մերում մեծի Տէրութեան ակներև եցոյց, վասն որոյ շնորհ լուսաբուղիս ճառագայթիցն արփիափայլ թաղաւորութեան շողեաց յանձն նորա, և ՚ի ներկայ ամի բիջիլի (10) զՆորին Բարձրապատուութիւնն՝ պարգևաց միոյ շքանշանի Առիւծոյ և Արեգական երկրորդ աստիճանի Սարթիփութեան՝ լ՛ կանաչ և կարմիր ժապաւինի՝ արժանի և համապատշաճ վարկաք, զի եղիցի այն ՚ի լանջս նորա զարդ պարծանաց, և քաջալեր ըստ իւրումն պարտաւորութեանց ՚ի վարչութիւն եղանակին բարձր ՚ի գլուխ առնելոյ զգործս շայոցն այնր տեղոյ առաւել քան յառաջն, և անձնադիր դիտողութեամբ զնպաստաւոր կառավարութիւնն կատարելազործել պարտք համարեցի ինքեան:

“Իրեցաւ յամենանն ջամատիօլսանի, յամի 1277”:

ԺԹ). Բնակիչք ջուղայ ականատես գործոց և կառա-
վարութեանց Նորին Սրբազնութեան՝ ըստ ողջամիտ մասին
գոհ և երախտազէտ եղին յամենայն ժամանակի զկառավա-
րութենէ Նորին Սրբազնութեան : Գրեցին նախ յամի 1854
զԹուղթ շնորհակալութեան իւրեանց առ վեհափառ Տէր
Ներսէս Աթուղիկոսն , և ապա յ30 Սեպտեմբերի 1857 ամի
առ Սիւնհոգոսական Ատեանն սրբոյ Եջմիածնի , 'ի նոսին ջա-
տագովելով զխոհեմ կառավարութիւնս Սրբազան Թադէոս-
արք Եպիսկոպոսի : Յամի 1861 , գրեցին նոյնպէս առ վեհա-
փառ Տէր Մատթէոս արքի Հայրապետն աղբիս : Գրեցին յա-
մի 1857 , և յամի 1862 , առ Հայ Հասարակութիւնն Արկա-
թայ : Գրեցին նա և 'ի 19 Փետրուարի 1863 ամի զկնի վախ-
ճանի Նորին Սրբազնութեանն առ վեհափառ Աթուղիկոսն
Մատթէոս զխորին ցաւակցութիւնն իւրեանց և զկատա-
րեալ երախտագիտութիւնն յայտնի առնելով :

Ի). Ըստ որում ամենայն վայելչութիւնք աշխարհի
ընդմաստնոյն վկայելոյ ունայնութիւնք են ունայնուէց , և չիք
բարեբաղդուի ինչ՝ որ ոչ ազաւաղեսցի յերեսաց յեղեղուկ
փոփոխութեանց , այդպէս և 'ի վախճան 1861 տարւոյ երկ-
պառակութեամբ Հայ Հասարակութեանն Արկաթայ , (ըստ
սադրելոյ այնպիսում Առն՝ որ բարերարեալ մեծապէս 'ի Նո-
րին Սրբազնութենէ՝ պարտ էր ցել շնչոյ իւրոյ առ նա մնալ
հաւատարիմ , այլ ապերախտութեան զպեցեալ զՀայիկ՝
" հատոյց դչար՝ փոխանակ բարւոյ , և զատելութիւն՝ փո-
խանակ սիրոյ ,) , Թօշնեցաւ գեղեցիկ եռանդն ժողովրդա-
խնամ յանձն Սրբազան Արհւոյն Թադէոսի , և մուտ 'ի
սիրտս նորա յորդեցին ցաւք կարելէր և հեծութիւնք :
Առաւել ընդ այն վշտանայր՝ Թէ զհինրդ ժողովուրդքն յերկ-
պառակեալ կուսակցութիւնս տրոհեալ Թշնամացան ընդ ի-
րեարս , յաղագս պատճառի՝ որոյ ծագումն էր 'ի Թշնամա-
կան զբարտառութեանց , և ոչ ընաւ 'ի հաւաստի ինչ սկզբ-
րանց : Յետ զծագումն լսելոյ երկպառակութեանն այնորիկ՝
տաղտկացեալ զխորին 'ի կենաց աստի , ստէպ ստէպ հայցէր
'ի Տեառնէ մերկանալ 'ի մարմնոյ և դիմել առ Աստուած :

Մի ամ և ամիս մի յետ 'ի ժամանակէ նոյն երկպառակու-
թեանն անցանելոյ , յաւուր ճրագալուցի ջրօրհնեաց տօնին
Նորին Սրբազնութիւնն 'ի մահիճս անկաւ մահաբեր տկարու-
թեանն , որ կոչի " կորեկային , : Ի մահիճս անդ հիւանդու-
թեանն իւրոյ ամմուռաց կրելով 'ի սրտի զվէրս զոր ընկալեալ
էր 'ի հարուածոց մատնչին իւրոյ՝ յերեկոյնի միում ասաց
բարձրաձայն , " մի՛ ասացէ Թշնամին իմ Թէ յաղթեցի նմա ,
կամ նեղիչք իմ ցնծացցին Թէ ես սասանեցայց , : Երեք ա-
ւուրքք նախ քան զօրհան իւր կատարեալ ուշիմութեամբ
զգաստացեալ խոստովանեցաւ և ընկալաւ զսուրբ Հաղորդու-
թիւնն , և 'ի 16 Յունվարի յետ միոյ ժամու 'ի մտանելոյ ա-
րևոյն սպառեցաւ և արև կենաց Նորին Սրբազնութեանն :
Արժանաւոր մեծարանօք կատարեցաւ շուք յուղարկաւորու-
թեանն Նորին Սրբազնութեան , և 'ի 19 Յունվարի ամփոփե-
ցաւ 'ի գերեզմանի 'ի գաւիթ սրբոյ Ամենափրկչի Ամնացն 'ի
շարս հանգուցեալ Առաջնորդացն : Կանգնեցին նմա տապան և
արձանագիր , յորս գրեցան ըստ յետագայ օրինակին :

Շ Ի Ր Ի Մ

Ս Ր Ր Ա Ջ Ա Ն

Թ Ը Դ Դ Է Ո Ս

Ա Ր Գ Ե Գ Ի Ս Ե Ո Գ Ո Ս Ի

Բ Ե Գ Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն ,

Ո Ր Ջ Ա Մ Ս 12՝ Վ Ե Հ Ա Ր -

Գ Ա Ս Ե Օ Գ Ե Ի Ե Ր Ե Օ Գ

Ը Ո Ւ Ը Գ Ն Ո Ր Գ

Ե Կ Ա Յ Ս Ր Բ Ո Յ Վ Ա Ն Ա Ց Ս ,

Ե Ի Ի 63- Ա Մ Ս Ի Ի Բ

Հ Ա Ն Գ Ե Ա Ի

Ի 16 Յ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի

1863:

Ի վերայ արհեստագրութեան գրեցաւ :

ՄԱՅ ՅԱՌԵԱԼ ՅԱՅՍ ԴԱՄԲԱՆ՝
ՅՈՒՇ ԳԱՆ ՎԵՀԻԴ ՎՍԵՄ ԳՈՐԾ,
ՄՏԵԱԼ Ի ԲՈՎՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ՈՍԿԵԳՈՒՆԱԿ ԶՈՒՏ Ի ՓՈՐԶ :

Ս Ի ՍՐԲՈՑ ՅԱՅՍ ԿԵՆՑԱՂ
ՈՉ ԱՐԲ ՅԱԻՈՑ ԶՄՐՈՒՐ,
ՅԵՐԿՐԻ ԵՐԿՈՑ Ե ԶԸՄԲԱՂ,
ՎԱՐԶՔ ԳՈՆ ԲԱՐԵԱՑ ՏՐԻՏՈՒՐ :

ՄՍ Ե ՄԱՐՄԵՆՈՅԴ ՄԱՀ ԱՐԶԱՆ
ԳՈՐԾՔ ՔՈ ԳՐԵԱԼ ԿԱՆ ՅԵՐԿՐԻՆ,
ՈՉ ԵՒ ԼԵԶՈՒՔ ԳՈՎԱՐԱՆ
ՔԵԶ ՅԱՇԽԱՐՀԻ ԼՌԵՍՑԻՆ :

Ն Ե ԶԵԱ՝ Ի ՏԵՐ, ՀՈՎԻՒ ՔԱԶ
Ի ՍԵՐ ՀՕՏԻԴ ԱՆՁՆԱԴԻՐ,
ՅՈՒՍՈՎ ԲԱՐԶԵՐ ՅՈՒՍ ՔՈ ԽԱԶ,
ԳԱՆՁԻՆ ՔԵԶ ՓԱՌՔ ԵՐԿՆԱԶԻՐ :

Ի). Ի խոր խոցեալ Ատենադարի վանացն սրբոյ՝ զոր
քիւր Տայրաբար Նորին Սրբադնութիւնն, և դառնացեալ
յոյժ յաղագս որբութեանն իւրոյ, յօրինեաց զյետագայ
քերթողութիւնն՝ ի յիշատակ բարերարին իւրոյ և Սրբազան
Հօր, ոչ օրպէս քերթող՝ այլ զայն թոթովահիւսեաց մի-
այն ի սփոփանս անձին իւրոյ :

Ք Ե Ր Թ Ո Ւ Ը Ծ

Ի ՎԱԽՉԱՆ ՄԱՀԱՑՈՒ ԿԵՆԱՑՆ ՏԵԱՌՆ
ԹԱԴԵՈՍ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ
ԱՌԱԶՆՈՐԴԻ ԶՈՒՂԱՅ :

ԵՐԳ . Ա :

Ը .

« Ս՛վ երկնալացիկ Զուարթուն բարի,
նւր սաւառնաթիւ դիմես շէշտակի,
տանես դալարեալ մաղաղաթ յաջում,
ստեղծն խնկոյ սրանայ զՏեա քում :
Ուսանիշ զակօս թռիչք քո ձգեն,
Ժպիտք անուշիկ զհրճուանս յայտնեն,
և խնդապատար շարժմունք քո արագ՝
յաղթանակութեան երևին զուշակ :
Ման, բարձրելոյն ընտիր Սերովբէ,
զենչ համբաւ բերես յաղետից վայրէ :
Յիւր ծառայակից արձակեաց բարբառ
Քրովբէն՝ որ շողայր ՚ի Լոյս վեհափառ :
« Պահապան հրեշտակ արհուոյն թաղութի
եմ ես, ցորչափնա պանդխտէր յերկրի,
ու՛մ մինչ բաղնէին յոյզ՝ ծուփ՝ և ալիք,
ես նմա կայի պաշտպանս զօրաւիք :
« Վա ընուլ զպարտա իւր անտեսութեան
կալեալ միակ տենչ՝ լինէր ճգնաջան,
ինքեան յանձն եղեալ շօտին վառ ՚ի սէր,
իբրև քաջ հովիւ էր անձնանուէր : »

Պահեալ յօտարէն զհօտ իւր սակաւ՝
յարկածս ամենայն լինէր դիմագրաւ ,
Հաւատոյ՝ Յուսոյ և Սիրոյ պատուար
ձգել զնոքօք ջանայր անդադար :

Կա էր խանդակաթ Հայր ժողովրդեան ,
որոց շահ՝ դիւր կեանք՝ և բարիք միայն՝
ձեռնարկ իւր էին , ջանք և նպատակ ,
զորս 'ի պսակել՝ դիմէր 'ի վաստակ :

Կան արձանագրեալ յայս մագաղաթի
բաղում և պէսպէս գործք նորա բարի ,
զոր տանեմ յատեան վեհ Գատաւորին ,
թէպէտ 'իմանէ չիք ինչ առանձին :

Եւ Երբ յաշխարհի յարգ բարւոյն ծանեան ,
հիք 'ի սուրբ արանց ոչ կոչկոճեցան ,
Եղև ժամանակ՝ յորում դառն արկած
զարշտօնեայս Տեառն եթող անհալած :

Եւ դպէս և նմա դէպք ժամանակի
մատոյց թաթաղուն մրուր բաժակի ,
սլաք և աշտէք զվէր կտտազին
յերանելոյն սիրտ 'ի խոր վարեցին :

Սիշտք 'ի դիպուածոց՝ աղէտք յօտարաց՝
գութ ժողովրդեան զնովաւ պատեաց ,
այլ խոր թափանցիչ՝ սիրելեացն էր ցաւ ,
լեալ ցից ոսկերաց , առիթ կենաղբաւ :

Կա վսեմաբար զամենայն տանէր
ժոյժ կալեալ՝ մրուր բաժակին քամէր ,
կայր անդրդուելի « զի Տէր յոյս իմ է » ,
ասէր հանապազ , « նա զիս ոչ թողցէ » :

Եւ տիրեաց 'ինա տաղտուկ գլխովին
'ի պանդխտութեան յամել 'ի վայրին ,
զսէր աշխարհիս վանեալ 'ի սրտէ՝
մի օտարամալ տենչայ 'ի Տեառնէ :

Ի հոգւոջ նորա իղձ վառեաց զբոց
չուել 'ի տեղին հանգստեան Սրբոց :

ուստի ջերմ հայցուածս առ Աստուած առնէ
« Տէր արձակեա զիս , և հան 'ի բանտէ » :

Ստեղն այդ խնկոց՝ աղօթք է նորա ,
որ զհետ իմում թեոց սրանայ ,
ես խնդամ ընդ այն՝ զի նա անսայթաք
վարեաց զկեանս իւր յերկրին դժնդակ » :

Սրբէն երկրաչու պատմեաց քորէին ,
որ ինչ պատկանէր նոյն հարցմանց նորին ,
և նա անդրադարձ արար պատասխան ,
յայտնելով նմա բարձրելոյն հրաման :

Կենաց և մահու Տէրն և ինքնիշխան
բարեխնամ գթով հայեաց Արհւոյն այն ,
լուաւ զնորա ջերմեանդն հայցուած ,
զոր ասէր « փրկեա Տէր զիս 'ի վշտաց » :

Կրքեաց թէ եհաս կէտ ժամանակին
մահացու կենաց սահմանեալ նմին ,
բաւ է որչափ նա համբեր և ժուժեաց ,
զնա աշխարհի բով մաքրեալ զտեաց :

Ստանել սիրելոյն զհրաւէր կոչման
« եկ առիս ծառայք վաստակեալ երկօք ,
քիզ կան տրիսուր վարձք հանդերձ փառօք » :

Բարձրելոյն առ իս զայն տուեալ պատգամ՝
ոյր 'ի կատարումն յերկիր սլանամ » ,
Ապա ողջունեալ երկնային սիրով
անձնիւր յիւր պաշտօն ընթացան ճեպով :

Բ .

Օչ առաւիղս իւր արևն սքողեաց ,
և գիշեր սփռէր զիւր քօղ սզաղբեաց ,
զողտր և դայլայլիկ լռեցան հսչմունք ,
լեւի եղին նոճեաց սօսափմունք :

Լուսինն՝ (որ յաւէտ 'ի լոյս իւր վսեմ՝
Արհւոյն միայնիկ տեսեալ էր զճեմ՝
մինչ զհանգստեան աղօթս իւր առնէր
և զտուրնջեան վիշտս իւր ամօքէր) :

Վարէր զկառս իւր յերկնից 'ի կամար,
աստեղք շողային առաւել պայծառ .
եհաս, ուր զիմէր, ֆրօքէն վերնական
հետք թևոց նորա որպէս ծիածան :

Ի քիրտն հանդուցիչ թաթաւեալ Արհւոյն՝
անհեծ՝ անմռունչ մնայր տենչաւոյն,
եկաց ֆերօքէն 'ի մահճին յաջիոյս,
աղբեաց զսլառգամն և ետ զխրախոյս :

Էբաց նա զաչս իւր պայծառ որպէս ջահ,
եբաց զբերանն, և հոգւոյն ետ ռահ,
այլ երկնապարզ և ժպիտ խնդութեան,
կային 'ի դէմս իւր նաև յետ մահուան :

Օոր հայցէրն ստէպ՝ "Տէր հան 'ի բանտէ
զանձն իմ, զոհանամ զանուանէ քումմէ ."
եզև յայն վայրկեան Հրեշտակին յանձնեալ
զզուարթ հոգին վաստակաբեկ լեալ :

Գ .

Եւմ արտասուելի, վայրկեան գութարկու,
յոր սիրտք սիրելեաց ընկալան աղբու
զխորաթափանձ հարուած և խարան,
զորովք մորմնքիչ աղէտք պատեցան :

Եւմ զի բարձաւ Տէրն և բարեբար,
սփռեցին զթևս սուգ՝ վիշտ՝ և աշխար,
'ի սիրտս զգացմունք վառեցան կիզիչ,
զի սիրոյ հուրն է քան բոց տոչորիչ :

Մունկ դողդոջաբայլ ընթացան յառաջ
'ի գուշն 'ի խօնարհ, Հանգուցելոյն զԱջ

կալան 'ի համբոյր . ոհ համբոյր վերջին,
դողային շրթունք, սիրտք տրօփային :

Եւք կայակէին զցող ցաւագին
և ձայնք հեկեկմանց 'ի խեղդ լինէին :
Ցողիկ արտասուանց, իջանէք 'ի զուր,
զի ոչ արծարծեալն ձեօք շիջանի հուր :

Ընչեցան զանգակք սուրբ Մայրավանին,
յայն տարածամու զգոյժն աղբեցին .
ընդ որ թունդ առին սիրտք 'ի փոր բազմաց,
յայնժամ 'ի ջուղա տրտմութիւն պատեաց :

Խուճք խուճք զիմեցին հոյլք ժողովրդեան,
եղէն լսելի օղբք դառնակական .
տիպ հէզ օրբութեան 'ի դէմս համայնից
կայր նկարագրեալ գծովք տրտմալից :

Ստեան 'ի համբոյր Աջոյն ցրտացեալ,
որով զնոսին բազմիցս էր օրհնեալ,
և արք բարեպաշտք ջերմին առ Աստուած
վան հանգուցելոյն առնէին հայցուած :

Գ .

Եղևի աշխարհի վաղանցուկ փառաց .
վայ բաղդալծեալ յողբողքուն կառաց,
ընդ մի ակնթարթ և ընդ սուղ միջոց՝
զան փոփոխութիւնք անյայտ 'ի խորոց :

Որք բազմին 'ի գահ վեհ իշխանական
և տիեզերաց տան զահ և սասան՝
յանկարծ 'ի սարսուռ մահուան ըմբռնին
որպէս խոտ վայրի փառք նոցա թօշին :

Չիք երջանկութիւն յերկրի անմրուր,
տքնել 'ի զիւտ այնր՝ վաստակ է 'ի զուր,
զի որք կան յաստիս՝ ստուերք են նանիր .
որպէս սին երազք անշահ առաւիր :

Ար կրէ զթագ գոհար 'ի գազաթ,
 և որոց շող տան պերճ զարդուք ճակատ,
 անտարբեր ընդ այր աղքատ աննշան
 լքանին զկեանս, և 'ի հող դառնան :
 (Ս՛վ հող, մահացուաց դու մայր առաջին
 որ քոյին բերրի ստեամբք զլիսովին
 տածես դարմանես զազգ մարդկան համբուն,
 որպէս սահմանեաց վերին տեսչութիւն :
 Խոնարհաց հեղոց դու ես օրինակ,
 ոտք կոխեն զքեզ զսոզ ստահակ,
 դու համբերատար տանես զամենայն՝
 և կաշուս 'ի գիրկս քո զամենայն) :
 Երանի նոցա . որք աստ վաստակեն,
 և զվարձ իւրեանց յերկինքս գանձեն .
 զի մինչ սպառին աղցաւոր այս կեանք՝
 դիմեսցեն անդ, ուր կան աջակողմեանք :

Ե .

Բարի Զուարթուն քրովէն վեհափառ
 մինչ զպատուական դաւանդն իւր էառ
 զմաքուր հողի Արհւոյն Թաղդէի՝
 ճեպեաց սլանալ 'ի կայանս երկնի :
 Այնչափ արագ վերճեմէ շողին,
 ոչ և թռուցիկ զնդակ հրացանին՝
 որչափ 'ի թռիչն էր շուտասլացիկ
 այն խաղաղութեան հրեշտակ գեղեցիկ :
 Փութայր անցանել յերկրի սահմանաց,
 ընդ որոյ այերն գոն թոյնք ժանտ մեղաց .
 ընդ նմին թեւ էր և հողին արդար
 անկասկած Այսոցն 'ի չարագուպար :
 Ընցին քան սահմանն՝ ուր ամպք խտանան,
 'ի նշանաւոր տեղին մերձեցան :

յոր երկնից մաքուր հորիզոն և ծիր
 տարբերին երկրի յօդոյն մեղսակիր :
 Յօդն այն թիւնաւոր Աստ իշխեն գոռան,
 կորզեն զհողիս՝ որք մեղօք մեռան .
 այլ հուպ գալ չիշխեն սուրբ հողոյ արդար,
 որոց վասն զուգ առնեն չարաչար :
 Յայն առապարաց թռուցեալ և անցեալ,
 'ի սահմանն անքոյթ ճեպով ժամանեալ
 քրովէն բարեգութ, սաւառնատարած
 (Հոգւոյն տալ հանդիստ) զթեւս ամիսփեաց :
 Երկնային մաքուր սիրով առ հողին
 էարկ զհայեացս իւր հրեշտակային,
 էր խնդապատար քաղցրութեամբ հանդերձ .
 (յերկինս է միայն սէր սուրբ և անկեղծ) :
 « Աղջն քեզ հողիդ (վեհս ասաց հրեշտակ)
 որ տքնեալ յորով տարար յաղթանակ,
 թէպէտ քեզ զմբաղս թակարդէր աշխարհ,
 և ոտիւ էր քեզ մարմին քո տկար :
 Այլ քո յուսացեալ յԱնուն պաշտելի՝
 ժայռաւոր յափունս ծովու աշխարհի
 զղեկ նաւակիւ վարեցեր ուղիդ,
 յաջն ընթանալով յանխոտոր շաւիղ :
 Ի նաւահանգիստ աւասիկ ժաման,
 ուր փառք և հանգիստ կան յաւերժական,
 ոչ այլ աշխարհի փորձանաց ալիք՝
 այլ երանութեանց գանձին աստ բարիք :
 Ի բոլի այն փորձոյ տանջեցար սակաւ,
 Ար էն տայ քեզ վարձ անանց և անբաւ .
 (մարդասիրութիւն անհաս անքննին,
 զթութիւն անչափ առ ազգն հողածին) :
 Մինչդեռ ընդ հողոյն քերօքէն խօսէր,
 և ակնածաբար հողին զայն լսէր՝
 յերկնից սլաթեւ իջանէր Հրեշտակ
 բերելով աջով զքեզ պսակ :

Լը նա պահապան Ջուարթուն բարի,
 յաւէրժ Թեւարկուն արհւոյն Թաղէի՝
 որ դոյզն ինչ յառաջ տալ գործոց համար,
 չեպով խոյացաւ Գատաւորն յարւար :

Ու՛մ յայտնեաց զիւր պարտս, զարգասիս բարի
 իւրոյ տեսչական զթոտ պաշտօնի,
 և նա որ գիտէ զգաղտնիս մարդկան՝
 շնորհեաց զայն պսակ յաղթանակութեան :

Մինչ զնա հոգին 'ի բացուստ դիտեաց՝
 նոր իմն զգեղմունս բերկրութեանց զգաց,
 (բերկրութիւն վճիտ, անխառն և մաքուր
 անվիշտ՝ անյեղի՝ անեղծ՝ անմրուր) :

Իջ նա առ նոսա շեշտակի Թեօք,
 և ողջադուրեաց խանդաղատանօք,
 փարատեաց նաև զվարանս հոգւոյն,
 տուեալ զծանօթս մտերիմ սիրոյն :

Որ յանբոյս 'ի դաշտ յորդաջուր ծօգու
 'ի գոռ կոհակօք փոթորիկալ պահու,
 'ի ջախջախաբեկ 'ի գողոյ նաւուն՝
 անկեալ 'ի յալիս սրտմտեալ ծովուն :

Յանձին զկորով վառեալ և զջան՝
 ճգնէ 'ի լողալ 'ի գիւտ փրկութեան,
 և հասեալ յեզր ինչ երջանիկ երկրի՝
 շնչէ կենսական զօր քաղցրութեամբ լի :

Մնծանօթ ինքեան յանկարծ յայն վայրի
 սերտ ոք մտերիմ թէ երևեսցի՝
 հրճուանք անպայման որչափ 'ի սիրտ առն
 յորդառատ լցեալ՝ զփառըս տայ Տեառն :

Ի ինի խուզարկու հետաքրքրական
 զայնոսիկ տեղեաց հարցմամբք զանազան,
 խնդութեամբ անճառ այնպէս և հոգին
 եղև խօսակից ընդ վեհ հրեշտակին :

Տէր իմ (բարբառեաց հոգեղէն բանի) -
 երջանիկ եմ արդ բարձրելոյն շնորհիւ,

ոչ ևս 'ի բանտի Թուիմ կաշկանդեալ,
 ոչ ևս բոյլք ցաւոց զինև կան պատեալ,
 Առ տանջէն զիս ցեցք, չիք մարտ արհաւրաց,
 ոչ անյայտ դահճին կրեմ զհարուած.
 ոչ ծուփք յիս բոմբին, ոչ հուր փաղաշիչ,
 ոչ սառն ընդ ոտիւք, ոչ ահ պակուցիչ :

Ել զիս գտանեմ յայնպիսի վիճակ՝
 որոյ մինչև ցարդ չունեմ զճաշակ.
 զհանգստութիւն զգամ անմամն,
 զորմէ ճառել ինչ ոչ եմ բաւական :

Երգեսցէ լեզուս, Թէպէտ ապիկար՝
 զօհացողական նուազս անդադար
 Եին անեղի, մարդասէր Փրկչին
 և սրբոյ Հոգւոյն փառակցի նոցին :

Եւ առ ձեր շնորհ ինամոց և սիրոյ
 կամ երախտապարտ, եմ և եղէց գոհ.
 զի առանց ձերոց օժանդակութեան՝
 'ի ճախնեաց մեզաց ոչ է կար զերծման :

Երբ անծ անօթիս տալ տեղեկութիւն՝
 խնդրեմ զի տաջիք զձեր հաճութիւն :
 Յուղւոջ մեր Թեօք մինչ խոյանայի՝
 'ի կողմն հիւսիսոյ յորժամ հայեցի,

Տեսի անդ ջուր՝ որոց կերպարան
 Թուէր զուարթնոց, այլ զիշերանման
 մույլ աղջամուղջ 'ի նոսա տիրէր,
 աչք էին նոցա՝ այլ խաւարասէր :

Օհ Թեօքն աղճատ դերթ ճանձախարիթ
 ծածկէին զգէմս, փաղանգէին խիտ,
 զի մի զլուսոյն (կարծեմ) զցօլմունս
 տեսցեն՝ որ պայծայռ փայլէր 'ի բարձունս :

Մահ կատաղութեան ժանտաժուտ նկար
 էր մակերևոյթ նոցին գլխազար,
 կոկորդ նոցա լայն, ժանիք ամեհի,
 բերանք՝ որպէս շանց սպանդանոցի :

Իրանք թաթաւեալ 'ի մոծ իր, 'ի մուր'
 կռինչ հանէին զերթ ցին և ուրուր :
 Երկուքն 'ի նոցունց յիս արշաւեցին
 որպէս ելուզակք դարանեալք յուղին :
 Ինք այն արշաւանք ընդ այն տիպ դաժան
 յերկիւղ պարանեալ՝ հապճեպ փութաջան
 կալայ զքո թևս, Զուարթուն բարի,
 ինձ պատուարան և ինձ հովանի :
 Դոքա հուպ եկին՝ այլ ոչ մերձեցան,
 'ի նոյնս ակնապիշ աչք իմ յառեցան,
 լուայ զնոցա ձայն, սոսկան և արդ,
 ընկեր ընդ ընկեր եղին զիմամարտ :
 Թէ զինչ վիճէին՝ ոչ 'ի միտ առի,
 այլ զայրացութեան ձայն էր կատաղի .
 որպէս լուսնոտեալք ժայթքէին փրփուր,
 ունգունք նոցա ծուխ արձակէր և հուր :
 Ինք կրունկն ապա դարձեալ մեկնեցան,
 այլ գեռ լսել լինէր նոցա ձայն .
 Արդ խնդրեմ պատմել ի՞նչ էին նոքա,
 և թէ կազն ընդէր ջեռաւ 'ի նոսա ,, :
 Ստերիմն հոգւոյն հրեշտակ պահապան
 հարցմանցն հաճեցաւ տալ զպատասխան,
 և սիրողաբար սկիզբն առ խօսից
 " զոր ցանկաւ գիտել՝ հակիրճ ծանուցից :
 Ո՞հմակն 'ի հիւսիս գոռողից դուպար
 դիւացն և այսոց է չարախտավար,
 որք իշխանք օդոյ անուանակոչին
 իշխանք աշխարհի, պետք տարտարոսին :
 Տգեղն այն նոցա տիպք և կերպարան
 եղին արզասիք մեղացն հետութեան,
 զոր մինչ վիսաբար յղացան 'ի միտ
 և 'ի նոյն յամառ եղին պամաղիտ :
 Կայծակունք արդար վրիժու բարձրելոյն
 որոտմամբք ահեղ արտաքսեաց խիոյն,

'ի բարձանց ձգեալ յանչէջն 'ի զեհեան
 ուր անթապարտ զլիալ սուզեցան :
 Չայն խառնագոչիւն յայն խուժան չարաց,
 'ի ժամու յորում յերկնից սահմանաց
 շանթիքն Աստուածեան 'ի բաց վտարէր,
 շփոթ քանի՞ն և տազնապ տիրէր :
 (Երկար է կարի նոյն արկածից վէպ,
 գիտես դոյղն, և զայն թողուք յայլում գէպ,)
 որք 'ի բոցավառ բով դժօխային
 իսպառ 'ի կորուստ մաշեալ լինէին :
 Այլ պահեաց Աստուած և ետ նոցա թոյլ
 յարանալ 'ի գործ չարեաց բաղմահոյլ .
 զի իմաստութիւն՝ բարիք իւր և փառք
 փայլեցին, և դեք լեցին այսն առակ :
 Ինչ նոցա անկումն և այն պատուհաս
 փոխեցին զգեղ նոցին գերադաս,
 որպէս փայտք դալար խանձողեալք 'ի հուր՝
 եղին դարշատեսք թաթաւեալ 'ի մուր :
 Ժպիրհքն յաւակնեալ 'ի վէզ մոլեգին՝
 զԱստուծոյ զփառս կորզել կարծեցին,
 այլ մինչ նշաւակ բոցոյն եղին խանձ՝
 'ի զեան մարդոյն ջան կալան և նախանձ :
 Աստի յաշխարհի բիւրազան, թակարդ
 կազմեն պատրանօք, խայծիւք որսալ մարդ,
 այլ բռնի կալնուլ Աստուած չետ հրաման,
 ուստի գործեն լոկ հսարիւք չարութեան :
 Սարգիկ որք 'ի մեղս թմրին խելայերդ՝
 զժանտիցն ըմպեալ դիւ թեալ մահադեղ .
 մինչ մերձի նոցա ժամանակ մահուան՝
 դեն առ նոսա կայ առանց անջատման :
 Զորթամ գայ հրեշտակ ստանալ զողին՝
 զնէ նա զբրոշմ 'ի ճակատ նորին,
 յորում կայ դրօշ վիշապին չարի,
 և զիր թէ " բաժին է սա զեհեանի ,, :

Յայն սակօ 'ի սահման օգոյն մեղսամած
 որպէս բաժառուք շրջին պարայած
 գունդք Բելիարայ, 'ի կաշուէ զոգին՝
 որք մեղօք մեռան 'ի ցանց գազանին :
 Զրեշտակն զհրաման վեհին կատարէ,
 'ի դարշ անօթոյն զոգին լուծանէ,
 որ մինչ չու առնէ օգոյն 'ի սահման՝
 պատին զնովաւ հոգիքն Այսական :
 Պար առեալ ինծղան, և ծաղրեն ուժղին
 որպէս մարդակերք 'ի գիւտ սպանդին,
 ապա կաշկանդեալ սարեօք մոզական
 յղեն 'ի դժոխս յանշէջն այն գեհեան :
 Կան հոգիք՝ որոց բացորոշակի
 շեն գործք կամ վախճան, ոյց դատ կարօտի
 քննութեան արդար վեհ Գատաւորին,
 'ի դէպս այնպիսի շփոթմունք ծաղին :
 Օհ գան օղականքն 'ի կորզել զնա,
 Քերովբէն յայնժամ նմա պաշտպան կայ-
 նօքա 'ի խլել՝ նա 'ի պաշտպանել
 ջանան, այլ հրեշտակ, յաղթէ 'ի վանել :
 Ընգամ մի աղմուկ յուղեցաւ սաստիկ
 և մարտ վանն հոգւոյ ինչ կեղակարծիք,
 խուժեցան ջալիր Այսոց զերթ գոռելի,
 ջան եղեալ պատրել՝ նախ բանիւք մեղմելի :
 Ըսեն « քերովբէդ ստրուկ Բարձրելոյն
 Թող զայդ հոգի 'ի մեղս թաթաղուն,
 չէ այդ ձեր բաժին, մեզ ել դա վիճակ,
 մեր երկրպագու էր և արբանեակ :
 Գործք նորա յերկրի կան հանրածանօթ,
 նա այր մ'ծղնեայ՝ անկրօն՝ անամօթ,
 բազնեաց՝ մեհեանաց դից պաշտօնատար
 պազշոտ բռնաւոր յեղեռն անհամար :
 Խորշեաց յայդմանէ Զուարթուն լուսոյ,
 մի հպիր յայդ ձիւթ լուցկի դժոխոյ :

Ճեպ տուր 'ի յերկինս, ժամ է ձեռնամած
 երկրպագութեան առ խրոխան Աստուած :
 Կոցա պատասխան ետ խեթի աչօք,
 « մի շաղակրատէք, խօլք, բանիւք բազմօք
 ընկալայ հրամանն առհ հորդել սմա
 մինչ ուր Գատաւորն արդարութեան կայ :
 Եւ տայ ըստ գործոց զտոյժ կամ զվարձ,
 յիս ոչ աղբին ձեր բանք ճառատանաց :
 շամբուշք, հեղինաբար զիս ոչ ստնանէք,
 մեղ քառք և սլատիւ է այն՝ զոր ասեք :
 Ըլ դուք 'ի դժոխս տուք բացաղանջին
 գայռից՝ գազախաց հրամանն ահարկուն,
 մերթ 'ի կիզող լիճն՝ մերթ 'ի սառնած ուժ
 սուղեցէք, առնուլ ջերմութիւն և զով :
 Ըլ դպէս զնոցա սիրտ երգիծանէր
 և զիւր պաշտօնին պարտիս կատարէր,
 հրեշտակն երկնային անվախ և անահ
 սլանայր 'ի բարձունա, հոգւոյն հորդէր առհ :
 Օեղան զնովաւ պանդոյր այն խուժան,
 որպէս բարձրագոչ այլքն յովկիան
 այլ որպէս 'ի ծով ժայռ ինչ կարծրակուռ
 խորտակէ զայլեացն զթափն 'ի մոմուռ,
 Ըյսպէս և հրեշտակն հզօր ախոյեան
 դերեւէր նոցին զթափն արշաւման,
 և մինն՝ հարիւրոց դէմ արձանայր,
 այլ զայրոյթ 'ի Կեան ուժղին սաստկանայր :
 Կբրեցան 'ի մարտ, և նախ Բելիար
 աջակցօք տասամբք յառաջ խոյանայր
 հրեշտակին կախուլ զառհ և զուղին,
 և Սաղայէլի իւրում մարտակցին
 Ըյնարկեալ ասէր, զհոգին խլել
 մինչ ինքն զշփոթ մարտին արկանել
 Թափէր զճիւղն, ճգնէք առաւիր,
 և առ Զուարթունն պարսէր բան բասիր :

« Կանց յանդգնագոյնդ վախկոտ 'ի գերեաց ,
 զոր 'ի խուսափումն ճեպես թեւաբաց .
 կամ տուր զհոգին՝ որ բաժին է մեր ,
 կամ ընկալ զաշտէս քեզ սիրոյս նուէր » :
 Բնդ նոյն և կշիռ ձգեաց զիւր նիղակ ,
 տեղացին զնետս աջակիցք տանեակ ,
 այլ պարզեաց հրեշտակն զիւր զյաղթ վահան
 ինքեան և հոգւոյն կուռ պատասարան :
 (Բերօբէն ընտիր էր նախագիտակ ,
 թէ այն օր ունին դեք կալ հակառակ .
 վասն այն ամրափակ էստ զվահան ,
 յետ զբարձրելոյն լսելոյ հրաման) .
 Բաղնեցան ընդ այն շեշտեալքն այն համայն
 որպէս 'ի յամպոց՝ կարկուտք 'ի ցուս տան ,
 շիք լուծան անդէն թարմատար յուժոյ ,
 ոչ զեան ինչ աղգեալ հրեշտակին լուսոյ :
 Բստ մարգարէին , յորժամ փշրեցան
 աղեղունք նոցա՝ յետս ընկրկեցան ,
 յայնժամ առ նոսա քերօբէն դիմեաց
 զօրէն արծուոյ 'ի բոյլ ճնշիլաց :
 Խուճապաւ փաղանդ կազմեցին ներկուռ ,
 այլ ձայն հրեշտակին տայր նոցա սարսուռ ,
 որ առ Բեւիար զայս արձակեաց բան՝
 « փախչող զիս , ասես , հէգդ և դաւաճան » :
 Իմ պարտք է հլու մնալ հրամանին՝
 որ ինչ 'ի Բարձրեալ Տեառնէ բարբառին ,
 ոչ դու և ոչ քո աջակիցք տկար
 խոչ լինել ուղեոյս կարէք ունել կար :
 Ե՛կ ուրեմն զքեզ յղեցից դեսպան
 առ պետ դժոխոց առ քո ժանտ իշխան ,
 ում գուժեա՛ վտանգն շուրջ զքեւ պատեալ ,
 զի նա փռլթասցի զօրօք իւր աստ գալ » :
 Բնդ բանին կալաւ զուրն ամբարշտին
 ճկեալ ընդ թեւօքն և ճնլեաց ուժգին ,

ապա 'ի յերկիր մղելով ընկեաց ,
 գլեալ սուղանէր , այլ ճիգն յոյժ թափեաց :
 Օանկումն իւր պահել , թեւօք սաւառնեալ
 և դարձեալ 'ի վեր հապճեպ խոյանալ ,
 զի մի իւր խուժան անկցին առա՛թուր՝
 և մի յորսոյն այն մնացեն թափուր :
 Օղւարթունք լուսոյ յայնժամ պարառեալ՝
 դիտէին զանկումն դիւին պարտեցեալ
 և զօրաց նորա զվայրաժտին
 արշաւումն ընդ օդս զոռմամբ սաստկաղին :
 Բերօբէն հզօր , դարձեալ յաղթական
 ճեպեաց կատարել զիւր պարտ պաշտաման ,
 և այնպէս գերծոյց յԱսոցն 'ի չարաց
 զՍողոմոնի հոգին կեղակարծ :
 Բյգպէս դէպ լինին շփոթք և խռովք
 'ի տանել զոգիս անորոշ գործովք ,
 սակս այն և 'ի քեզ հուպ եկին երկուք
 տեսանել թէ կան սպիք մահացուք :
 Ե՛լ մինչ 'ի յուսոյ վրէպ եղեն և սին՝
 դարձան ընդ կրունկ զայրացմամբ ուժգին ,
 զի 'ի կատաղի բարկութիւն բրդին
 մինչ արդար հոգիք այսրէն անցանին :
 Ի կրից անտի , որ իբր հուր անշէջ
 կայ յար 'ի նոսա , յուղեցին զվէճ .
 և էր Բեւիար որ հակաճառէր
 ընդ Սաբայէլի , զոր և կշտամբէր :
 Բեւիարն էր այն , որ զՅարն արբանեակ
 կալեալ՝ զիւր մակարդ ետ դառնաորակ ,
 և դրգեաց զնա 'ի վտարանջել ,
 որով մարթացաւ բիւր չարիս գործել :
 Կայծ մի 'ի հրոյ դժոխոց բերեալ՝
 կիրս արբանեկին իւր նովաւ լուցեալ
 ժանտն 'ի նա փչեաց զիւր շուռչ դիւային ,
 որով զիղացաւ հրդեհ վտանգին :

Ի հրոյ անտի, ո՛հ սիրադարման
մարմանդք տոչորեալ, և կիզախոպան
եղին անապատք տատասկոտ փշոտ,
լի առապարօք և փոսիւք գայթոտ:
Սուտ առին յայն վայր բացեալ դրօշակ
ոխ՝ ատելու թիւն՝ ու մախանք դժնգակ,
եղբայր յեղբօրէ և հայր յիւր որդւոյ
ճեղքեալ ուժացան ՚ի մաքուր սիրոյ:
Ընէր սուր լեզու և բաղմաճարտար
պատրել պարզամիտս բիւր ունէր հօսար,
մերթ յոխորտանօք լերանց սպառնայր՝
մերթ դիմակ առեալ անքատ հեղանայր:
Կրէր ՚ի ձեռին զգիւթեալ բաժակ,
յոր ասէր, թէ, դոյ անմահ օշարակ.
Քնէր նպատակ վտարել զսէր,
այլ նահատակիլ սիրոյ սակս կեղծէր:
Ըյրն ՚ի հեռաւորս ետ գանդին ձայնեղ
ցուցեալ թէ ունի զօրութիւն կարչնեղ,
այլ երբ ստութիւնք ոչ ծանակեցան,
և երբ ստախօսք զամօթի հարան:
Ըյն իրաւունք կանգնեաց յաղթանակ,
և ստապատիրն եղև նշաւակ.
այլ լափեաց զգեղ սիրատունկ դրախտին
հօւր՝ զոր արծարծեաց այսական հոգին:
Սինչ ժանտ բեղիար առնել հանդերձէր
զօր արար չարիս, զգաշն հաստատէր
ընդ Սադայէլի ընդ իւր զովողին,
զի երկօքին իսկ ճգնաջան լիցին:
Արիշ կալան վայր, որոց պայմանէր
մինն անդ և մինն աստ հալածել զսէր,
զընտիրս ՚ի գառանց որսալ կերակուր՝
միութեանն զյօգ առնել քէիքուր:
Արշափ կարաց մինն անխնայ գործեաց,
միւսն առաւիր զիւր զվաստակ թափեաց.

ի նանիւր եղին նորա ճիգն և ջան,
զի հանդէպ նորա կայր գոռ ախոյեան:
Սինչ ինքն աստ և անդ գհօւր լուցանէր՝
հեղաօս Վտակ զայն շիջուցանէր.
մինչ ինքն զցանց իւր պատրաստէր զընտիրն
որսալ՝ շնորհիւ Տեառն չքանայր պատիրն:
Ըյն և ս նմա ոմանք թաքթաքուր
կացին արբանեակ արծարծել զայն հօւր,
ուսկն և բունկն զբանս խօսեցան զանխուր՝
զորոգայթ կազմել զանպարտն ընկենուլ:
Ըյն աւազունք յայնմ առարկայի
թեկն և զօրաւիգ կացին խրոխտալի.
զիւրն աշխարհ սիրէ . . . այլ էն բարձր առնէ
զհեղ և խոնարհս, որոց յոյս Տէր է:
Սինչ այնպէս նոցա խորհուրդք նանրացան
և զերծաւ Տերամբ որսն այն պատուական,
ոյր ականատես Այսոցն այն գուպար՝
երկնաճեմ ելիցն եղին թեապար:
Կատաղութեան բոց և հրդեհ ցաման
ջեռաւ բորբոքմամբ բեղիար յիշխան,
որ յոյժ զայրագին՝ դառն և կարեւիէր
զիւր զՍադայէլ ընկեր գորովէր:
Պարսէր նմա բան « դու թոյլ անարի,
հեղդ և անկաճ ես վեհիցն յակըմբի,
շինել զճուղակ գտանել հօսար՝
որսալ զմարդիկ տակաւին տկար:
Ոչ դու կռեցեր ընդ իս զպայման
դղրդել թնդմամբ և բիւր առնել զեան
ի սահմանին՝ որ քեղ անկաւ վիճակ,
ուր յեղց պարազայք կային օժանդակ:
Յոյց զինչ արգամիս արարեր ջանիւք,
զի՞ խարդաւանեալ օճառոտ հարիւք,
զի՞ կալար մեզ որս, ուր քո ճառատանք,
թռեալ որսն ընտիր, աւանդ, անվտանգ:

Պանծալ մեծաբան՝ պոռոտ բարբառել
 ջեն շահ, այլ արդիւնս 'ի գործոց քաղել-
 օ՛շ թէ լինէի ես քո փոխանակ՝
 Թերևս առնէի շահեկան վաստակ , :
 Այդպէս զիւրն ընկեր դառն երգիծանէր ,
 և նա լի ցասմամբ պատասխան յօրէր .
 « Ի՛նչ այդչափ գոռող վիսացեալ 'ի բան՝
 զիս նախատակօ՛ծ առնես չարագան :
 Ի՛մ որ ինչ պարտն էր , որ ինչ էր մարթ՝
 գործեցի անդուլ , լարեցի Թակարդ .
 այլ նա Ա՛յր զգօն՝ ուշիմ՝ մտաւոր ,
 եկաց անպատիր՝ անշեղ՝ անխոտոր :
 Կարէի միթէ զԱ՛յրն 'ի խորխորատ
 քարշ ածել բռնի՝ ձգել յորոգայթ ,
 զինչ ապարթանես թէ « Ի՛մ փոխանակ
 լինէիր արդեամբք լինէր քո վաստակ , ,
 Աստի՛ ապա հոյլք արդարոց սրբոց
 զերծեալք 'ի մեղաց յերկնից մտին ծոց ,
 մեր էիր յայնժամ՝ էր կացեր անգործ ,
 որսացեր զոք յայնց սէ՛ղք և բազմափորձ ,
 Այդ էր 'ի նոսա կապ ջեռեալն և վէ՛ճ ,
 չեք խաղաղութիւն չար հոգւոցն ընդ մէջ
 այլ դեք ընդ միմեանս են միշտ հակառակ ,
 սակայն 'ի կորուստ մարդկան՝ օ՛ժանդակ :

Մինչ հրեշտակն իւրոյ բանիցն ետ վախճան ,
 հարցմանց մտերմին տուեալ պատասխան՝
 տիրեաց վայրիկ ինչ լռութիւն խորին
 և 'ի վարանումն ընկլուզաւ հոգին :
 Աէր մտառու զվէպ հրեշտակին ,
 և 'ի նոյն յառեալ զուշ իւր գլխովին
 յիշէր զինչ կրէր , մինչ էրն 'ի մարմնի ,
 յուզմունք ծփական տագնապ 'ի սրտի :
 Մերթ ընդ մերթ կրից ջեռնուլ և տապումն ,
 մերթ տատամսութիւն , մերթ սրտի լքումն ,
 երբեմն հառաչմունք 'ի խորոց սրտէ .
 (որ դեռ քերթողիս զսիրտ խոր ճիլէ) :
 Սուզմունքն յանդաճմունս 'ի մարդկան կենցաղ
 թէ հոգ քանի՛օն աղէտիւք ճապաղ ,
 կան շրջապատեալ հեռ՝ նախանձ՝ և սխ ,
 և իրչափ վտանդ յանձնիւր քայլափոխ :
 Թէ ընդէր բարեոյ վարձ և փոխարէն
 ընձեռին չարիք ապերախտորէն ,
 և զգուիչ սիրոյն հայրական խնամոց՝
 կռի դարձն ապտակ և պարսաւք 'ի ծոց :
 Ի բանից Զուարթնոյն՝ խելամուտ քաջիկ
 եղև , թէ իրչափ են չարաբաստիկ
 մարդիկ , որք ունեն անդ հանապազօր ,
 ոսոխ ճգնաջան՝ ախոյեան հզօր :
 Ար զիւր միշտ լարէ զցանց և Թակարդ ,
 և նիւթէ անդուլ զխայծ և մակարդ ,
 զոմն այսպէս և զոմն այնպէս զազգ մարդկան
 տոռամբք կաշկանդեալ մղէ 'ի գեհեան :

Խնդայր զի զերծաւ յ'աղետից վայրէն,
 զերծ 'ի վշտածուփ արեաց համօրէն,
 խնդայր զի ոչ այլ քինու երկպառակ
 լէր զնախճիրս, յոյզ և զաղաղակ:
 Սոսն այն անմուռնչ փառս վերառաքէր
 առ փրկիչն օրհնեալ, և գոհաբանէր,
 Տէր՝ լոյսդ անքննին ինքնաբուն բարի,
 կամին և գործք քո՝ իմաստութեամբ լի:
 Փրկես զխոնարհս յԱռիւծոց ժանեաց,
 և զայր միամօր 'ի նետից զաղտնեաց,
 բարձր առնես յերկրէ զայր աղբատ հոգւով,
 և զբեռնաւորս հանգուցիչ զթով:
 Երգել օրհնելոյ զերդ փառատրական,
 որպէս է ըմբոն՝ չեմ ես բաւական, :
 Որչափ վերհամբարձ զուշն ունէր յԱտուած,
 անմահ զմայլմանց յորդ զգայր զեղուած:
 Եւ մինչ ինքեան միշտ տարփալին զվան,
 (զոր անձնանուէր տեղմամբ բազմադան
 սիրէր և տքնէր յորդել նորա շուք
 զամս երկոտասան յարատե ջանիւք):
 Յիշէր, խըտէր կիրք թախծողական,
 (այլ իբր 'ի մարմնի չէր ընկճողական),
 յիշէր զի վարդն այն վսեմ և քնքուշ
 զիւրե շրջապատ ունի դժնիկ փուշ:
 (Որչափ խրթնացեալ յիւր զարդուց պայծառ,
 իբրե հարսն այրի հեծէր նա անփառ,
 մինչ ինքն ստանձնեալ զպարտ հովուական՝
 հաս անդ և ձեռն արկ խնամատ տեսչութեան):
 Յիշէր թէ ցոր վայր մնայր մենական
 յետ 'ի նմանէ իւրոյ անջատման,

 Օայնոսիկ համայն յիշմամբ անդաճէր,
 և կարեկցութեան 'ի գութ սուզանէր:

Այլ կիրքն այնօքիկ զաղտ և առանձին՝
 'ի հոգւոջն 'ի խոր յուշիկ ծփային:
 Օաչս իւր հոգեղէն հեռատես և սուր՝
 'ի տես միւսանգամ սուրբ Տաճարին իւր
 առ սահման երկրի ձգէր և յածէր,
 ընդ վերթեալն ուղ զէտակն իւր ունէր:
 Օուարթուն բարի նորա պահապան
 զաչս ունէր առ նա յեռեալ զննական,
 զգայր զինչ 'ի նա խոկմունք հոլովին,
 զի ընտել ծանօթ էր շարժմանց նորին:
 Սոսն այն առ նա զայս բարբառ արձակեաց,
 «Ո՞ր խոկմունք, ասա, զուշ քո պարփակեաց,
 ո՞յր կաս 'ի խնդիր, ընդէր մտախոհ,
 նիշք տեսլանդ յայտնեն զաղտ զկիրքս քո»:
 Եւ ալնաճաբար զայս ետ պատասխան,
 «վէպ զոր ճառեցեր զԱսոց շարութեան՝
 զուշ իմ գրաւեաց յիշել զայն զըմբող՝
 զոր ունեն մարդիկ յերկրաւոր կենցաղ:
 Եթա դիւրագայթ 'ի մեղս հակամէտ՝
 զոռ ունեն զոսոխ առիւծոյ հանդէտ,
 որ գոչէ՝ շրջի 'ի խնդիր որոյ,
 ընտիրքն են նորա խորտիկ որկորոյ:
 Յիշեցի թէ յիս որչափ տեղացին
 տարափք և հրապոյրք անհաշտ զազանին,
 յորոց զերծ լինել՝ նորհ է Ատուծոյ,
 և պահպանութիւն հրեշտակիդ բարոյ:
 Սոսն այն խնդառատ զփրկիչն օրհնեմ,
 ո՞յր անբաւ խնամոց յաւէտ ճանաչեմ
 զիս երախտապարտ այժմ և յաւիտեան,
 թէպէտ փառս երգել նմա չեմ արժան:
 Եւ մինչ զփրկչեանն յիշեմ՝ զՏաճար՝
 ում ծառայեցի յար սիրայօժար.
 գութ յիս զեղանին, զգամ տրտմութիւն,
 խիթամ թէ շքոյն լեցի խրթնութիւն:

Չիք օղուտ և շահ խոկալ զայդպիսեաց,
 կամք է Աստուծոյ. (Զուարթունն ասաց),
 վասն ամենայնի Տէր է տնօրէն,
 նա տիեզերաց տայ կարգ համօրէն:
 Թէ ոչ Տէր շինէ զտուն կամ քաղաք՝
 չինօղքն 'ի նանիր առնեն զվաստակ,
 և թէ կամիցի՝ յարուցանէ Տէր
 'ի քարանց անտի զմարդ բարեսէր:
 Իւրաքանչիւր թող զիւր պարտ պաշտաման,
 գործեսցէ անվրէպ առանց թերութեան,
 զի տնտեսութեան պահանջի համար
 անձնիւր ըստ գործոց և սահմանաբար:
 Արպէս է յերկրի՝ չիք այնպէս յերկին,
 զի մերթ ընդ վատաց՝ բարիք շփոթին,
 զի անդ առ աչօք լինի դատաստան,
 աստ գործք որոշին ըստ բուն յատկութեան:
 Երկրի բարեկրօնք են հէք նպատակ,
 զբարտող նետից, չաք լեզուաց ծանակ.
 որ յամբ ընթանայ՝ ծոյլ է, պարտաւեն,
 և զարագտն այր՝ խելագար կոչին:
 Թողցուք մեռելոցն զմեռեալս թաղել,
 և մեք փութացուք զմեր պարտս յանգել.
 Զի տիեզերաց գործք և կարգ լին
 վարին Աստուծոյ կամօքն և բանիւ, : :
 Միւսն ասաց հրեշտակ՝ թեկոցուք աստէն
 և հատցուք զոհս ժամանել առ էն,
 զի ես պարտագերծ յիմոյ պաշտօնէ
 եղէց, և հոգիդ զվարձս իւր առցէ, : :
 Ինչ նոյն պարզեցին հոգեղէն զթև
 և սլանային արադ և թեթև.
 մինչ հասին յերկրորդ երկնի 'ի սահման՝
 ուր մատաղ մանկանց հոգւոցն էր կայան:
 Ինչ յաջ կոյս կային հոգւոցն այն երամ՝
 որք անմեղ 'ի տիս լեալ վաղաթառամ՝

Թօնեցան որպէս կոկոնք 'ի ծղոտ,
 և զերջանկութիւն զտին մօտ 'ի մօտ:
 Բամ պնակազարդ և լուսապայծառ,
 'ի փառն և 'ի շուք յաւէտ գերափառ,
 կայր պարագլուխ և նախամեծար
 'ի մշջ անմեղաց հոգւոցն այն 'ի պար:
 Ինչ այնօքիկ՝ որք շերովքէի
 երկնզուտ՝ անգութ հրամանաւ դժնի՝
 հատու և ծախիչ քանասար զօրաց
 զոհեցան սրով՝ 'ի գիրկս իւրեանց մարց:
 Սան անուան փրկչին եղեն ողջակէզ,
 ծնողացն 'ի լանջ մորմօքմանց զէզ
 թողին և թռեան, և վարձ երկնաւոր
 փոխանակ միոյն՝ կալան բիւրաւոր:
 Յահեալն անդ կային հոգիք այնպիսեաց
 որք 'ի կեանս իւրեանց զբաժակ մեղաց
 քամեցին ցյազ, և մերձ առ մահուն՝
 դարձան յապաշաւ, 'ի զեղջ, 'ի լալիւն:
 Այց դթառատ Տէրն եթող զպարտիս
 լուեալ զնոցա հեծութեան լալիս,
 և շորհօք անհաս մարդասիրութեան
 քաւութեան արար զնոսա արժան:
 Ինչ ոչ յամեցան ոչ դադար առին,
 այլ անցին արազ առ երրորդն երկին.
 ուր և վաղահաս թևօքն երկնաթռիչ
 հասին. սխրալէ էր վայրն հանգուցիչ:
 Աւրոյն ծթեանք հոգւոց արդարոց
 յաճախ կային անդ ըստ անձնիւր գործոց,
 Աստուածասիրաց և առաքինեաց,
 խորշելոցն յաւէտ 'ի հաղբից մեղաց:
 Արք Ստուածեղէն օրէնս և հրաման
 Առաջնորդ ինքեանց և շաւիղ կալան,
 և ընդ այն ուղի անշեղ անխոտոր
 ընթացան վարուք 'ի կեանս աղցաւոր:

Ըստ որ Էս յերկրի տարբեր և պէսպէս
 են գործք արդարոց, և կայանք նոյնպէս
 էին անդ ուրոյնք և զատ անճատեալ,
 յանձնիւրն 'ի նոսին հոգիք ղետեղեալ:
 Արպէս ոք յերկին 'ի ջինջ 'ի պահու
 աստեղացն 'ի բոյլ զնւր բիբ լուսատու
 յառեալ զննեսցէ՝ տեսանէ պայծառ
 քան սաստեղս աստեղք 'ի փայլ և 'ի վառ:
 Յայն բարեծաւալ երջանկագումար
 'ի սահման երկնի երջանկաց դադար
 խիտ և բազմահոծ զօրէն աստեղաց
 կային տարորոշ ըստ անձնիւր կարգաց:
 Ըողային 'ի փառս 'ի զարդ անման,
 (զորոց երգել՝ կար ոչ բաւէ մարդկան),
 այլ մի քան զմիւս շքեղապայծառ
 աստեղաց գունակ էին բարեփառ:
 Ի նոսա յաւէտ փայլուն ճաճանչեղ
 պերճ կայան մի կայր գերադանց 'ի գեղ,
 ուր կային հոգիք փառօք պսակիչ,
 որք մեծարեցին զսէր քան զայլ ինչ:
 Արք 'ի կեանս իւրեանց խորշեցան իսւառ
 'ի վանել զսէր, իղձ նախանձաւառ
 ոչ կալան քինու գրդոնցուցիչ,
 լինել սերմնացան և երկպառակիչ՝
 Սիրոյն պաշտօնեայք սիրոյն արծարծողք
 գերադանց բարեաց լինին վայելողք,
 (իսկ արմատախիլ որք առնեն զսէր՝
 կրեն 'ի գեհեան պատիժ կարեվէր):
 Զուեցան անդէն 'ի չորրորդ երկին,
 ում 'ի հուպ մատչել լուան գերկնային
 զձայն նուագաց երգոց օրհնութեան
 աւաչ գեղգեղմամբ քաղցր և հրաշագան:
 Հոգին զմայլեալ՝ մտադիւր լսէր,
 այն անուշութիւն ուշն իւր ելանէր:

ապա 'ի գիտել՝ ղինչ է այն կամ ուր,
 պահապան Զուարթնոյն հարցումն ուղղեաց զիւր:
 Ըն ինչ, ծանօ Տէր, այն դաշնակաւոր
 լինին մեղեդիք և երգ հոգեւոր,
 ուր է անդ կամ ոյք ղետեղին յայն վայր, :
 Ում պատասխանի ետ սիրողաբար:
 « Երկինք է և անդ՝ չորրորդ ըստ կարգի,
 օթևանք սրբոց երանութեամբ լի,
 ուր հանգչին հոգիք սուրբ շայրապետաց,
 և անձնանուէր հօտեսէր շովուաց:
 Ընդ և սերովբէք հոգիք ժիրաժիր,
 չորրորդ ըստ կարգի Զուարթնոց լուսալիր,
 են ընդ երանեալ հոգւոցն յարկակից
 յերգ փառատրական նոցին ձայնակից:
 Ընդ և միանձանց և ճգնաւորաց
 ունեն զատ կայան հոգիք սրբակեաց,
 որք զմահ մարմնոյ մեռան յաշխարհի,
 և հոգւով պանդուխտք կացին յայն վայրի:
 Գեղգեղն ուշաբարձ անուշիկն երգոց՝
 տօնախմբական Զուարթնոց և հոգւոց
 է կացուրդ, պարուք բերկրանօք ղեղուն
 'ի պատիւ ճննդեան անմահ օծելոյն:
 Սահմանեալ է կարգ կատարման տօնին
 քառեակ աւուր կից յանձնիւր 'ի յերկին,
 (ատտ աւուրք չափին ոչ արփւոյն կառօք՝
 այլ ուրոյն տօնիւք և որիչ երգօք:
 Օ՛ի որպէս շոգւոյն աղբմամբ եղին շարք
 յեկեղեցւոջ սուրբ ցանկորդ տօնակարգ՝
 նոյնպէս 'ի յերկնի յաւէտ կատարին
 երգ և մեղեդիք ըստ տօնից կարգին:
 Յորում զբաղին երջանկաց գուպար
 անտաղտուկ՝ անխոնջ և սիրայօժար,) :
 Ընդ բանին աւարտ անդ ժամանեցան,
 ուր հոգին ետես հանդէս հրաշաղան:

Պարք հոգևոց սրբոց լուսաղգեստ զարդուք
պսակ 'ի գլուխ պերճ շքեղաշուք,
(տարազն էր եօթնեակ զարդուց պսակաց
որոշմամբ վարձուց ըստ ուրոյն կարգաց):

Բարձեալ գերկնաւոր զվին զքնար՝
համաձայն նոցին բաղկէին զլար,
բարէ ոգեշարժ քանի՛օն ձայնեղ,
ոյց զեարդ յարմար երգոցն էր գեղգեղ:

Երկու բիւրք էին յայն 'ի պարունակ
բոլորեալք 'ի կարգ դասադաս եօթնեակ,
որք զայս երգէին հոգեռանդն առ Տէր՝
էին անեղի մշտավառ 'ի սէր:

«Օրհնեալ որ բնակիս յԱթոռ բարձրութեան,
և օրհնեալ են փառք քոյին մեծութեան,
Դու միայն ես Տէր անեղ Արարիչ՝
ողորմած՝ զթած՝ ներող և քաւիչ:

Օրհնեալ ծոցածին Որդի չօր և բան,
մարդասէր փրկիչ հէզ ազգի մարդկան,
զթութիւն անձառ, զմահ յանձն առեր,
յայտոցն 'ի ժանեաց զմարդ փրկեցեր:

Օրհնեալ Հոգիդ սուրբ՝ ծաւալող շնորհաց,
տկարաց նպաստ, լուսատու մտաց.
Քե հզօրացեալ քաջացան նկունք,
և անուս տգէտք եղին բանիբունք:

Սուրբ երրորդութիւն օրհնեալ յաւիտեան,
էից եղելոց Տէր միահեծան,
զերազանց բարի, լոյս ինքնածաւալ,
'ի փառաց 'ի փառս յար բարեբանեալ:

Չերով մարդասէր շնորհօք զթութեան,
անկաւ Արուսեակն աշխարհի իշխան,
փշրեցան նորա բանտի կուռ նգունք,
եղին 'ի նանիր մարդակուլ ճգունք:

Չերով ողորմած շնորհիւ մեք ահա
զերծ 'ի գեհնէ՛ յայս վայր գերակայ

կամք և վայելմք զուխս երանութեան,
երկոցն առօրեայ տրիտուր անվախձան:

Եւ զի տակաւին յերկրի եղբարք մեր
փորձին 'ի դիւէ և տանջին յերեր.
և շատք 'ի նոցունց լինին կերակուր
յորկոր գազանին և ճարակ 'ի հուր:

Գութ անձ, աղաչեմք, փրկել զնոսին,
զի մի պարծեսցի գոռոզ թշնամին.
շող մի 'ի նոսա ծագեա՛ զշնորհաց,
որով հալեցին սառնադէզք մեղաց:

Բում եկեղեցւոյ պանդուխտ դեռ յերկրի
զխաղաղութիւն շնորհեա՛ ցանկալի,
բարձ զփոռեկման և զազգաց պայքար,
միացո՛ յօգիւ 'ի մի սիրաբար:

Օ՛ի զհաճոյս քո ծանիցեն մարդիկ,
և լիցին միայն կուռ քաջամարտիկ
յաղթել գիւական հաղբից պատրանաց,
կալ հաշտ և Գամբոյր միշտ ընդ իրերաց:

Որով թշնամին լիցի գլխագար,
և հաւատացեալք կենացն զվճար
յաղթանակաբար արացեն, և աստ
դիմեսցեն, վարձուք դուլ երջանկաբաստ:

Օրհնեալ Միածին չօր՝ Որդի և Բան,
'ի շնորհ մարդասէր տօնի քո ճննդեան,
լուր զմեր աղերս, անձ զայն 'ի կատար.
Քեզ փառք և պատիւ տացուք անդադար:

Նոցա ձայնակից Սրովբէք լինէին,
և զայս պողատանս ուրոյն առնէին,
«Աստուած բարեբուն Դու զմարդ ստեղծեր,
ողորմեա՛ նոցա, մի կորուսաներ:»

Թաղէի հոգին տեսանէր զայն բամ,
այլ յորիչ վայրի ոչ խուռն յայն երամ,
լէր զնոցա զհայցուած և բան,
և կայր ընկղմեալ 'ի խորս հիացման:

որպէս շինական 'ի վսեմ պալատ
մտցէ արքունեաց փողփողուն 'ի զարդ,
զարմանք կալնու զինքն, և մեծ ահիաց
զննէ ակնապիշ զարդուցն զգեղուած :

Ընպէս և հոգին (որ պերճ զպարան
տեսեալ էր յերկրի վեհ Այսերութեան)
անդ սքանչանայր, զի փառք աշխարհի
ստուերք են՝ երկնից փառացն առաջի :

Տեսանէր զի անդ տարորշ ազգաց
կային բամբ հոգւոց բարեջան հովուաց,
ոչ մինն 'ի միւսոյ խտրէր կամ խորշէր,
և ոչ ոք զընկերն իւր երգիծանէր :

Այր երանաւոր . ուր սէր միութեան
սերտ յօղիւ կապեալ՝ կայ թարց վրդովման,
ուր շիք նախանձու խլերտն և հրապոյր,
ոչ դաւ՝ ոչ դիմակ՝ ոչ կեղծեաց սնդոյր :

Խուճք մի ետես զատ յայն 'ի կացուրդին,
որք 'ի փառս յաւէտ գերադանց էին,
հարց զնոցանէ, և ծանոյց հրեշտակ
թէ նոքա էին սրբոց զումարտակ :

Թարգմանչաց և շարց Արամեան ազգի
տքնաջան վեհից հոգիք լուսարփի,
որք եկեղեցւոյ անձնադիր մշակ
եղին, և կալան զառաջին պսակ :

Ետես զհոգի Աեհին Ներսիսի
իւրոյ հոգւոր դաստիարակի,
ծանեաւ անվրէպ զի ահարկութեան
նիշք 'ի նա կային, նաև յետ մահուան :

Որ յ'իւր ձեռնասուն հոգին՝ հայեցուած
արկանէր գթով խանգաղատանաց,
այլ գու խօսակից՝ չէր յայնթամ օրէն,
զի չև էր հոգին ժամանեալ առ էն :

Ետես եփրեմայ հեզոյն զհոգի,
էր քաղցրահամբոյր . որպէս և յերկրի,

և զգրիգորի բարեկրօն արհւոյն,
որ դաստիարակ իւր էր բարեմոյն :

Տեսանէր և զիւր ոմանց ծանօթից
հարց հոգւորաց հոգիս բերկրալից,
այլ բաղմաց հոգիք անդ չերևէին՝
որոց խուզարկու աչք իւր լինէին :

Ըլ նորա երոյժ հրեշտակն զվարան,
վասն այնքը հարցման տուեալ պատասխան,
« էն 'ի մարդկանէ բազումք կոչեցեալ,
այլ 'ի նոցանէ սակաւք են ընտրեալ » :

Չուեցան անդէն յերկին հինգերորդ,
յուղոջն էր հոգւոյն հրեշտակն առաջնորդ,
ուր ոչ անագան ժամանեալ հասին,
որք արագ արագ 'ի վեր թռէին :

Ընդ էր օթեան վսեմ հրաշագեղ,
գերազանց փառք լի և յորդազեղ,
ուր մարտիրոսաց և նահատակաց
հանգչէին հոգիք պսակազգեցաց :

Որք զարիւն իւրեանց հեղին վասն անուան
Յիսուսի Փրկչին, և առին վախճան .
որք առ ոտն հարին սէգ բռնաւորաց
զսաստ՝ զպատիժ՝ զհար դիւաց :

Կորուսին զանձինս անդ վասն Աստուծոյ,
զոր գտին յերկինս լեալ որդիք լուսոյ,
զաղցաւորն ետուն՝ առին զերկնաւոր,
ուղերձեալ զմին՝ գտին բիւրաւոր :

Ընդ իւրաքանչիւր պսակ պատուական
ունէին չքնաղ գեր քան ծիածան,
գոհարք 'ի նոսա ըստ անձնիւր գործոց՝
յեռեալ փայլէին գեր քան շող արփուոյ :

Իւրաքանչիւրոց գիր կայ 'ի վերայ,
որ յայտնէր զանուն և զգործ նոցա,
տառքն 'ի մարդկանէ անընթեռնելի,
զի են մակազրեալ ձեռքն Անեղի :

Օայն հրեշտակք միայն ուսեալք 'ի Տեառնէ ,
վերծանել կարեն , որոց և պարտք է
ուենիլ 'ի յարգանս սրբոց զայն գուպար ,
ըստ հրամանի Տեառն զուարթնոց հաւասար :
Յուրոյն լուսեղէն յօթեան փառաց
երամ մի հոգւոց կային լուսազդեաց ,
որոց պատմուճան էր ջինջ սպիտակ
և ծիրանափառ երկնային պսակ :
Հարց զնոցանէ և լուաւ հոգին ,
Թէ նահատակաց ջոկ նոքա էին ,
որք վասն հաւատոյ քաջութեամբ մարտեան ,
և յԱւարայրի 'ի դաշտին անկան :
Որք 'ի սիրտ վառեալ սիրոյ Տեառն զհուր՝
կոխեցին զերկիւղն և զաչս առաթուր .
և որպէս շնութիք յամպոց արձակեալք՝
'ի պարսից ճամբար խոյացան շեշտեալք :
Բազմաց անդ եղին արհաւիրք և ահ ,
և բազուկ քաջաց Թշնամեացն ետ մահ .
այլ ինքեանք երկնի փառացն անձկալառ՝
անդ նահատակեալ անկան քաջափառ :
« Օնա՛ որ փայլի 'ի դոյն սրբոց պար
իբր 'ի մէջ աստեղց վառ արփիաբար ,
տեսանէս հոգիդ , (հրեշտակն հարցանէր)
մեծին Արդանայ հոգին է , ասէր :
« Եւ որ դիմադրաւ Փրկչին վասն անուան
ազդին և կրօնի գոռ եկաց պաշտպան՝
աստ 'ի տրիտուր զվարձ ընկալաւ
վսեմ և շքեղ , որում չիք զրաւ :
« Գեղեցիկ է ճառ կատարման նոցին ,
զի ուր էր նախճիր և գոռմունք մարտին՝
անդ 'ի շուրջ գային դունդ Սաղայէլեան՝
Պարսիցն զհոգիս վարել 'ի գեհեան ,
Որոց 'ի մարմնոց զկապ քակէին
սուր հայկեանց բազկացն և կորով ուժգին :

մարմնք զվերջին տային հրունչեւն ,
հոգիք լինէին դիւաց որս նկուս :
« Իրաւորքն յայն դաշտ յարեան ճապաղիս
գոփէին զհող , Թաւալ 'ի փոշիս ,
և հոգւոց նոցին ազկաղկ գումարտակ
'ի ճիրանս այսոց լինէին ծանակ :
« Եւ յորժամ եհաս ժամըն սահմանեալ
մարտիրոսութեան վկայիցն օրհնեալ՝
յերկնից անդ երամ զուարթնոց իջին
զհոգիս նոցա փոխադրել յերկին :
« Սրբոցն այնոցիկ հոգիք արձակեալ
մի զհետ միոյ յերկնս ուղ հատեալ .
Զուարթնոցն առնութեր ուր և ես կայի՝
զային կազմէին պար շուրջանակի .
Հաս անդ Սատանայ , տազնայ և զայրոյթ
կայեալ էր նորա զմակերևոյթ .
« Իւր խուսեալ ճեպէք 'ի փախուստ , ասէր
նչ դուք ուրացայք զՓրկչն և Տէր , :
« Ինչ բանին ջեռաւ հոգին Արդանայ՝
որ վեհանձնաբար զայս առ Սատանայ
արձակեաց բարբառ « Պետ տարտարոսին ,
ընդ վայր տազնայդ է , չիք քո աստ բաժին :
« Եղաք մեք , գիտեմք , գոյ վեհ դատաւոր ,
որ տայ ըստ գործոց վարձ արժանաւոր .
յոյս մեր անյողդսողդ առ նա եղեալ կայ՝
Թէ անյիշաւար քաւիչ Տէր է նա :
« Թէ ըստ մեր մեղաց պատուհաս վճռէ՝
եղձկ մեզ , չեմք զերծ 'ի քումմէ զահէ .
Իսկ ողորմութեամբ Թէ ածէ մեզ գութ՝
« ոչ բաւեն քո հաղթք մեզ գոլ խոչ և խութ :
« Որում զայս կրկնեաց խրրոխտն այն իշխան
« ոչ Թողից զձեզ՝ մինչ զամենեսեան
« ոչ մանրախուզիւ զննեցից ուշով
Թէ գին յոք 'ի ձէնջ դրոշմեալք իմ կնքով :

Ընդ նոյն վկայիցն յերամ մուտ արար ,
 մի ըստ միոջէ զննէր ուշմաբար ,
 յորըս իւր կնքոյն սպեաց փոխանակ՝
 զպսակս եզիտ փառաց երկնառաք :
 Թոյլ ետուն նմա ջուարթունք երկնային
 նոցա մանրախոյզ գոլ հետաքննին ,
 զի այսն և ծանակ եղիցի յաւէտ ,
 որպէս մտախաբ՝ և պանդոյր ոք դէտ :
 Ըրդարեւ այնպէս ջերանէր ՚ի բոց
 մոլեգին ցասման , և կրէր ՚ի ծոց
 զնախանձ և զօխ , ոյց զսաստկութիւն
 փոխ առ փոխն յայտնէր ժահադիմութիւն :
 Մինչ զայն խուզարկու գործն հան ՚ի կատար՝
 անօգնու վաստակ , չգննք Թարմատար ,
 գլխակոր եղեալ հարաւ զամօթի ,
 ժայթքէր զփրփուր կրից կատաղի :
 Ըյսն արար զնա քանջ արին վարդան
 « գտէր ՚ի բոյլ մեր կնքոյդ զնշան ,
 աւաղ . վատնեցեր ժամ և ճիգն անբաւ
 արդ զինչ ՚ի դարձիդ տանես զհամբաւ :
 Սչ լաւ էր մնալ զօրուն ՚ի ճամբար ,
 ուր քեզ շայկածինք ձօնէին զաւար ,
 Պարսիցն զհոգիս անկերոցն յայն խաղմ ,
 քան աստ դեզերիլ անշուք և անկաղմ :
 Թէպէտ սիգապանծ անմահ ես հոգի ,
 և երեքժանեօք տիրող գեհենի ,
 զմարդ հափափես լափլէզ և պատիր ,
 օ՛չ Թէ ՚ի նոցունց զօգուտ քաղէիր :
 Օի Թէ անկանի՝ կանգնի վերստին
 մարդ , որ լուծանէ զիւր կնճիռ շարին ,
 որպէս կաս ինքնին ականատես դու
 զիհարդ ուրացողք լինին երկնաչու՝
 կալնուլ զտեղիս՝ մերթ ձեր օթեան .
 վա՛շ քո զայն ընդ հրոյ փոխանակութեան , » :

Ջայն ասաց մեծի վարդանայ հոգին ,
 քրքիջ շարժեցաւ հոգւոցն յերամին :
 « Ինն անդ բոհբոհէր՝ մրմռայր ուժգին
 մինչ հոգիքն յերկինս վեր սլանային .
 « մեծ ունի պատիւ և յերկնի վարդան ,
 վարդան փառքն շայոց և շուքն անմահն , » :
 Յուցանէր հրեշտակն անդ հոգիս սրբոց
 զևոնդեանց՝ Ոսկեանց նահատակելոց
 և զչորիփսիմեան զխուժք ընկերաց
 և զայլ վկայիցն ըստ որիչ կարգաց՝
 Երկին վեցերորդ անդէն շուեցան ,
 ուր Առաքելոց սրբոցն է կայան .
 ուր և գերագոյնք ՚ի Մարգարէից՝
 երանաւէտեալ կան միշտ ցնծալից :
 Սան Առաքելոց աթոռք կան եդեալ ,
 աթոռք լուսայեղցք երկնազեղ ՚ի փայլ .
 ոյց աթոռակից էր և ՚ի կարգի
 Տէր Գրիգորիոս վկայն հրաշալի :
 Որ վանեաց հոժեալ զամպս արփիապէս ,
 շեջոց զխաւար արեամբն ուղխապէս ,
 և զհաւատոյ զլոյս զխուժեան
 ծագեալ փայլեցոյց յերկիրն շայաստան :
 Ընդ շէր նա յայնժամ յաթոռն իւր բազմեալ
 այլ յառանձնութեան ՚ի տաճար դիմեալ
 ջերմեռանդագին տղօթէր առ Տէր
 պահել զազգն շայոց միաբան ՚ի սէր :
 « Ի նոսա , հայցէր , երկպառակութեան
 մի ընձիւղեցի դաղձն այգի խոպան .
 մի մախանք և հեռ , մի խէթ և նախանձ ,
 մի կազ և վիճմունք , որք ցեց են կենաց :
 Որք զոսկերս հալեն և ծիւրեն զմարդ ,
 բորբոքեն զուղեղ դիմել կաղմ ՚ի մարտ .
 որք զգօնութեան դեղ տան մոզական
 և փոխեն ՚ի Թոյն զարիւն կենսական :
 « Ինն անդ բոհբոհէր՝ մրմռայր ուժգին
 մինչ հոգիքն յերկինս վեր սլանային .
 « մեծ ունի պատիւ և յերկնի վարդան ,
 վարդան փառքն շայոց և շուքն անմահն , » :

Եւ յայնժամ եղբայր ընդ եղբօր 'ի վէզ
 պայքարին սաստիկ ջեռեալ բուռն և սէգ,
 սուտ զբարտութեամբ դարանեն ծուղակ
 զանմեղն ընեկնուլ, կազմեն ժողովակ:

Եւ ա՛ղ զի նոքօք օրհնալն Հայաստան
 եղև 'ի փառաց կապուտ և խոսկան .
 նոքօք դահն անկաւ աղատք առաթուր,
 քաղաք՝ դեօղք՝ աւանք մասնեցան յապուռ:

Եւ զհնկ զի չառին յաղետից խրատ,
 յայն ազգակործան առթից կալ փարատ .
 ժանտախտ զասակունք ազգին պատուհաս
 ոճրագործ հրացայտք չեղեն միշտ պակաս:

Էէզ արբեցութիւն բաղչին առօրեայ
 բարձրայծն և վէս առնէ զնոսա .
 ըստ մարգարէին գիրացեալ ստուար՝
 անյուշ մոռանան զիւրեանց բարերար:

Ու ամիկն յոխորտայ՝ այր պարծի պանդոյր
 զազգն առաջնորդել 'ի վիճակ անդոյր
 կեղծէ, և զայլ ինչ խոճոճէ 'ի միտ
 փաղտնի խորհրդոց՝ չարեաց գամագիտ:

Էէզ յս սայրասուր հարստեն 'ի սիրտ՝
 որ յօգուտ ազգին թափէ ճգանց քիրտ-
 անգոննին արթուն տեսուչք և հովիւ,
 մինչ զայլոց լինի որս հօտն և ցրիւ:

Սողորեալ ոմանց յարահետն ուղւոյ՝
 չեղին կամապաշտ 'ի խորհուրդս անդոյ .
 յոր էբր 'ի բաւիղ անել թարթափին,
 խորշեալ 'ի լուսոյ 'իմէզ դանդաչին:

Եւ ա՛ղ ոստաքանց կողերց հանգունակ
 լինին գօսացեալ միշտ անփառունակ .
 պատուաստիլ յօտար ո՞ր շահ և զինչ փառք .
 երբ գզուեաց մօրուն զօտարին զաւակ:

Օրառն անշքանայ՝ երեր 'ի հողմոց .
 չեն պակաս յերկրի արկածք հողմակոծ:

քան զղինալառ թշնամին 'իմարտ՝
 ոտոխն ընտանի շատ լլիէ զմարդ:

Եւ յայդպէս մաշեալ կապտին 'ի փառաց
 յիւրածին ցեցոց, վասնեալ յիրերաց
 Ազգ՝ որք վերջտասան ամաց դառն երկամբ
 ծնան 'ի հաւատ. Տէր, քո օգնութեամբ:

Եւ զպաղատանաց իմոց լուր Աստուած,
 ողորմեա՛ ազգի Հայոց և դութ անձ .
 դարձ՝ հայեանց յերկնից յայգին բանաւոր .
 զօր տնկեաց Աջ քո վեհ և երկնաւոր:

Սարման տար նմա կալ յակաստանի,
 ցանկապատն անբիծ մի խախուտ լեցի .
 մի օտարք 'ի նա անցորդք ռահական
 մտեալ ուռճալի պտղոց տացեն զեան:

Սի յայն հերձուածոց հողմ և փոթորիկ
 շնչեսցին կորզել ծառոցն զճաղիկ,
 շնորհացն իջցէ անդ շիթ ցօղած որան,
 անդ մի սառն և մի տապ խամրողական:

Թափեալ թախանձեմ, Աստուած իմ և Տէր,
 լուր ձայնիս՝ զՀայս միացո՛ 'ի սէր,
 կացցեն միաբան . զի իւրեանց բարեք
 կախին յայնմանէ, և յոյս յայլուստ չեք:

Իսկ թէ ընդաբոյս կան անմիաբան
 Տէր ամենազօր, տար այնլմ դարման,
 գէթ գոռողութեան կիրք և յարձակմունք
 հեղացցին, մի շատ լեցին տապալմունք:

Եւ սէր զայն հայցուած մեծ լուսաւորչին
 անդ հասեալ արհւոյն թաղէի հոգին .
 և զի հայախօս բանիցն էր հիւսուած՝
 հոգեռանդն 'ի նա մուտ կալաւ զեղուած:

Փոռթացաւ դիմել 'ի համբոյր վառուն,
 այլ արգել հրեշտակն զթափըն նորուն .
 զի չև ժամանեալ առ գերագոյն էն՝
 դիմել կամ փարիւլ ընդ ոք չէր օրէն:

Դ՛նաչէս արժարժուն 'ի խանդն և յեռանդ
չուեցան անդէն ոչ ևս յամեալ անդ ,
յերկին եօթներորդ դէմ՝ եղին դնալ ,
ուր ոչ միտք մարդոյ կարէ մերձենալ :

Բ՛նդ ըստ հրեշտակի յ'ուղւոջ վիպելոյն ,
գերազանց շնորհօք սուրբ և գերագոյն
Սրբուհւոյ կուսին կայ հոգին միայն
ամենամեծար փառօք վերնական :

Օ՞րորով պար առնուն դասք Ջինորութեանց ,
Պետութեանց երկնից և իշխանութեանց .
որք վերապատուեալ՝ ձօնեն անդանոր
զակնածու յարդանս Անեղ բանին Մօր :

Բ՛նդէն ութերորդ երկինք բարձրագոյն .
ուր դատողական Աթոռ Տէրունոյն ,
անդ իշխանաբար դատէ Տէր Յիսուս ,
տայ վարձ ըստ գործոց , զսաստ և խրախոյս :

Բ՛տեան ասաւոր . ուր համայն դաղանիք
հոլանին իսպառ , անդ թաքնութիւն չիք .
Գատողն անաչառ՝ Գատաստանն արդար՝
վարձն և պատուհաս մշտնջենաբար :

Չիք ակնառութիւն , ոչ միջնորդ ընկեր ,
այլ արդարութեան բոցեղէն սուսեր ,
" եկայք ,, և " երթայք ,, վճռին անյեղի ,
յորոց անձնիւրոց վիճակ որոշի :

Ի՞րանի հոգւոց՝ որք հրաւիրանին
փառաց 'ի վայելս արժանի լինին .
վայ եղբւրկ անբաւ՝ որք լսեն երթալ
'ի տարտարոսին բով բոցածաւալ :

Մերձեցար Տէր իմ՝ Արհիդ Սրբազան
յայն երանակոչ մտանել Ատեան .
ներեա՛ ինձ մեկնիլ , զի միտս ապիկար
հուպ գալ ոչ իշխէ անմատոյց յայն վայր :

ՎԵՐ ԶԱՐԱՆ .

Միտք հողեղինի 'ի բարձանց խորշեր ,
յայն վեհավայրէ էջ վշտաց յերկիր .
քանզի գերարփի այերն երկնային
զմեղսախորհուրդ կիզէ զմարմին :

Մի՛ շատ գեգերիր յայն ծով անսահման ,
յոր սուզանի միտք արարածական .
էջ ուր տակաւին սահմանեալ է քեզ
կեալ 'ի վիշտ , 'ի ծուփ և յողբս աղեկէզ :

Բ՛ւնդ զինչ յերկրի գիւր և մտիթար ,
կեանք մարդոյ իբրև սեպոտ առապար
պարանէ զմարդ յանկուճն 'ի վտանգ .
խուռն են ինքնածին մեծամեծ փորձանք :

Սրբազան Տէր իմ , քեզ բիւր երանի ,
զի ըստ հայցուածոց և ըստ քում ըղձի
զերծար յաշխարհէ յետ ժուժկալ ց'յագ
քամելոյ մրրոյն զղեղուն բաժակ :

Բ՛յլ յիս հուր վառի , հուր 'ի սիրտ , 'ի ծոց ,
զի յիս Արբութեան գաղտ ճարակի խոց .
աւանդ . հայրենեացս և իմ բարերար
վերացաւ , առ մեզ դարձն է անհասար :

Ի՛ գիւր սփոփիչ սրտիս վշտահար ,
Տէր՝ եղէ ընդ քեզ խուն քերթողաբար
ուղոյդ առհ ընկեր մտօքս անմեկին ,
ես տկար՝ այլ խանդ սիրոյդ էր ուժգին :

Օ՞ր հոլութեանդ զցօղ տուր ինձ 'ի կաղոյր ,
յայս վայր ալեծուփ վարել կեանս անդոյր .
քաւ յինէն ցորչափ յիս կենաց շունչ գոյ՝
զվեհ բարերարդ մոռանալ յուշոյ :



4557

2013

<< Ազգային գրադարան



NL0031680

